— Ինձ այնպէս կ'երեկ թէ խիստ մաքուր Գաղղիարէն կը խօսին, ըստ Տանկլար :

— Որդին կարծեմ Գաղղիոյ հարստային կողմը, Մարսիլիոյ մէջ կամ անոր շրջակաները վարժարանի մը մէջ կրթութիւնը ստացած է : Քիչ մը եռանդուա պիտի դանէք զան :

— Ի՞նչ բանի, հարցուց տիկին Տանկլար :

— Գաղղիացի կանանց համար, տիկին . կ'ուղէ անշուշտ բարիւն կին մ'առնուլ :

— Ի՞նչ աղօր որոշում մ'է ըրեր —, ըստ Տանկլար ուսերը բարձրացընելով :

Տիկին Տանկլար իւր էրկան երեսը նայեցաւ այնպիսի նայուածքով մը, որ ուրիշ որ և է ժամանակ մրրկի մը դուշակութիւնն էր. բայց երկրորդ անդամ լոեց :

— Սեպուհը խիստ ախուր կ'երեկ այսօր, ըստ Մօնթէ-Քիսթօ տիկին Տանկլարին . արդեօք զինքը աէրութեան պաշտօնեայ ընել կ'ուղեն :

— Ոչ, չեմ զիտեր . բայց զիտցածս սա է որ արձէթղթոց խաղը խաղաղով անշուշտ մեծ զումար մը կարսնցուցած է և շղկանք թէ որու հետ կուուի :

— Պ. և տիկին աը Վիլլֆօրը եկան —, պոռաց Պաթիսթէն :

Այս երկու անձերը ներս մտան :

Պ, աը Վիլլֆօր թէ և ինքունքը դսուելու, համար մեծ ջանք մը

կը ընէր , սակայն յայտնի այլայլած էր . Մօնթէ-Քրիսթօ անոր ձեռք  
քը բանած առենը զգաց որ կը դոդար :

— Սառուղի միայն կիները ինքնինքնին զսպելու կերպը դիման — :  
ըստ ինքնիրեն Մօնթէ-Քրիսթօ՝ տիկին Տանկլարի նայելով , որ թա-  
գաւորի զործակալին կը ժառանք և անոր կինը կը համբռ ըէր :

Առաջին ողջոյներէն ետե՛ կոմու զէրթուչիօն տեսաւ , որ մին-  
չե այն ատենը իւր զործոց զրագած բլլալով , հիւրերը դտնուած  
սրահին քավի փոքրիկ դահլիճը կը մտնէր :

Կոմու անոր մօսեցաւ :

— Ի՞նչ կ'ուզես , ու . զէրթուչիօ , ըստ :

— Չեր Ասեմութիւնը հիւրերուն թիւը շըսաւ ինձ :

— Այս , սասոյդ է :

— Քանի՞ հօգւոյ համար սեղան պիտի դրուի :

— Եկաւ , գուն անձամբ համրէ :

— Ամեն մարդ եկած է , տէր իմ :

— Այս — :

զէրթուչիօ կիապաց գոնէն իւր նայուածքը ներս շրջեց :

Մօնթէ-Քրիսթօ ուշադրութեամբ անոր նայեցաւ :

— Ո՞վ Ասուած իմ , պուաց զործակասարը :

— Ի՞նչ կայ , հարցաց կոմու :

— Այն կինը . . . այն կինը . . . :

— Ո՞ր կինը :

— Սա խարտեաշ կինը , որ սպիտակ շրջազգեստ և այնչափ աշ-  
գանանդներ կը կրէ . . . :

— Տիկին Տանկլարը :

— Անոնք չեմ զիտեր . բայց ան է : պարտն , այն կինն է :

— Ո՞ր կինը :

— Պարտէ զին կինը , այն որ յդի էր , և պտրտելով կ'սպանէր  
? . . — :

զէրթուչիօ բերանը բայց , զոյնը նետած և մազերը քստմնած  
մնաց :

— Որո՞ւ կըսպասէր — :

զէրթուչիօ առանց պատասխանելու , մասովը Արթօրը ցուց

ցուց դողյես այն շարժումնել, որով Առքարէթ Պահպօն ցուցոց :  
— Ո՛ հո՞ . . . , մրմիջեց վերջապէս կը տեսնէք :  
— Զո՞լ :  
— Զա՞ն :  
— Թագաւորի դործակալ Պ. աը Վ.իլլֆօրը, անշուշտ կը տեսանեմ :  
— Բայց ես չմեռցոցի՞ զան :  
— Կարծեմ թէ խենթովիւնդ կը բռնէ, սիրելիդ իմ Պ. Պ. թուչիօ :  
— Արդեօք չմեռմո՞ :  
— Կը տեսնես որ մռած չէ . փոխանակ քու հայրենակցացր սովորովեան համեմատ վեցերորդ և եօթներորդ ձախ կուշտին մէջ տեղը զարնելու, աւելի վեր կամ աւելի վար զարկած ես . կառավարովթեան մարդոց հոգին իրենց մարմնոյն հետ դամուած է, և կամ պատմածներուդ մէ կն ալ ճշմարիտ չէ . երեակայութեանդ մէ կ երազը, մատցր մէկ յնորդն է . անշուշտ վրէ ժխնդրութիւնդ աղէկ շմարսելով քնացած պիտի ըլլաս . ստամիքսիդ վրայ ծանրացած պիտի ըլլայ այն, և ցնորք մը ունեցած ես և ոչ որիշ բան : Հանդարտէ ուրեմն և մկան համրել . Պ. և տիկին Վ.իլլֆօր՝ երկու, Պ. և տիկին Տամիլլար՝ չորս, Պ. Շալթօ-Ռիլնօ, Պ. Տըպրէ, Պ. Սորէլ եօթը, Պ. Պարթովովմէօ Գալվալդանթի դնդապետք՝ ովթը :

— Ութը ուրեմն, կրկնեց Պ.իլլթուչիօ :  
— Կեցիր, կեցիր, ո՞րչափ կարտորաս երթալու . ինչ զարմանալի մարդ ես, սեղանակիցներէս մէկը մռոցար : Քիչ մը ձախ կողմը հայէ . . . : Պ. Անտրէա Գալվալդանթին, ուե թիկնոցով երիտասարդը չհամբեցիր, որ Առորիլլոյի նկարը կը դիսէ, աչադարձաւ :  
Այս անգամ Պէրթուչիօ ուղեց ձայն մը հանել, բայց Անգլէա Քրիսթոյի նայուածքը անոր շրմանց վրայ լոեցոց դայն :  
— Պէնէտէթթօ, մրմիջեց դործակատարը հեղձեալ ձայնին, ով աղէտիս :

— Ժամը վեց ու կէս կը զարնէ, Պ. Պ.իլլթուչիօ, բատ կոմալ

բառութեամբ մը . սեղան նստելու . համար հրաման ըրած ժամկէ հասած է , զիսես որ սպասելը չեմ սիրեր — :

Եւ Մօնթէ-Քրիսթօ սրահը մասու , ուր իւր հիրեցը իրեն կ'ըստ պատէին , ինչ ատեն և Պէրթուչիօ պատերուն կոթնելով սեղանատունը վաղեց :

Հինդ վայրկեան ետքը սրահին երկու դռները բացուեցան :

Պէրթուչիօ ներկայացաւ , և Ըանթիյլի Վաթէլի պէս վերջին և զիւցազնախան ջանք մը բնելով , — Աեղանը պատրաստ է — , ըստու :

Մօնթէ-Քրիսթօ իւր թեր տիկին Վիլլֆօրի ներկայացուց :

— Ո . առ Վիլլֆօր , ըստու , կ'աղաշեմ շնորհք ըրէք թերնիդ տիկին Տանկլարի ներկայացունելու — :

Վիլլֆօր հնագանդեցաւ , և ամեն մարդ սեղանատունը անցաւ :



### ԳԼՈՒԽ Դ

### ՃՈ.ՃՐ

Յայսնի էր որ կերակուրի սենեակին անցնելով մի և նոյն զգաց ցումը ամեն սեղանակցաց սիրող կը շարժէր :

Աւրամի կը հարցընելին թէ ինչ զարմանալի աղդեցու թիւն մը դիւրենք ամենքնին այն տանը մէջ միացուցեր էր . սակայն իրենցմէ պամանք որչափ և այս պատահման վրայ զարմացած էին և անհանգիստ կը լլային , սակայն աւելի կը բաղձային հռն չդանուիր :

Այսու ամենայնին կամսին հետ նոր ստացուած յարաբերութիւնները , անոր տարօրինակ և մենացեալ կացութիւնը , և անծանօթու զոգցես առաստելական հարստութիւնը պարագ կը դնէին մարդոց զգուշաւոր ըլլալ , և կանանց օրէնք մը որ իրենց ընդունելու թիւն տուող կին շեղած այն տունը բնառ չմտնեն . բայց սակայն մարդիկի իրենց զգուշութիւնը և կանայք իրենց պատշաճութիւնը զանց ըրեր էին , և հետաքրքրութիւնը իւր անդիմադրելի խթանով զանոնք դրդելով , ամեն բանի յաղթիւր էր :

Գավալլգանթիները անգամ , հայր և որդի , մէկը իւր խատութեան և միւսը իւր անհօգութեան հակառակ՝ զարմանքի մէջ կ'երեւէին թէ ինչպէս այնպիսի մարդու մը տան մէջ , որուն նպատակը չէին կրնար հասկընալ , այնպիսի մարդոց հետ կը զանուէին , զորոնք առաջին անգամ կը տեսնէին :

Տիկին Տանկլար իւր սրտին մէջ շարժում մը զգաց տեսնելով որ ող . Վիլլֆօր Մօնթէ-Քրիսթոյի առաջարկութեան վրայ իրեն կը մօտենար իւր թեր ներկայացնելու , և ող . Վիլլֆօր իւր թիւն վրայ տիկնոջ թեր հանդէիլը զգալով ուկի ակնոյներուն տակ իւր աշաց այլայլութիւնը զգաց :

Այս երկու շարժումներէն մէկն ալ կոմին աշքէն փախած չէր , և այս տեսարանը դիտող մը անձանց այս միաւորութեան մէջ մեծ յարաբերութիւն մը սիրափ տեսնէր :

Պարագաների աջ կողմը տիկին Տանկլար կը դանուէր և ձախ կողմը Մորէլ :

Կոմսը տիկին Վիլլֆօրի և Տանկլարի մէջ տեղը նստած էր :

Սեղանին միւս մասը բռնած էին Տըպրէ երկու Գավալլգանթիներուն մէջ տեղը , և Շաթօ-Ռիլնօ՝ տիկին Վիլլֆօրի և Մորէլի մէջ տեղը :

Ճաշը խիստ փառաւոր պատրաստուած էր : Մօնթէ-Քրիսթօ ջանօցեր էր բարիզն սովորութեան հակառակ ընթացք մը ունենալ , և կերպու

կուրները առելի իւր սեղանակիցներուն հետաքրրութիւնը շարժելու գան թէ անոնց ախորժանաց համեմատ շինուած էին :

Գրեթե Արևելեան խնջոյք մ'էք որ իւր հիւրերուն կ'ընծայէք բայց առելի Արաբացի վհուկներու խնջոյից կը նմանէք :

Աշխարհիս չորս կռոմերէն եւրապիոյ առատութեան եղջւրին մէ ջ անարատ և քաղցրահամթափուած ամեն պատ զները Զինի և Շաբոնի ամաներուն մէ ջ բրդածե կուտուած էին :

Գեղափետուր հաղուագիւտ թռչունները , արծաթ սկանակներու վրայ դրուած զարմանալի ձուկերը , իրենց տեսքովը դինիին համը առելի ախորժելի երեցրնող տարածե սրուակներու մէ ջ լցուած՝ Արշակեռաղողոսի , Փոքր Ասիոյ և Բարեյուաց Գլուխի ամեն տեսակ դինիները՝ Արիկիսսի իւր սեղանակիցաց ըրած հանդէմսներուն մէ կուն ոյէս հետզհետէ սեղանը բերուեցան և այն Բարիզեաններուն առջեւդրուեցան , որոնք աղէկ կը հասկրնային թէ տասը անձի հաշի համար կարելի էր հազար Լուի ոսկի ծախսք ընել այն դաշամբ որ ըստ Ալէսպատրի կերակուրը մարդարանայ ըլլար և ըստ Լօրան տը Մէտիսին՝ ըմուշլիքը հալած ոսկի :

Մօնթէ-Քրիսթօ ամենուն վրայ զարմանք մը նշմարելով՝ ոկսան ծիծաղիլ և բարձր ձայնիւ ծաղրել :

— Պարմաներ և տիկնայք , ըստ , անշուշտ դուք ալ համամիտ էք ինձ , որ մարդս հարստանալով աւելի անօդուար բաներու պէտք ունի : Ո՞ր բանն է որ զմեզ կը հիացընէ , եթէ ոչ այն որ չենք կրնար հասկրնալ . ո՞ր բանը աւելի կ'ու զենք ստանալ . անշուշտ այն որ չենք կարող ձեռք ձղել : Արդ անհասկանալի բաներ տեսնելը , և ստանալը անկարելի եղածները ձեռք ձղելը իմ բոլոր կենացս զբաղմունքն եղած են : Երկու միջոցաւ իմ նպատակիս կը համիմ , ստակով և կամքով : Օրինակի համար՝ մտային հաճոյք մը կատարելու համար ետևէ եղած ժամանակս՝ նոյն յարատեւթիւնը՝ ի գործ կը դնեմ , զոր դուք , Պ. Տանկլար , երկաթուղոյ զիծ մը ստեղծ ձելու , դուք , Պ. Ափլրֆօր , մարդ մը մահուան դատապարտելու , դուք , Պ. Տըպրէ , թագաւորութիւն մը խաղաղընելու , դուք , Պ. Շաթօ-Ռընօ , կնոջ մը հաճելի ըլլալու , և դուք , Մորէլ , մէ կուն հեծնել չլրցած ձին նուածելու համար՝ ի գործ կը դնէք :

Աւանի օրինակի համար, նոյեցէք այս երկու ձուկերը, որոյ մէկը  
Քէթրզպորեկն յիսուն մղոն և միւսը Կարոլիկն հինգ մղոն հեռու  
ծնած են. միթէ դանո՞ք մէկ սեղանի վրայ միացընելը զուարձու-  
թին մը չէ:

— Որո՞նք են այդ երկու ձուկերը, հարցուց Տանկլար:

— Ահաւասիկ Պ. Շախօ-Ռյանո, որ Առւախա բնակած է, մէկին  
անունը սիստի այս ձեզ, որաւասխանեց Մօնթէ-Քրիսթօ, և աչա  
Պ. Գավալզանթի զնդապետը, որ Խաւալայի է, միւսին անունը կրնայ  
տալ:

— Թառափ ըստած ձուկն է այս կարծեմ, ըստ Շախօ-Ռյանո:

— Ճիշդ այն է:

— Աս ալ քարաղիաց ձուկն է, եթէ չեմ սխալիր, ըստ Գա-  
վալզանթի:

— Ճիշդ է. Տիմա, Պ. Տանկլար, հարցուցէք այս երկու պարտա-  
ներուն թէ այս ձուկերը ուր կ'որսացուին:

— Թառափները միայն Աղլիայի մէջ կը դանուին, ըստ Շախօ-  
-Ռյանո:

— Միայն Ֆուզարօ լիճը կը ճանշնամ, ըստ Գավալզանթի, ու-  
րու մէջ այս մեծոթեամբ քարաղիաց ձուկեր դանուին:

— Եւ սատդիո. մէկը Աղլիայէն և միւսը Ֆուզարօ լիճէն եկած  
է:

— Անկարելի է, պոռացին միաձայն ամեն սեղանակիցները:

— Ահա զիս զուարձացընողն ալ այս է, ըստ Մօնթէ-Քրիսթօ,  
ես ալ Կերոնի ողէս անկարելին իւ քնորում, և աչա դուք ալ այս  
միջոցին նոյնայէս կը զուարձանուք. այս պատճառաւ՝ ասոնց միւսը,  
որ իրօք դացէ անուշ ջաւրի ձուկէ կամ կարմրամիւս ձուկէն համեզ-  
շըլլայ, բայց այս միջոցին խիստ ախորժահամ ալիսի երեկի ձեզ.  
զանժնք ստանալը անկարելի կ'երեւէք ձեզ, բայց սակայն յայտնի  
կը տեսնեք որ անկարելի բան չկայ:

— Բայց այս ձուկերը բնու կերպով Բարիդ փոխադրել կարելի  
եղաւ:

— Ո՛չ, խիստ պարզ եղանակաւ. իւրաքանչիւր ձուկը մեծ տա-  
կարի մը մէջ դնելով՝ մէկը գետին եղէ դներովն ու խորերովը պատաշ-

պարուած , միւսը ընին կնիւններովն ու բոյսերովը , և վրան զայ սայլով մը բարիդ բերուեցան . այս կերպավ թառափը տասներկոտ օր և քարաղիսցը ունէ օր ապրեցան , և երկու ին ալ կատարեալ ողջ առողջ էին երբ խոշաբարիս ձեռ քը հասան , որ պարտաւորցաւ մէ կը կաթի մէ և միւսը զինիի մէ չ սպաննել : Զէք հաւատար , զի . Տանկլար :

— Դենէ կը տարակուսիմ , պատասխանեց Տանկլար իւր նենդառ միտ ժպիսովը :

— Պետիսմէէն , ըստ Աօնթէ-Քրիսթօ , միւս տակառներուն մէջ գեռ . կենդանի մեացած միւս թառափն ու քարաղիսցը հաս բերել առուր — :

Տանկլարի ապուշ աչքերը բացուեցան , և բոլը սեղմանակիցները ցանկներ առեսնելու մեծ փափաք մը ցուցույնի :

Հորս ծառաներ ծովային բոյսերավ պատսպարուած երկու տակառներ բերին , որոնց իւրաքանչիւրին մէջ սեղանին վրայ եղած ձուկերուն նմանը կ'երերային :

— Ինչո՞ւ իւրաքանչիւր տեսակէն երկերկու հաս բերել առիք : Հարցոց Տանկլար :

— Աշան զի կընար մէ կը մեռնիլ , ըստ Աօնթէ-Քրիսթօ պարու զոթեամիր մը :

— Ստոդիւ զարմանալի մարդ մ'էք , ըստ Տանկլար . թող իւ մաստառէ բները ուղածնին ըսեն , հարուստ ըլլալը մեծ բան է :

— Մանաւանդ սյսպիսի գաղափարներ ունենալը , ըստ տիկին Տանկլար :

— Ո՛չ , այդ պատիւր ինձ մի տաք , տիկին . Հումայեցիք արդէն կը ճանչնային այս եղմանակը , և ոչինիսո կը պատմէ թէ զերիները զլուխնուն վրայ կըելով Օսմթայէն Հռոմ տեսակ մը ձուկեր կը տանին , որոնք իւր նկարագրութեանը նայելով ուկեձուկը պիտի ըլլան : Զանոննը կինդանի տասնալը մեծ բան մ'էք , և անոնց մեռնիլը տեսնելը զուտքալի տեսարան մը . վասն զի մեռնելու ժամանակը երեք կամ չորս դոյն կը փոխէին , և զոլորշիսցող ծիածանին նման իրենց ամեն գոյները կը լուծուէին . որմէ ետեւ խոհարարին կը յանձնուէին : Անոնց չգնածամը յարդելի էք . Հումայեց

ցիք զանոնք կենդանի տեսնել չէին ուզեր, և անսնյ մռեալը կ'աշ նարգէին :

— Բայց Օսմիսյէն Հռոմ հաղիւ եօթը կամ ութ մղնն կայ, ըստ Տըպրէ :

— Ասոյգ է, ըստ Մօնթէ-Քրիսթօ, բայց Դուկուղղոսէն հաղար ութ հարիւր տարի ետքը դալուն արժանաւորութիւնը բ'նչ պիտի ըլլար, եթէ անորմէ աղէ կ դործ չընէինք — :

Երկու Գավաղզանթիները ապշեալ մնայեր եին, սակայն խոչեմութեամբ խօսք մը չէին խօսեր :

— Ասոնք ամենը զարմանալի բաներ են, ըստ Շամօ-Ռունօ, բայց Ճշմարիտ կ'ըսեմ զիս աւելի զարմացընողը ձեր հրամանները այսպէս շուառվ կատարուած տեսնելն է : Այսպէս չէ, պարոն կոմս, այս տունը զնելիք հինգ կամ վեց օր չէ :

— Հաղիւ թէ, ըստ Մօնթէ-Քրիսթօ :

— Հաւաստի եմ ութ օրուան մէջ կատարեալ կերպարանափոխ եղած է . վասն զի եթէ չեմ սխալիր՝ մանելու գուռը ուրիշ կողմէ էր, և բակը քարայատակուած ու դատարկ էր, քանի որ այսօր քակին տեղ զեղատեսիլ մարդադետին մը կը տեսնեմ, որպնյ շրջանակի ծառերը կարծես հարիւր տարեկան են :

— Ի՞նչ ընեմ. կանաչեղէններն ու ստոերը կը սիրեմ, ըստ Մօնթէ-Քրիսթօ :

— Իբօք, ըստ տիկին Ակլլֆօր, ասկէ առաջ փողոցին վրայ բացուող դռնէ մը տան մէջ կը մտնուէր, և իմ հրաշքով ազատած օրս աղէկ կը յիշեմ՝ փաղոցին կողմէն զիս տան մէջ մտցուցիք :

— Այս, տիկին, ըստ Մօնթէ-Քրիսթօ . բայց անկէ ետքը աւելի յարմար տեսայ ուրիշ դռու մը բանալ, ուրկից կարող ըլլամ Պուլոնի անտառը տեսնելու :

— Զօրս օրուան մէջ, ըստ Մորէլ, հրաշք մ'է այս :

— Ստուգիւ, ըստ Շամօ-Ռունօ, հին տունին նորութիւն տառը հրաշք մ'է . ես զիսեմ որ այս տունը խիստ հին և խիստ տխուր էր : Քանզի ասկէ երկու կամ երեք տարի առաջ երբ Պ. Աէն-Մէրան այս տունը ծախու հանեց, մայրս զիս զրկեց որ դամ աչք անցընեմ :

— Պ. Սէն-Մէրան կ'ըսէք, ըստ տիկին Ախլֆօր, բայց այս  
տունը ձեր դնելէն առաջ Պ. Սէն-Մէրանին էր, պարոն կոմս :

— Կարծեմ թէ անորն էր . պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ :

— Ի՞նչպէս, կը կարծէք կ'ըսէք : Այս տունը որմէ դնելնիդ չէք  
զիտեր :

— Ցիրտի չեմ դիտեր . իմ ամեն դործերուս դործակատարս կը  
զբաղի :

— Իրօք տասը տարիե՛ ՚ի վեր այս տան մէջ մարդ բնակած չէր,  
ըստ Շախօ-Ռընօ, և իւր դոյտած վանդակապատ պատուհաննեւ-  
րովը և փակեալ գուներովն ու խոտերով լցուած բակովը ախուր  
կ'երեւէր : Ստուզիւ եթէ ժաղաւորի դործակալի մը աներին տունը  
շըլլար, կընար այնպիսի անիծեալ տուներէն մէ կը համարուիլ, ո-  
րու մէջ մեծ մեղք մը դործուած է — :

Ախլֆօր, որ մինչև այն միջոցին իւր առջեր դրուած երեք կամ  
չորս բաժակ տարօրինակ զինիներուն ձեռք դպցուցած չէր, ըստ  
պատահանն մէ կը առ աւ և ՚ի մի ումազ պարզեց զայն :

Մօնթէ-Քրիսթօ վայրիեան մը ապասեց . և Շախօ-Ռընոյի խօսքե-  
րէն ետե տիրած լուռթիւնը խօշելով :

— Զարմանալի բան, ըստ, պարոն սեպուհ, առաջին անդ ամ  
այս տունը մասած ժամանակս ևս ալ նոյն կարծիքը ըրի, և այս  
տունը ինձ այն աստիճան ախուր երեցաւ, որ եթէ դործակատարս  
գնած շըլլար՝ ամենեին պիտի չդայի բնակելու : Հաւանականարար  
նենդառորը պարզ և մը ընդունած է նօտարէն :

— Հաւանական է, կակազեց Ախլրֆօր ժպտելու փորձ փորձելով,  
բայց հաւատացէք որ տան այսպէս աւերեալ մնալուն յանցանքը իմն  
չէ . Պ. ար Սէն-Մէրան տվյալ որ այս տունը ծախուի, քանզի իւր  
թուան օժտին մէ կ մասը կը կազմէր, և եթէ տակաւին երեք կամ  
չորս տարի անբնակելի մնար, բոլորուին պիտի փլուէր — :

Այս անդամ Մորէլի գցնն ալ նետեց :

— Այս տանը մէջ մասնաւորաբար սենեակ մը կար, շարունա-  
կեց Մօնթէ-Քրիսթօ, ոչ, Տէր Աստուած, որ ըստ երեւթից խիստ  
սրագ սենեակ մէ՛ր, և միւս սենեկաց պէս դամասկեան կարմիր  
կերպասով վարդարտած, բայց չեմ զիտեր ինչու ինձի խիստ ա-  
ղէտալի սենեակ մը երեցաւ :

— Կհչու, հարցոց Տըողը:

— Ակիմէ քնարագրմանց պատճառը կրնայ զիսցոյիլ, ըստ Մօնաթէ-Քրիսթօ. միմէ այնպիսի տեղեր չկան, ուր մեղ այնպէս կ'երեի թէ բնականաբար տիրութեան օդ մը կը չնշենք. ինչու, չենք զիս տեր. միայն թէ մը մատաց մէջ զանազան կարծիքներ և յիշատականեր կը չդժայտին, որոնք զմեղ որիշ տեղեր և ուրիշ ժամանականերու կը տանին, բայց դուցէ անոնք մը դտնուած ժամանակիներուն և տեղերուն չես ամեննին յարաբերութիւն չունին: Այս սենեակը Կանք մարգեղուհուոյն կամ Տէտրմանային սենեակը կը յիշեցնէր ինձ: Եկեք, անմնէք, քանի որ Ճաշը լմացոցինք, այն սենեակը ցուցնեմ ձեզ, և ետքը պարտէ զը կ'իջնենք սորճը խմբու: Ճաշէն ետեւ տեսաբան մը պէտք է — :

Մօնթէ-Քրիսթօ իւր սեղանակցաց կամքը հարցընելու համար նշան մը ըրաւ:

Տիկին ուր Վիլլֆօր ոսք ելու, Մօնթէ-Քրիսթօ նոյնը ընելու չսպասեց, և ամեն մարդ անոնց օրինակին հետեւցան:

Վիլլֆօր և տիկին Տանկլար վայրկեան մը իրենց տեղը քեռեալ մնացին:

Պատ, անձայն և տառած աչք իրարու կամքը կը հարցընէին:

— Նսցիք, ըստ տիկին Տանկլար:

— Պէտք ենք երթալ — , պատսսխանեց Վիլլֆօր ոսք ելնելով և իւր թեր անոր ներկայացնելով:

Ամեն մարդ հետաքրրութենէ շարժեալ արդէն տան մէջ ցրուեր էին. վասն զի սեղուշտ կը մասածէին որ միայն այն սենեակը անոնելու համար ոսք ելած չ'են, և բնակարանին ամեն կողմը կը պըտաքին, զոր Մօնթէ-Քրիսթօ պալուս մը ձեւացուցեր էր:

Մօնթէ-Քրիսթօ երկու ետ մնացողներուն սպասեց:

Երբ անմնք ալ սեղանատունէն գուրս ելան, կոմնը անսուց առաջը անցաւ այնպիսի ժպիտով մը, որուն պատճառը եթէ հասկընային, իրենց մանելու սենեկէն տեղի պիտի սոսկուցին անկէ:

Իրօք սկսան Արեւլեան բաղմոյներով և անկորդոյ տեղ խշտիներով ու կարասսաց տեղ ծխափողերով և զէնքերով զարդարուած սենեակիները, հին վարողնաներու խիստ ընտիր պատիերներով ծածա

կուտած սրահները, կամածին գոյներով, այլանդակ նկարներով, և չխանալի հիւսուածքով Զինու կերպասներէ կահուած դահլիճները պարտիլ:

Աերջապէս այն համբառեալ սենեակը հասան:

Նորանշան բան մը չկար հոն. միայն թէ սենեակը մութէ էր, թէ երիկոն էր, և հին կ'երեւէր, ինչ ատեն միւս բոլոր սենեակները նորոգուեր էին:

Այս երկու պատճառները իրօք բաւական էին սենեկին ախուր կերպարանք մը տալու:

— Ո՛չ, ըստ տիկին Վիլլ ֆօր, իրօք վախնալու տեղէ եղեր—:

Տիկին Տանկլար ջանաց քանի մը խօսք կակաղնելու, զորոնք միայն բնրը լսեց:

Ամեն մարդ զանազան դիտողութիւններ ըրբն, և վերջապէս հետեցուցին որ դամասկեան կարմիր կերպասով սենեակը իրօք ախուր երևոյթ մուներ:

— Այնպէս չէ, ըստ Մօնթէ-Քրիսթօ. տեսեք սա անկողինը բնչ այլանդակ կերպով զետեղուած է, ինչ տիսուր և արիւներանդ վարդոյրներ ունի, և այս ներկալաստն երկու նկարները, որպանք խոնաւութենէ դեղներ են, կարծես թէ իրենց զունատեալ շորթերովն ու զարհուրեալ աշաքը կ'ըսնն. Տեսանք —:

Վիլլ ֆօրի գոյնը կապարի դարձաւ, և տիկին Տանկլար կրակաց բանին քովը դրուած աթուի մը վրայ ինկաւ:

— Ո՛չ, ըստ տիկին Վիլլ ֆօր ժպտելով, բնչպէս կը համարակիք այդ աթուին վրայ նստիլ, ուր գոյցէ ոճիրը զործուած է —:

Տիկին Տանկլար աշխաւժիւ ստք ելաւ:

— Ամեն բան շտեսոք տակաւին, ըստ Մօնթէ-Քրիսթօ :

— Աւրիշ բնչ կայ, հարցոց Տըպրէ, որուն աշքէն վախած չէր տիկին Տանկլարի այլայլութիւնը:

— Այս, ուրիշ բնչ կայ, հարցոց Տանկլար. վասն զի ստուզիւ մինչև չիմա երեւէլի բան մը շտեսոյ, ինչ կ'ըսեք դոք, Պափալպալզանիթի :

— Ո՛չ, մենք Բիզայի մէջ Աւկոլինի աշտարակը ունինք, Գերբարայի մէջ Թասսոյի բանալ և Արխմինի մէջ Ֆրանչէ ոքոյի և Բաօլոյի սենեակը:

— Այս, բայց այս փոքր սանդուխը չտնիք, ըստ Մօնթէ-Քրիստոյ մօ վարագոյրին եախն պահուած դուռը բանալով, տեսէք, և ձեր կարծիքը ըսէք ինձ :

— Այս ի՞նչ կամաբանե տխուր սանդուխ մ'է, ըստ Շամօնի օրշու ծիծաղելով :

— Երօք, ըստ Տրպրէ, չեմ դիտեր թէ արդեօք Քիսոյ դինին է որ ամեն բան այսպէս ախուր կ'երեցին մեզ — :

Իսկ Մորէլ Վալանթինի օժախն խորը լուլէն ՚ի վեր արտուր կ'երեւէր և ամեննեխն խօսք չէր խօսեր :

— Երևակայենք, ըստ Մօնթէ-Քրիստօ, թէ Օթէլլօ մը կամ Կանմի որ և է արբայ մը չարադուշակ և մրրկալի դիշեր մը այս սանդուխուն վար իջած է ոճրալի քեռով մը, զօր եթէ ոչ Աստուծոյ՝ զոնէ մարդոց աչքէն պահել ջանացեր է — :

Տիկին Տանկլար Վիլլֆօրի թեխն վրայ կէս մը նուաղած երեցաւ, իսկ թագաւորի դործակալը պատին կոթընելու ստիպուեցաւ :

— Ո՛չ, արկին, ըստ Տրպրէ, ի՞նչ ունիք, ինչու այդպէս կը դունասիք :

— Պատճառը յայտնի է, ըստ տիկինն Վիլլֆօր. պարսն կամոք այնպիսի ահուելի ողատառութիւններ կ'ընէ, որ անտարակոյս զմեղ սոսկումն մեռցինել կ'ուղիւ :

— Այս, կոմս, ըստ Վիլլֆօր, իրօք այս տիկինները կը վախացինեք :

— Ի՞նչ ունիք, ահիկին, կրկնեց ցած ձայնին Տրպրէ տիկինն Տանկլարին :

— Ոչինչ, ըստ տիկիննը ինքվինքը դստելով, քիչ մը օդ առնել կ'ուղիւ :

— Կ'ուղիւ պարտէզը իջնել, հարցուց Տրպրէ իր թեր տիկինն Տանկլարի ներկայացընելով և դէպ ՚ի դաղանի սանդուխը յառաջանալով :

— Ոչ, ոչ, ըստ տիկիննը աւելի կ'ուղիւմ հոս մնալ :

— Ստուգիւ, տիկինն, ըստ Մօնթէ-Քրիստօ առանց կատակի կը վախանաք :

— Ոչ, պարսն, ըստ տիկինն Տանկլար, բայց այնպիսի ենթա-

գրութիւններ կ'ընէք, որ մատացածին կարծեաց՝ Ճշմարտութեան եւ բեռյթ մը կու տաք :

— Է՛՛ս, այս, տիկին, ըստ Մօնթէ-Քրիսթօ ժպտելով, պատմածս երևակայութիւն մ'է . վասն զի այս սենեակը ինչո՞ւ ընտանիքի բարի բարի և պարկեցած մօր մը սենեակը ներկայացընենք, ինչո՞ւ այս ծիրաննեղոյն վարագոյքներով անկողինը՝ Լիւսին յառերժահարսին անկողինը չըլլաց, և այս գաղանի անդուխը կրնայ երինող կոտջ հանդուսարար քունը շնորհարելու նպատակու շինուած ըլլալ, որպէս զի բժիշկը կամ ստնտուն և կամ նոյն ինքն հայրը քնացող զաւակը դրկելով առանց ձայն հանելու անկէ անցնի . . . — :

Այս անդամ տիկին Տանկլար փոխանակ այս մեղմ նկարագրութեան վրայ հանդարտելու՝ հեծութեան ձայն մը հանեց և բոլորվին նուազեցաւ :

— Տիկին Տանկլար անհանդիստ կը դանուի . կակաղեց Ալիլֆօր, արդեօք զինքը իւր կառքը տանել հարկ պիտի ըլլայ :

— Ո՛վ Աստուած, ըստ Մօնթէ-Քրիսթօ, ես ալ սրուակս վրաս տանելու մոռցեր եմ :

— Խմ քովս է — , ըստ տիկին Ալիլֆօր և Մօնթէ-Քրիսթոյի սրուակ մը ներկայացուց, որ լցուն էր այն կարմիր հեղուկէն, ուրավ կոմոք Կատուարին վրայ այն մարդասիրական ազդեցութիւնը՝ ի գործ դրեր էր :

— Ա՛՛ս, ըստ ըրբիք, ըստ Մօնթէ-Քրիսթօ սրուակը տիկին Ալիլֆօրի ձեռքէն առնելով :

— Այս, մրմիջեց տիկին Ալիլֆօր, ձեր տուած տեղեկութեան համեմատ փորձեցի :

— Յաջողեցաք :

— Կարծեմ — :

Տիկին Տանկլարը մօտակայ սենեակը փոխաղբեր էին :

Մօնթէ-Քրիսթօ կարմիր հեղուկէն կաթիլ մը անոր շըլանց վրայ կաթեցուց, և անմիջապէս տիկին Տանկլար սմափեցաւ :

— Ո՛՛ս, ըստ, այս ինչ ոսկալի երազ է — :

Ալիլֆօր անոր գաստակը սեղմեց իմացընելու համար որ ամենին երազ տեսած չէր :

Պ. Տանկլար երևակայական աղբեցութիւններ մտիլ ընելու ժամանակ շունենալով՝ արդէն պարտէզը իջեր էր, և Պ. Գավալլանաւթիի հետ Լիվորնոյէն ֆիորէնցա բացուելու երկաթուղոյ մը վրայ կը խօսէր :

Մօնթէ-Քրիսթօ յուսահատած կ'երեէր :

Տիկին Տանկլարը իւր թեր առաւ և պարտէզը տարաւ, ուր Պ. Տանկլարը տեսան որ Գավալլանթիւնը հետ սուրճ կը խմէր :

— Սայդ ըսէք, տիկին, ըսաւ կոմնը. իրօք զձեզ խիստ վախցուցի՞ :

— Ոչ, պարոն, բայց դիսէք որ պատմութիւնները մարդոց յարմարութեան համեմատ ազդեցութիւն կ'ընեն — :

Ա.իլրֆօր ժպտելու ջանաց :

— Կը համկընաք անշուշտ, ըսաւ, որ ենթաղրութիւն մը կամ մտացածին պատմութիւն մը բաւական է . . . :

— Եթէ կ'ուզէք՝ մի հաւասար, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. Ես այնու ոլէս համոզուած եմ որ այս տան մէջ ոճրագործութիւնս մը եղած է :

— Զգուշացէք, ըսաւ տիկին Ա.իլրֆօր, թագաւորի գործակալ մը հնի ունինք հոս :

— Աւրեմն քանի որ այսպէս յարմար եկաւ, առիթը պիտի շփակացնեմ իմ յայտարարութիւնս ընելու :

— Զեր յայտարարութիւնը, ըսաւ Ա.իլրֆօր :

— Այս, և վիաներու առջեւ :

— Խիստ հետաքրքրական է ուրեմն, ըսաւ Տըպրէ, և Եթէ իրօք ոճրագործութիւն մը կայ, աղէկ պիտի մարսենք կերածնիս :

— Այս, ոճրագործութիւն մը, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ : Այս կողմը եկէք, պարոններ, դուք ալ, Պ. ուր Ա.իլրֆօր. և որպէս զի ըրած յայտարարութիւնս վաւերական ըլլոյ, ուկոք է որ տէրութեան օրինաւոր պաշտօնեաններու առջեւ ընեմ — :

Մօնթէ-Քրիսթօ Ա.իլրֆօրի թեր մոսաւ առանց տիկին Տանկլարէ թեր թողելու, և թագաւորի գործակալը մինչեւ այն խիստ ստուերաւոր սօսիին տուկը տարաւ :

Բալոր սեղանակիցները իրենց ետևէն կու դային :



— Ահա, լուսն Մանելէ-Բրիոնձօ, հոս, այս նոյն տեղու (և ինը  
ուսքովը զետինը կը զարնէր), ծերոցած ծառերը մատաղաշնչնելու

Համար զետինը փորել և ընտիր հող թափել տուի . բայց աշխատ տառորներս փորելու ժամանակ արկղ մը կամ թէ ըսնք արկղի երկաթները դուրս հաներ են , որուն մէջ նորածին մանկան մը կրմախաքը կայ եղեր . յնորք մը չէ այս կարծեմ :

Մօնթէ-Քրիսթօ տիկին Տանկլարի մեկն ցկտիլը և Ակլլրֆօրի դաստակին սարտալը զգաց :

— Նորածին մանուկ մը , կրկնեց Տըպրէ , Բնչ կ'ըսէք . դործը ծանր կերպարանք մը կ'առնու կարծեմ :

— Ուրեմն , ըստ Շամօ-Արնո , ամենելին չսխալեր եմ երբ քիչ մը առաջ կը պնդէի թէ տուները մարդաց պէս հողի և դէմք ուշնին , և իրենց փորոտիքին նկարը իրենց դիմացը վրայ կը կրեն : Այս տունը ախուր կ'երեւէր , ըստ որում ոճիրը պահած ըլլալուն՝ խոջի խայթեր ունէր :

— Բայց ով կրնայ ըսել թէ ոճիր մ'է այս , կրկնեց Ակլլրֆօր իւր վերջին ոյժը ամփոփելով :

— Բնչ կ'ըսէք , կենդանի մանուկ մը պարտէզի մը մէջ թաղելը ոճիր մը չէ , ըստ Մօնթէ-Քրիսթօ : Այս դործին Բնչ անուն կու տաք , պարոն թաղաւորի դործակալ :

— Բայց ուրկից յայտնի է որ կենդանի թաղուած է :

— Նթէ մեռած ըլլար , ինչու հոս պիտի թաղուէր . այս պարագէզը զերեզմանատուն չէ :

— Այս երկրն մէջ մանկասպամներուն պատիմը Բնչ է , հարցուց Գավալզանթի զնդապետը պարզմտութեամբ մը :

— Պարզապէս անոնց պարանոցը կը կարեն , պատասխանեց Տանկլար :

— Իրան , անոնց պարանոցը կը կտրեն , ըստ Գավալզանթի :

— Կարծեմ . . . Այսպէս չէ , պարոն աը Ակլլրֆօր , հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Այս , պարոն կամ — , պատասխանեց թաղաւորի դործակալը այնպիսի ձայնով մը , որ իւր շփոթութիւնը կը յայտնէր :

Մօնթէ-Քրիսթօ բառական համարելով երկու անձանց կրած նեղութիւնները , որոնց համար այս անսարանը պատրաստեր էր , չուզեց աւելի երկարել :

— Բայց մեր սուրճը Երբ սիստի խոնդը, ըստ, բնլորավին մնում  
շանք — :

Եւ հիւրերը գալարավայրին մէջ աեղը դրուած սեղանին քովը  
տարաւ :

— Սառւդիւ, պարոն կումս, ըստ տիկին Տանկլար, կ'ամչնամ  
ովկարութիւնս խոստովանելու . վասն զի ձեր պատմած սոսկալի պատ-  
մութիւնները ինձ մեծ անհանդստութիւն պատճառեցին, կ'աղա-  
շեմ, ներեցէք որ նստիմ — :

Եւ աթոռի մը վրայ ինկաւ :

Մօնթէ — Քրիստո խոնարհութիւն մը ըրաւ և տիկին Ակլլրֆօրէ  
մօսեցաւ :

— Կարծեմ թէ տիկին Տանկլար ձեր սրուակին պէտք ունի սա-  
քանին — , ըստ :

Բայց տիկին Ակլլրֆօր իւր բարեկամուհոյն շմօտեցած՝ թաղա-  
սորի դործակալը տիկին Տանկլարի ականջին ըսեր՝ էր :

— Կ'ուզեմ հետդ խօսիլ :

— Ե՞րբ :

— Պազլը :

— Ո՞ւր :

— Գրասունս, բայց առելի խորհրդառան սրահը, եթէ կը հա-  
զիս, հսն առելի ապահով կը լլանք :

— Ըստ աղեկ — :

Այս միջոցիս ափկին Ակլլրֆօր անոր մօսեցաւ :

— Ընորհակալ եմ, սիրելի բարեկամուհիս, ըստ տիկին Տան-  
կլար ժպտելու փորձ փորձելով, բան չունիմ, և իստարեալ հօեւ-  
զիստ եմ — :



## ՄԱՆՐԱՅԱԿԱՆ

Երիկունը բառական յառաջացեր էր . տիկին Վիլլֆօր Բարիդ զիւրագառնալու բաղնանքը յայտներ էր . բայց տիկին Տանկլար իւր զգացած յայտնի անհանդստութեան հակառակ՝ չհամարձակեր էր նոյն բաղնանքը յայտնելու :

Պ. Վիլլֆօր իւր կնոջ խնդրանաց վրայ ամենէն առաջ մն կնելու նշանը տուաւ :

Իւր կառքին մէջ տիկին Տանկլարի տեղ մը շնորհեց , որպէս զիւր կինը խնամէ զան :

Իսկ Տանկլար Պ. Գավալդանթի հետ արտեստագիտական խիստ կարևոր խօսակցութեան մը մէջ ընկրումած ըլլալով , եղածներուն ամեննին ուշադրութիւն շեր ըներ :

Մօնթէ-Քրիսթօ տիկին Վիլլֆօրէն սրուակը ուզած ժամանակը դիտեր էր որ Պ. Վիլլֆօր տիկին Տանկլարի մօտեցեր էր . և կոմու անոր ըսած խօսքը զուշակեր էր , թէև Վիլլֆօր այնչափ կամաց խօսեր էր , որ տիկին Տանկլար հազիւթիւնը անոր ձայնը լսեր էր :

Կոմու առանց ընդդիմանալու թողուց որ Մորէլ , Տըպորէ և Շամթօ-Ռիլնօ ճիւրը հեծնեն , և երկու տիկինները Պ. Վիլլֆօրի կառքը մանեն :

Տանկլար ևս քան զես ուարթուամէօ Գավալդանթիէն դոչ ըլլալով իւր կառքը հրափրեց զան :

Իսկ Անտրէա Գավալդանթի իւր անդ դիսաձեւ կառքին մօտեցաւ , որ դրան առջեւ իրեն կըսպասեր , և որուն սպասաւորը անդ դիսական նորաձեւ ութեան շափազանց զարդերով պահուձեալ . և կոշիկներուն ծայրին վրայ բարձրանալով հարսուկ յաղթ ձին բռներ էր :

Անտրէա հաշին ժամանակ շատ շիսուեր էր . ոչ միայն խելացի երիտասարդ մը ըլլալուն համար , այլ և բնականաբար իւր զգացած վախուն , որ չըլլայ թէ անխօհէմ խօսքեր ընէ այն հարտառ

եղօրաւոր սեղանակցաց հետ, որոնց մէջ դուցէ աներիլին ըլքը տեսնեմը թագաւորի զործակալ մը:

Ասկէ զատ՝ Տանկլար զինքը առանձին թողուցած չէր, քանզի սեղանաւորը ծանրաբարոյ ծեր զնդապետին և անոր քիչ մը երկշուա որբուոյն հարևանցի նայուածք մը շրջելով ու Մօնթէ-Քրիսթովի անսնց ըրած հիւրինկալութիւնը տեսնելով, կարծեր էր թէ ու Պարթուութիւնն անպատճելու բարիկ եկած է իւր միակ որդին ընկերային կենաց մէջ զարդարնելու:

Ուստի անպատճելի ուրախութեամբ զնդապետին փուրք մասին վրայ փայլող խիստ մեծ աղամանդը դիտեր էր. քանզի զնդապետը խոհեմ և փորձառու մարդ մը ըլլալով, իւր լումայազիրերուն վատանդ մը պատահչելու վախեն՝ անմիջապէս ծանրազին դոհարի մը հետ փախեր էր զանոնք:

Ճաշէն ետքն ալ Տանկլար միշտ արուեստից և ճամբարդութեանց առթիւ հայրը և որդին իրենց կենցաղավարութեանց մասին հարցուածորձ ըրեր էր, և երկու Գավազդանթիւնը, որնք արդէն դիտեին թէ Տանկլարի վրայ բացուած էր իրենց վարկը՝ մէկուն քառասուն և ութ հազար ֆրանքի մէկ անդամ տրուած, և միւսին տարեկան յիսուն հազար ֆրանքի, սեղանաւորին հետ խիստ քաղաքամիարութեամբ և սիրով անցան, և այնչափ երախտաղ խոռութիւնն մը կ'ըզդային որ եթէ իրենց ներելի ըլլար՝ անոր ծառաներուն ձեռքը պիտի սեղմէին:

Գլխաւորաբար մէկ պարագայ մը Տանկլարին Գավազդանթիւի վրայ տնեցած համարտւմը, կրնանք իսկ ըսկ յարգանքը աւելցու:

Գնդապետը ընտիր քարտղիաց ձուկերը որ լիճէն հանտիլը յայտնելով իւր դիտութեան փորձը տուեր էր. եազը անոնցմէ կերած ժամանակը խօսք մը չխօսեր էր:

Տանկլար ասկէ մակաբերեր էր որ այս մեծասպաս փառաւոր սեղանները Գավազդանթիւի ընտանիի էին, որ հաւանականաբար Զուիցերիի կարմրախայտ ձուկեր և Պրըթանեի խառնիներ կ'ուտէր, որոնք Ճիշդ այն հնարքով բերել կու տար, ինչպէս որ կոմը Յուռազարո լիճէն քարագիսցները և Առիա գետէն թառափները բերել առուեր էր:

Աւստի մեծ մարդասիրութեամբ Գալավազզանթիի այս խօսքերը ընդգունեց :

— Աաղը , պարոն , դործի համար ձեզ այցելութիւնը ընելու պատիւը պիտի ունենամ :

— Եւ ես , սպատասիաներ էր Տանկլար , զձեզ ընդունելու երաշանիկ ողիաի ըլլամ — :

Ասոր վրայ առաջարկեր էր Գալավազզանթիին որ զինքը իւր կառքովը Կշխանաց պանդոկը տանի ձգէ , եթէ սակայն իւր որդիէն բաժնուիլը արգելք մը չըլլար իրեն :

Գալավազզանթի սպատասիաներ էր թէ երկար ժամանակէ 'ի վեր իւր որդին սովորութիւն ունէր անկախ կեանք մը վարելու , հետևաբար իւր ձիերն ու սպատասորներն ունէր , և անոր հետ եկած չըլլալովը դժուարութիւն մը չէր տեսներ սանձին երթալուն :

Այսպէս զնդապետը Տանկլարի կառքը հեծեր էր , և սեղանաւորը անոր քովը նստելով կ'ըսմայլէր այն մարդուն խոշչեմութեան և խնայողութեանը վրայ , թէ և տարին յիսուն հազար ֆրանք կու տար իւր որդւոյն . որով ենթադրել կու տար թէ հինգ կամ վեց հարիւր հազար ֆրանք եկամուտ ունի :

Իսկ Անտրէա սկսեր էր մեծութիւն ձեացընել , իւր սպատասորը յանդիմանել թէ ինչու զինքը առնելու . համար փոխանակ ներբին սանդուխն առջեւ գալու , արտաքին դրան առջեւ կ'ըսպասէր , որով մինչև իւր կառքին մօտենալու . համար երեսուն քայլ առնելու պարտասորեր էր :

Սպատաւորը այս շանդիմանութիւնը ընդունեց , և անհամբեր ձին կեցընելու համար , որ ուտքով զետինը կը զարնէր , ձախ ձեռքովը դանդանաւանդը բռնեց , ու աջ ձեռօքը սանձը Անտրէային երկինցոց , որ զայն առնելով իւր ասիիկեալ կոշիկը թեթեւութեամբ կառքին ուտքին վրայ կոխեց :

Նոյն միջոցին ձեռք մը անոր ուսին կոթընեցաւ :

Երիտասարդը երեսը դարձուց կարծելով թէ Տանկլար կամ Աօնթէ-Քրիստօ բան մը մոռցեր էին , և իւր մեկնելու ժամանակը եկեր էին ըսելու :

Սակայն անոնց տեղը այլանդակ դէմք մը անսառ արևէն այրած ,

ստուար մօրու քովլ շընանակեալ, կարկեչանի նման փայլուն աչօք, և կատակախառն ժպիառվ մը, որ իւր բերանը բանալով դայլի կամ ձիու մը ակռաներառն պէս երեսուն և երկու սպիտակ, սոր և նօթի ատամները կ'երեցընէր, որտայ և ոչ մէ կը կը պակսէր :

Կարմիր քառեակներովլ թաշկինակ մը իւր մոխրաղոյն և փաշունեալ մազերովլ զլուխը փամթմած էր, խիստ աղտեղի և պատառուսած բանկմանակ մը իւր նիշար և ոսկրաս մարմինը կը ծածկէր, որուն կմախրի նման ոսկրները կարծես թէ քաղելու տաեն իրարաւ զարնելովլ ձայն կը հանէին :

Աւերջապէս Անտրէային ուսին դպրած ձեռքը, զօր նախ երիտասարդը զլուխը դարձնելովլ տեսներ էր, տարապայման մեծ երեցեր էր իրեն :

Թէ արգեօք երիտասարդը իւր կառ քին լուսովլ այս դէ մըզ հանչ ցեր էր, և կամ այս խօսակցին սոսկալի երեսոյթէն վախյեր էր, չենք կրնար ըսել, բայց սա ստոյդ է որ զան տեսնելովլ Անտրէա արարուաց և աշխուժիւ ետ քաշուեցաւ :

— Ի՞նչ կ'ուզէք, ըստաւ անոր :

— Ներեցէք, ընկեր, ստատուխանեց մարդը՝ ձեռքը իւր կարմիր թաշկինակին տանելովլ. զուցէ շփոթութիւն կը պատճառեմ ձեզ, բայց պատճառը այն է որ ձեզ ըսելիք ունիմ :

— Այս ժամաւ չեն մարար, ըստաւ սովասաւորը իւր աէ ըստ այն զատարկատոնէն ապատելու. համար շարժում մը ընելովլ :

— Ես չեմ մուրար, բարեկամ, ըստաւ անծանօթ մարդը ծառային հեղնական ժպիառվ մը. բայց այս ժպիտը այնպէս սոսկալի էր որ ծառան անոր քովլն հեռացաւ. կ'ուզէմ երկու խօսք խօսիլ տիրոջդ. որ ասկէ տասն ու հինդ օր առաջ ինձ յանձնարարութիւն մը ըրած է :

— Ըսէք ուրեմն, կրինեց Անտրէա իւր շփոթութիւնը ծառային չցոյցընելու. համար ննդինքը զատելովլ. ի՞նչ կ'ուզէք, ըսէք շուտվ, բարեկամ :

— Կ'ուզէի . . . կ'ուզէի . . . ըստաւ կարմիր թաշկինակովլ մարդը, որ ստրով բարիզ վերադառնալու նեղութենէն աղատես զիս = Խիստ յոդնած եմ, և որովհետեւ քեզի պէս աղէկ հաշ մը ըրած չեմ, հազիւ ոսքի վրայ կենալու ոյժ ունիմ — :

Երիտասարդը այս զարմանալի ընտանութեան վրայ սարսա աց :  
— Բայց վերջապէս ըսկը, ըստ, ի՞նչ կ'ուզէք :  
— Թող որ ընտիր կառ քդ հեծնեմ որ զիս Բարիդ տանիս — :  
Անարէայի զոյնը նետեց, բայց սպատասխան շտուաւ :  
— Է՛ս, այս, ըստ, կարմիր թաշկինակով մարդը իւր ձեռքերը  
զրուաններուն մէջ խօթելով և կուր վնասուող աչքով երիտասար-  
դին նայելով, այսպէս կ'ուզեմոր լնես, կը լուիս, իմ փոքրիկ ուշ-  
նէ աէթթօս — :

Այս անունը լսելով երիտասարդը անտարակոյս մտածեց քիչ մը,  
քանզի իւր ծառային մօտենալով ըստ :

— Այս մարդուն իրօք յանձնաբարութիւն մը ըրած եմ, որուն  
վրայ խօսելիք ունի : Մինչեւ պարիստները տուքով զնա, հոն կառք  
մը վարձէ որպէս զի շուշանաւ :

«Տառան զարմանքով հեռացաւ :

— Գոնէ թողացէք որ ստուերին մէջ երթամ, ըստ Անտրէա :

— Ատոր ըսելիք չունիմ . կեցիք, ես ձեռքովս քեզի ազէկ տեղ  
մը տանիմ — , ըստ կարմիր թաշկինակով մարդը :

Եւ ձին դանդանաւանգէն քաշելով կառ քը այնպիսի տեղ մը տա-  
րաւ, ուր իրօք Անտրէայի իրեն տուած պատիւը անկարելի էր որ  
մէկը տեսնէր :

— Կեղեցիկ կառք մը հեծնելու համար չէ որ կառքդ մանել  
կ'ուզեմ, ըստ մարդը . ոչ, այլ միայն խոնջեցած եմ, ասկէ զան  
հետդ զործի վրայ խօսիլ կ'ուզեմ :

— Վեր ելիք ուրեմն — , ըստ երիտասարդը :

Դժբաղդաբար մութ էր, եթէ ոչ հետաքրքրական տեսարան մը  
պիտի ընծայէր այն զատարկաստնը, որ կառքը կառավարող վա-  
յելուշ երիտասարդին քովը ուկեկուռ բարձերուն վրայ նսաեր էր :

Անտրէա իւր կառքը զիւղին մինչև վերջին տունը յառաջացուց  
առանց իւր ընկերին խօսք մը խօսելու, որ նոյնպէս լուռ կեցեր էր  
և կը ժագակէր զողցիս այնպիսի արագաշարժ մեքենայի մը մէջ դանուե-  
լու ուրախութենէն :

Օթէ շյլէն գուրս ելնելով Անտրէա իւր բոլորտիրը նայեցաւ ան-  
տարակոյս ապահով ըլլալու համար որ զիրենիք տեմնող և իրենց

խօսակցութիւնը մտիկ ընազ մէկը չկայ . այն առեն իւր ձին կեցոց և կարմիր թաշկինակով մարդուն առջեւ ձեռքերը խաշաձեղնելով , բառ :

— Ի՞նչ է պատճառը որ այսպէս իմ հանդստոթիւնս խանդարել կ'ուղել :

— Բայց , տղաս , դուն ալ ինչու կը խարես դիս :

— Եւ ի՞նչ բանի մէջ խարեցի զձեզ :

— Աը հարցընեմ . Վար կամուրջին վրայ իրարմէ քածնուածժամանակնիւն՝ ինձ ըսկիր թէ բիէ մոնթէ և թոսկանա ճամբորդութիւնընելու կ'երթաս , բայց կը տեսնեմ որ ողդակի Բարիդ եկեր ես :

— Իմ Բարիդ զալս ձեզ ի՞նչ նեղութիւն կրնայ տալ :

— Ոչինչ , ընդ հակառակն կը յուսամ իսկ որ ինձ օգուտ ալ պիտի լլլայ :

— Ա՛ հա՛ , բառ Անտրէա , ըսել կ'ուղելք թէ մեծ նպաստներ կ'ըսպասէք ինձմէ :

— Է՛ս , արդէն սկսար մեծ խօսքեր ընել :

— Ես ալ կ'իմացընեմ ձեզ , Քատրոս հայրիկ , որ կը սխալիք :

— Մի նեղանար , պղտիկի բարենկամ . սակայն պէտք ես զիսնալթէ ինչ է թշուառութիւնը . թշուառութիւնը մարդս նոխանձու կ'ընէ : Կարծէի թէ Բիէ մոնթէ ի կամ թոսկանայի մէջ կը դանուիս , ու բեռնակորութիւն կամ օտարաց առաջնորդութիւն ընելու կ'ըդբաղիս , և զաւկիս վրայ ցաւածիս պէս բոլոր սրտովս կը ցաւէի քու վրադ : Գիտենս որ միշտ զքեզ իմ զաւակս կոչեր եմ :

— Ետքը , ետքը :

— Համբերէ ինչու կ'արտորաս :

— Աը համբերեմ . Լմցուցէք ձեր խօսքը . . . :

— Եւ կը տեսնեմ որ յանկարծ բարի մարդոց ընկերութեանց մէջ կը մանես սպասառորով , կառքով և նոր փայլուն զգեստներով : Ըսէ ինձ , արդեօք հանք մը զաւար թէ փոխանակագրաց միջնորդի պաշտօն մը զնեցիր :

— Ուրեմն կը խոստովանիք որ կը նախանձիք :

— Ոչ , այնչափ զո՞ւ եմ որ իմ դոչունակութիւնս քեզ յայտնել ուղեցի . բայց որովհեակ աղէկ հազուած չէի , քեզ անպա-

առառ. թիւն մը չընելու համար առնեն զգուշութիւն ՚ի դործ դրի : — Աղբէկ զգուշութիւն , ըստ Անարէա , ծառայիս առջին զիս բռնեցիք :

— Ե՛ս , ինչ ընեմ , որդեակ , երբ զքեզ բռնել կրնամ՞ կը բռնեմ : Աշխայժ ձի մը և խիստ ճեթե կառք մը ունիս , և դուն թնականաբար օձաձուկի պէս կը սահիս . եթէ այս իրիկուն զքեզ չդանէի , երբէք զանելիք չունէի :

— Յայտնի կը աեմնէք որ պահուած չեմ :

— Ըստ երջանիկ ես , շիտակը ես ալ կ'ուզէի այդպէս ըսել , սահայն ես կը պահուիմ . ասիկէ զատ կը վախնայի որ զիս պիտի չճանչնաս . բայց բարեբազգաբար ճանչցար , յաւելցուց Քաարուս իւր շարամիտ մայստովը . կը աեմնեմ որ ազնիւ սիրու մ'ունիս եղեր :

— Ըսէք , ինչ բանի պէտք ունիք :

— Խնչու հին ընկերիդ հետ դուով չես խօսիր , ոլէնէտէթթո , գէշ նշան է այդ . բայց զգուշացիր , այդ կերպով շատ բաներ ինդրելու պիտի ստիպես զիս — :

Այս սպառնալիքը երիտասարդին բարկութիւնը իջեցուց , բռնութեան հոգմը զայն խոնարհեցուցեր էր :

Վասրէա իւր ձին մտրակից :

— Քեզի իսկ գէշ կ'ընես , Քաարուս , ըստ , հին ընկերի մը հետ այդպէս վարուելով , ինչպէս որ հիմա կ'ըսէիր , դուն Մարտիլիայի ես , և ես . . . :

— Ուրեմն հիմա զիտես ուր տեղացի ըլլալի :

— Ոչ , բայց Քորսիայի մէջ մեծած եմ . ծեր ես դուն և խոստապարանոց , և ես երիտասարդ ու յամառ : Մեզի պէս մարդոց համար սպառնալիքը ոյժ չունի , և ամն բան բարեկամութեամբ պէտք է որ կատարուի : Յանցանքը իմա է երբ բազդը միշտ քեզ դժիսեմ կ'երեի , ընդ հակառակին ինձ կը ժպափ :

— Ուրեմն բազդդ քեզ կը ժպափ + ուրեմն կառաստանդ և կառք փոխ առած չես . ուրեմն վրայիդ այդ զգեսաները քուկիդ են . աղէկ , ուրիշ ինչ կ'ուզես , ըստ Քաարուս ցանկութեան անյադ աւագ :

— Ո՛չ , եթէ դլխիս վրայ քեզի պէս թմրշինակ մը ունենայի ,

ւասցս վրայ եղուստած բանկօնակ մը և ոռքս ծակուսած հողաթափներ, ապահով եմ որ զիս պիտի չնանչնայիր :

— Կը տեսնես որ զիս կը նախատես, պղտիկ, և իրաւունք չուսնիս. Հիմա որ ես զքեզ զտայ, ուրիշի մը պէս ընտիր ասուեայ զդեստներ հազնելու արգելք շոնիմ, քանի որ քո բարի սիրուդ կը հանձնամ. եթէ երկու զցեստ ունիս, մէ կը ինձ կու տաս, քանողի քու անօթի եղած ժամանակդ ես ալ իմ ապուրիս և լուրիայիս կէ ոք յօժարութեամբ քեզ տուած եմ:

— Սայդէ, ըստ Անտրէա :

— Ենչ մեծ ախորժակ ունէիր. միշտ նոյն ախորժակը ունիս :

— Այս, ըստ Անտրէա ծիծաղելով :

— Անշուշտ նոյն ախորժակով ճաշած ես այն իշխանին տունը, ուրկից գուրս կ'ելնէիր հիմա :

— Իշխան մը չէ ան, այլ պարզապէս կուն մը :

— Հարուստ կոմն մը, այնպէս չէ :

— Այս, բայց անոր վրայ պէտք չէ վստահ ըլլալ. այս պարոնին դէմքը ինձ հանելի չերելիր :

— Ո՛չ, անչոզ եղիք, ընկեր, կոմսիդ վրայ նկատումներ չուսնիմ, և բուրուսին քեզ կը թողում զան : Բայց, յաւելցուց Քատրուս իւր սովորական չարամիս ժպիտովը, անշուշտ կը հասկընաս այսպէս ընելու համար պէտք է որ բան մը տաս :

— Ըսէ, ի՞նչ կուզես :

— Կարծեմ թէ ամիսը հարիսը վրանկով . . . :

— Ետքը :

— Կրնամ ապրիլ :

— Հարիսը վրանկով :

— Կը համեստ որ ոչ այնչափ աղէկ. բայց եթէ . . . :

— Ո՞չափ :

— Հարիսը յիսուն ֆրանք ընդունիմ, շտա երջանիկ ովիտի ըլլամ :

— Ահա քեզ երկու հարիսը —, ըստ Անտրէա :

Եւ Քատրուսի ձեռաց մէջ տասը Լուի ոսկի դրաւ :

— Աղէկ, ըստ Քատրուս :

— Ամեն ամսոյ առ ջի օրը դռնադանիս ներկայացիր , և նոյնապէ կընդունիս :

— Դարձեալ զիս նուաստացլնել կ'ուղես :

— Ի՞նչ կերպով :

— Կ'ուղես որ ծառաներուդ հետ յարաքերտ թիւն ունենամ . ոչ , ես միայն քեզի հետ կ'ուղեմ դործ ունենալ :

— Ըստ աղէկ , թող այդպէս ըլլայ . ամեն ամսոյ առ ջի օրը եւ կու ինձմէ ինդրէ , միայն մէկ ես ալ իմ եկամուտս ընդունած ըլլամ , և դու ալ քու կդ պիտի ընդունիս :

— Կը տեսնեմ որ սխալած չեմ , ազնիւ տղայ մ'ես դուն , և քեզի պէս մարդոց երջանկութիւնն Աստուծոյ մէկ շնորհքն է : Պատմէ ինձ քու բազրիդ պատմութիւնը :

— Ի՞նչ օգուտ պիտի տեսնեմ այս պատմութիւնը լսելէ , հարցոց զավարզ անթիյ :

— Ահա , դարձեալ անվաստահութիւն կը տեսնեմ :

— Ոչ , ամեննեին . ուրիշն զիտցիր որ հայրս դաս :

— Ճշմարիտ հայր մը :

— Ե՛ս , որչափ ժամանակ որ ինձ վճարէ :

— Ուրիշն որչափ ժամանակ որ վճարէ՝ պիտի ճանշնառ և պիտի յարդես զան , շատ իրաւացի է այդ . հօրդ անունը ի՞նչ է :

— Գաղաղաղանթի զնդադես :

— Եւ զո՞չ է քեզմէ :

— Մինչեւ հիմա ինձ այնպիս կ'երեկի :

— Եւ այդ հայրը դանելնուդ պատճառը ով է :

— Մօնթէ-Քրիստոյ կունու :

— Որուն տունէն որ հիմա կ'ենէլու :

— Այս :

— Ուրիշն աշխատէ որ զիս անոր քովը տեղաւորես :

— Ըստ աղէկ , կը խօսիմ անոր . բայց հիմա լի՞նչ պիտի լնես :

— Ե՞ս :

— Այս , դուն :

— Շնորհակալ եմ որ հազ կը տանիս , ըստ Քատրուս :

— Եւ սրովշետեն քու հազդ պիտի տանիս , կրկնեց Անտրէս :

կարծեմ թէ և ես քու վրայօքդ տեղեկութիւններ ստանալ պէտք եմ:

— Ստոյդ է . . . սպարկեցաւ տան մը մէջ տենեակ մը սպիտի վարձեմ, վայելու զգեստներ սպիտի հաղնիմ, ամեն օր սպիտի ածիլուիմ և սրճարանները օրադիր կարդալու պիտի երթամբ: Իրի կունները թատրոն պիտի յաճախեմ, ու հացագործութենէ հարսաւցած մէկը պիտի երեխմ, ահա իմ երազս:

— Եթէ այդ ամեն խորհուրդներդ ՚ի դործ դնես և խոհեմութեամբ վարուիս, ամեն բան կը յաջողի:

— Պ. Պոսիսէ մը կտրեցար զլուսս . . . : Բայց դուն ի՞նչ սիրամբ ըլլասս . . . Գաղղիոյ առենակալ մը:

— Է՛՛, ով պիտէ, բառ Անտրէա:

— Պ. Գավաղդանիմի զնդապեաը դուցէ առենակալ մ՛է . . . բայց դժբաղդաբար ժառանդական յաջորդութիւննը ջեջուած է:

— Քաղաքական խնդիրներ չխառնենք, Քատրոս . . . : Բայց հիմա որ ուզածդ սատացար և կառքը Բարիզի դուռը հասաւ, վարցատիէ և աներեսոյին եղիր:

— Ամեննին, բարեկամ:

— Ի՞նչոքս:

— Բայց մասածէ, ընկեր, զլուսս կարմիր թաշկինակ մը կայ, ուսքս դրեթէ փոսիի է, անցազիր չունիմ և ծոցս տասը Նարուլէն ոսկի կայ՝ առանց հաշուի դնելու արդէն անոր մէջ եղածը, որ ամենը միտաեղ Ճիշդ երկու հարիսը Փրանք կ'ընէ. այս վիճակին մէջ զիս Բարիզի զրան առջեւ տեսնելով, անշուշտ պիտի բռնեն: Այն առեն՝ զիս արդարացընելու համար պիտի ըսնմ թէ այն տասը Նարուլէնները դուն ինձ տուիր. առոր վրայ հարցուիորձ և խուզալիութիւնները ըլլալով, առանց հրամանի Թոււլսնէն մեխիլս պիտի խմանան, և վերստին զիս Միջներկրականին ծովեզը սպիտի տանին: Այն առեն պարզապէս 106 թիւով թիւարաբարը պիտի ըլլամ, և հացագործութենէ հարսաւցած երեւելու երազածս պիտի կորսնցըներմ: Ո՛չ, զաւակս, պատուով մայրաքաղաքը կենալը նախամեծաբար կ'ընտրեմ:

Անտրէա յօնքը կնձուեց. անշուշտ կը մտածէր թէ սպարսն Գա-

վաղը անթի դնդ ապետին կարծեալ որդին համարուելուն համար պարագելուն շատ զէշ ըրեր է ը :

Այս կեան մը կեցաւ, շոյտ նայուածք մը շընեց իւր բոլորախքը, և ձեռքը անմատթեամբ իւր դրստանը տարաւ, ուր փոքր ասոր ձանակի մը ըլթակին պահպանակը կը խառնէր :

Բայց այն միջոցին Քատրուս, որ իւր ընկերին ըրածները առէկ կը դիտէր, ձեռքը կունակին ետին տարաւ, և որ և է զիտուածի համար իւր պրայ կրած սպանիական երկար դանակ մը սուանց ձայնի կը մերկայընէր :

Խնչպէս կ'երևէր՝ երկու բարեկամները իրարու միտքը դիւրութեամբ հասկընալու կարող էին, և շուտով հասկըցան. Անտրէս առանց վնասելու իւր ձեռքը ծոցէն դուրս հանեց և զէոլ ՚ի իւր կարմրադպյն ընչացքը տարաւ, զոր վայրկեան մը սկսաւ շոյել.

— Ուրեմն, բարի Քատրուս, այս կերպով երջանիկ պիտի բլլաս, ըստ :

— Այս, բոլոր կրցածո պիտի ընեմ, պատասխանեց Բռն-տիւնարի պանդոկապետը դանակը սպատեանին մէջ մղելով :

— Շատ աղէկ, մտնենք ուրեմն Բարիզ. բայց Ենչպէս առանց կասկածներ տալու պիտի կարենաս պարսպին գունէն ներս մտնել. ինձ այնպէս կ'երեի թէ այդ հազուստով աւելի վտանգ աւոր է կառաքով անցնիլը քան թէ ոտքով :

— Կեցիր, ըստ Քատրուս, հիմա կը տեմնես — :

Անտրէայի զլսարկը առաւ իւր դլուխը դրաւ, ճամբռուած կառապանին իւր անդը թողուցած մեծ օձիքով վերարկուն հազաւ, և իւր անդը հանդիսաւ նատաւ տան մը հաւասարիմ ծառայի մը պէս, որուն աէրը կառքը կը վարէ :

— Բայց ես ինչ պիտի ընեմ, ըստ Անտրէա, դլուխս բաց պիտի մնայ :

— Ինչ վնաս տնի, ըստ Քատրուս. հորդը այնչափ սասակիէ է, որ կրնայ զլսարկդ յափշտակած ըլլաւ :

— Կատակը ձգէ, ըստ Անտրէա, և վերջ տուր :

— Ինչու կեցեր ես, ըստ Քատրուս. կարծեմ թէ զքեզ կեցը նողը ես չեմ :

— Ես է — , ըստ Գավառդանիթի :

Առանց վտանգի սրարսպին դուռը անցան :

Առաջին կողմանի փողոցին առջև Անտրէա իւր ձին կեցոց և Քատրոս գետինը յատկեց :

— Բայց ծառայիս վերաբեռն և զլխարկս մը կը տանիս , ըստ Անտրէա :

— Ա՛չ , պատասխանեց Քատրոս , անշուշտ չես ուզեր որ ես հարբուխ ըլլամշ :

— Բայց ես :

— Դուն երիտասարդ ես , և ես կ'ըսկիմ ծերանալ : Պէնէտէթ թօ , նորէն տեմնայինք — :

Այս խօսքէն ետեւ Քատրոս փողոցին մէջ աներևոյթ եղաւ :

— Ափսոն , ըստ Անտրէա Հառաշանք մը Հանելով , ուրեմն աշխարհիս մէջ մարդս կատարեալ երջանիկ պիտի չկրնայ ըլլամշ — :



## ԳԼՈՒԽ Զ

### ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆԸ

Լուի Ֆե ըստած Հրազդարակին մէջ Երեք երիտասարդները իրարմէ բաժնուեր էին , այսինքն Մորէլ դէոյ ՚ի ծառադիները կար-

կեր էր, Շախօ-Ռունօ՝ դեպ ՚ի թէլ վոլիւսիօնի կամուլջը, և Տըպրէ՝ դեպ ՚ի գետեղը :

Հառանականաբար Մորէլ և Շախօ-Ռունօ իրենց բնակարանը վեւրագարձան, բայց Տըպրէ նոյնը չըրատ . Լուզրի դուռը հասնելով դեպ ՚ի ձախ կողմը զարկաւ, մած արշաւանքով Գարսովէլին տակէն անցաւ, Սէն-Ռոզ փողոցը մտաւ, և Միշուարիէր փողոցէն ելնելով, ու Տանկլարի դուռը հասաւ ճիշդ այն միջոցին որ ու, Վիլքօրի կառքը զինքը և իւր կինը Սէնթ-Օնօրէ արտաքանը թուղելն ետե՛ տիկին Տանկլարը իւր առնը բերելու համար հոն կանք ի՛առնուր :

Տըպրէ, իրը այն տանը ծանօթ մէկը, ամենէն առաջ բակին մէջ ցատկեց, ձիտան երասանակը սպասաւորի մը ձեռքը նետեց, կառքին դռնակին առջեց վազեց տիկին Տանկլարը բնակոնելու, ուրուն իւր թեկը ներկայացնեց զան իւր սեննակը տանելու համար :

Տան դուռը դոյցելով, երբ տիկին Տանկլար և Տըպրէ բակին մէջ մինակ մնացին :

— Ի՞նչ տնկիք, Հէրմին, ըստ Տըպրէ, և ինչու կոմին պատմած այն պատմութեան կամ թէ ըսենք այն առասպելին վրայ անհանդիս եղաք :

— Ըստ որում այս իրիկուն սասարիկ յուղեալ էի, բարեկամ պատմասիսանեց տիկին Տանկլար :

— Բայց ոչ, Հէրմին, այդ չէք կրնար հաւատացրնել ինձ, կրինեց Տըպրէ . Ընդ հակառակն կոմին տունը եկած ժամանակին շատ լաւ վիճակի մէջ էիք : Սայդ է որ ու Տանկլար քիչ մը տիսուր էր, բայց ես աղեկ զիտեմ որ ձեր հոգը չէ անոր այսպէս ըլլաւլը : Միթէ մէկը ձեղ բան մը ըրան, ըսէք, աղեկ զիտեք որ եւ շեմ կրնար երբէք համբերել որ ձեզի դէմ անպատճեն մը ըլլաւլ :

— Կ'ապահովեմ զձեզ որ կը խարսիք, Լիւսիէն, կրինեց տիկին Տանկլար, ըսածներս ստոյդ են . միայն ախրութիւն մը կար վրաս, և այսպիսի չնշին բանի մը վրայ ձեզ խօսելու արժան չդամեցի — :

Ցայտնի էր որ տիկին Տանկլար ենթակայ էր չղային այն յուղ

մանց մէկուն , սրբնց որատնառը կիները շատ անդամ՝ չեն կրնալ՝ հասկընալ , և կամ՝ ինչպէս որ Տըսրէ զուշակեր էր , ափինը այնապիսի գաղտնի շվաթութիւն մը զզացեր էր , զոր չէր ուզեր մէկու յայտնել :

Յանկարծական տիսրութիւնը կանացի կինաց իբր տարբերէն մէկը ըլլալը լաւ ճանչնալով՝ Տըսրէ իւր թախանձանքը աւելի չերկարեց , այլ յարմար առ թի սովասեց կամ նոր հարցման մը և կամ իւրովի խոսառվանութեան մը մէջ զինքը բոնելու :

Տիկինը իւր սենեկին դրան առջև օրիորդ Գորնէլիին հանդիսեցաւ :

Այս օրիորդը ափին Տանկլարի մտերիմ սենեկապանուչին էր :

— Աղջիկս ի՞նչ կ'ընէ , հարցուց անոր ափին Տանկլար :

— Բոլոր իրիկունը իւր ուսմանը պարապելէն ետեւ՝ պառկելու զնաց ; պատասխանեց օրիորդ Գորնէլի :

— Սակայն կարծեմ թէ իւր դաշնամուրին ձայնը կը լսեմ :

— Օրիորդ Լուիլ ա' Արմիլլին է , որ օրիորդին անկունոյ մէջ եղած ժամանակը դաշնամուրը կը նուազէ :

— Շատ աղէկ , ըստ ափին Տանկլար , եկու զիս համոեցրնես — :

Տիկին Տանկլար օրիորդ Գորնէլիին հետ իւր հագուելու դաշիլքը մտաւ , իսկ Տըսրէ մեծ բաղնոցի մը վրայ երկնցաւ :

— Սիրելիդ իմ Պ. Լիւսիէն , ըստ ափին Տանկլար դաշիճին դունէն , միշտ կը զանդատիք որ Եօմէնի ձեզի հետ խօսելու շշառչիր :

— Տիկին , ըստ Լիւսիէն ափինոջ փոքր շնո՞ւ հարցալով , որ անոր տան բարեկամն ըլլալը ճանշնալով , հազար տեսակ քծնութիւններ ընելու սովորութիւն ունէր , անոր այս պահասութիւնը յայտնողը միայն ես չեմ , և կարծեմ անցեալ օր Մորուրֆի խիլ ձեզ կը դանդատէր որ իւր նշանածին բերանէն խօսք մը լսելու կարող չէ :

— Սույդ է , ըստ ափին Տանկլար . բայց կը յուսամ թէ մօտերս իւր քնութիւնը բոլորովին պիտի փոխէ և Եօմէնի ձեր սեհնակը մտնելը պիտի տեսնեք :

— Ենչ կը ըսէք, իմ սենեակը :

— Պաշտօնէին սենեակը ըսէլ կ'ողեմ :

— Բայց ի՞նչ պատճառաւ :

— Օքէրայի թատրոնին համար ձեզմէ յանձնարարութիւն մը ինդրելու . Տշմարիտն ըսելով երած շառթիւնն համար այսպիսի սաստիկ եռամնդ մը տեսած չեմ երբէք . այս աստիճանի անձի մը համար ծաղրելի բան է այս — :

**Տըսպէ ժպտեցաւ :**

— Ըստ աղէկի, ըստ, սեպուհին և ձեր հաճութեամբը թողայ . Իւր քաղձայած յանձնարարութիւնը իւր արժանառութեանը համեմատ կատարելու պիտի ջանանք, թէև անոր տնեցած զեղեցիկ տաղանդը ըստ արժանույն վճարելու . շափ հարաւատ չենք :

— Գնա, Պորոնէլի, ըստ, աիլին Տանկլար, քեզի պէտք չունիմ ալ — :

Օքիորդը աներեցով եղաւ . և վայրին ան մը ետքը տիկին Տանկլար իւր անային վայելուշ զդեստովը դաշլիճէն դուրս ելաւ . և զնաց Լիւսիէնի քովը նստաւ :

Բայց մատածութեանց մէջ ընկղմած ըլլալով մկան իւր սպանիան կամ փոքրիկ շունը սիրել :

Լիւսիէն վայրին ան մը անոր նայեցաւ առանց խօսք մը խօսելու :

— Համարձակ ըսէք, ըստ, Տըսպէ վայրին ան մը ետքը . բան մը կայ անշուշտ որմէ վիրաւորուած էք, այնպէս չէ :

— Ամենեին — , կրկնեց տիկին Տանկլար :

Սակայն իւր սրտի անհանգստութիւնէն ուր ելաւ, և քիչ մը շունչ առնելու նպատակաւ հայելիի մը առջև գնաց և իւր զէմբը անոր մէջ կը նայէր :

— Այս իրիկուն դէմքօ սոսկալի կ'երեի — , ըստ :

Տըսպէ այս վերջին կէ տին վրայ տիկնոջ սիրաը հանդարսեցը նելու համար ժպտելով ուր ելնելու վրայ էր երբ յանկարծ զուռը բացուեցաւ :

Ա, Տանկլար զբան առջև երեցաւ, և Տըսպէ վերստին իւր տեսդը նստաւ :

Տիկին Տանկլար դըան ձայնը առնելով երեսը դարձոց և յայտնէ զարմայմամբ մը իւր ամսւմոյն նայեցաւ :

— Բարի իրիկուն , տիկին , ըստ անդանառը + բարի իրիկուն , ո. Տըպրէ — :

Տիկին Տանկլար անստարակոյս կարծեց թէ սեպուհը յորեկը իւր քերանէն ապրդած քանի մը գառն խօսքերան հատուցաւ մը լնելու փափաքով այս անյուսալի ացյելութիւնը կ'ընէ :

Աւստի իւր գէմքը կախեց , և առանց ամսւմոյն սրատասխանէլու Լիւսիէնի դառնալով :

— Քիչ մը բան կարդա ինձ , ո. Տըպրէ — , ըստ անոր +

Տըպրէ որ 'ի սկզբան այս ացյելութենէն քիչ մը շփոթեր էր , ամիկոտջ այս խօսքին վրայ սիրտը հանդարտեցաւ , և իւր ձեռքը երկնցոց ոսկեպատ գաղտակուրի բերնով թղթահատով մը նշան դրուած զիրքը առնելու :

— Կը ներեք , ըստ անդանառը + այսչափ ուշ արթուն կենաւ ընվ տաստիկ սփառի յադնիք , տիկին + ժամը տան ու մէկն է , և ո. Տըպրէ խիստ հեռու տեղ կը բնակի — :

Տըպրէ ապշեալ մնաց՝ չէ թէ Տանկլարի ձայնը կատարեալ հանագարան և քաղաքանմար ըլլարուն , ոյլ այս հանդարտութեան և քաղաքանմարութեան ներքեւ այն իրիկունը իւր կնոջը կամաց հակառակ վարուելու անուվոր առաջադրութիւն մը կը նշմարէր :

Տիկինն իսկ զարմայած կ'երեէր , և իւր զարմանեքը նայուածքով մը յայսմեց , որ անստարակոյս իւր էրիսն մոտածութիւն մը սփառ պատճառէր , եթէ Տանկլար իւր նայուածքը օրսպրի մը վրայ գարձուցած չըլլար , որուն մէջ արժէթղթոց վերջին դիները կը վնասէր :

Ճետեաբար այս մէզ նայուածքը պարապ տեղը դնաց և իւր առ գեցութիւնը բռնորովին կորսնցուց :

— Պարան Լիւսիէն , ըստ տիկին Տանկլար , ես ամենեին քուն չունիմ , ընդ հակառակն այս իրիկուն հազար տեսակ պատճութիւններ ունիմ ձեղ ընելու + և դուք բոլոր զիշերը ինձ մոխիկ սիստէր եթէ ուսքի վրայ քնանալ իսկ հարկ ըլլայ ձեզ :

— Պատրաստ եմ ձեր հրամանները կատարելու + տիկին , ոյս շռասիսնեց Լիւսիէն հանդարտութեամբ :

— Սիրելիդ իմ Պ. Տըղբէր, ըստ ուղանառորդ, տիկին Տանելքարի յիմարական պատմութիւնները մտիլ ընելով՝ ինքինքնիդ մի բանջէք այս իրիկուն, կ'աղուեմ, վասն զի վազն ալ կրնաք մասի ընել. բայց այս իրիկունը ինձ կը մեպհականեմ, և եթէ կը ներէք ինձ՝ սիփափ զոհեմ զայն կնոջն հետ ծանր խոդրոց վրայ խօսելու. — :

Այս անգամ Հարուածը այնպիսի ուղղութեամբ և հաստատութեամբ ուղղուած էր, որ Լիւսիէնը միանց ամոցն և տիկինը շվարթեց:

Երկուքնին ալ իրարու երես նայեցան և այս յարձակման դէմ իրարմէ օդնութիւն կը խնդրէին. բայց տան տիրոջ անդիմազրելի զօրութիւնը ամեն բանի յաղթեց, և Տանկլար խնդիրը շահեցաւ:

— Բայց մի կարծէք որ զձեզ կը վանաեմ, սիրելիդ իմ Տըղբէր, շարունակեց Տանկլար. ոչ ամեննեին. անակնկալ պարագայ մը կ'ըստիաք դիմ որ այս իրիկուն կնոջն հետ քիչ մը խօսակցիմ: Այս բաղձանքս շատ քիչ անգամ պատրհելուն համար կը յուսամ թէ ինձի սիփափ ներուի: — :

Տըղբէր քանի մը խօսք մրմիննելով՝ բարեեց զանոնք և գուրս եւ լսու գրեթէ պատերան զարնուելով, ինչպէս Մաթան Ապուլի մէջ:

— Ըստակը անհաւատալի բան է, ըստ իւրովի Լիւսիէն երբ դուռը իւր ետեւն զոցուեցաւ. Էրիկները, որոնք մենք ծաղընի կը համարինք, մեր վրայ մեծ առաւելութիւն մը ունին: — :

Լիւսիէնի մեկնելէն ետեւ Տանկլար բազմոցին վրայ իւր տեղը նստաւ, բայց մնացած դիրքը դոցեց, և շան հետ վերստին սկսաւ խաղալ:

Բայց որովհետեւ շունը, որ Տըղբէրի վրայ ունեցած համակրտթիւնը անոր վրայ շունէր, կ'աղէր խածնել զինքը. Տանկլար շան պարագային մը թիւն բռնեց և սենեկին միւս կողմը երկար աթօռի մը վրայ նետեց:

Անտունը ճիշ մը հանեց, բայց իւր տեղը համելով, բարձի մը ետին ամփոփուեցաւ, և այսպիսի անսովոր պատիժի մը վրայ շփառթած՝ լոիլ և անշարժ հոն մնաց:

— Գիտէք, պարոն, ըստ տիկինը առանց խոժուելու, որ քա-

նի կ'երթայ՝ չափը կ'անցընէք : Սովորաբար տմարդի էիք միայն, բայց այս իրիկուն բիրտ էք :

— Ո՛չ, դոչեց տիկին Տանկլար, կրնար մարդ խենթենալ այնպիսի միջոցին։

— Այսյրկեան մը կը յուսայի, բայց նոյն բարեբառութենէն ըստ րի դանուեցայ. այսաւ ամենայնիւ ոյժու և հետեւարար խելքս ամենին կողմը կը հարցընէի ինքնիրենս. «Այս մարդը ի՞նչ ընելու համար զիսկը իւր հետը պիտի տանէր»։

— Բայց արդէն ըսկը, կրկնեց տիկին Տանկլար, ապացոյց մը ընենալու համար։

— Ոչ, տիկին, անկարելի է. զիսկ մը տարի մը չկրնար ոպա հել մարդ. գատառորի մը կը ցուցընէ, և իւր տեղը կը յանձնէ. բայց այս ըստածներէս և ոչ մէկը պատահեցաւ։

— Աւրեմն ետքը . . . , հարցոց Հերմին սրտի բարախմամբ : — Ետքը, մեզի համար առելի սոսկալի, առելի աղջտալի է առելի սարսափելի բան մը կայ . դոցէ մանուկը կենդանի էր, և մարդասպանը տղամեց զան : —

Տիկին Տանկլար սոսկալի ձայն մը հանեց, և Ակլլրֆօրի ձեռքերը բռնելով,

— Զաւակս կենդանի էր, դոչեց, դուք զաւակս կենդանի թաղցիք, պարոն : Անոր մեռած ըլլալը սասց շեկը զիտեր, և թաղցիք, ահ . . . : —

Տիկին Տանկլար ոսք ելեր թագաւորի գործակալին առջե կանց ներ էր, և դրեթէ սպառնալոք անոր դաստաները իւր քնքուշ ձեռօքը կը սեղմէր :

— Ի՞նչ զիտնամ . Ենթադրութիւն է ըրածս, պատասխանեց Ակլլրֆօր այնպիսի հաստատ նայուածքով մը, որ կը ցուցընէր թէ այն տատիճան զօրաւոր մարդ մը յուսահատութեան և յիմարութեան ատհմանները անցնելու մօտեցեր էր :

— Ո՛չ, զաւակս, իմ խեղջ զաւակս : — դոչեց տիկինը վերստին իւր աթուին վրայ նստելով և մաշկինակովը իւր հառաջանքը զսպելով :

Ակլլրֆօր ինքնինքին եկաւ, և հասկըցաւ որ իւր զիսին վրայ կուտուած մայրական փոթորիկէն ազատելու համար՝ պէտք էր իւր զգացած իրկի զը տիկին Տանկլարի ալ զզացընել :

— Աւրեմն կը հասկընաք որ եթէ այս ըստածս չիշդէ, ըստ ոսք ելնելով և տիկինոչ մօտենալով առելի ցած ձայնով խօսելու համար, երկուքնս ալ կորսուած ենք . այս մանուկը կենդանի է, մէկը կայ որ անոր կենդանի ըլլալը զիտէ, մէկը կայ որ մեր գաղտնիքը իմացած է . և որովհետև Մօնթէ-Քրիսթօ հողին տակէն հանուած մանկան մը վրայ մեր առջե կը խօսէր, ան է որ մեր զաղանիքը իմացած է :

— Ո՛վ Աստուած, ո՛վ արքար Աստուած, ո՛վ վրէմինդիր Աստուած —, մրմէջեց տիկին Տանկլար :

Ակլլրֆօր զողցես մւնքելով մը անոր պատասխանեց :

— Բայց իմ զաւակս, իմ զաւակս, ոպարոն, կրկնեց յամառ մայրը :

— Ո՛՛ , ո՞րչափ վիճուեցի զան , կրկնեց Ալիլֆօր . ո՞րչափ անդամ անքան մնացած երկար զիշերներս կանչեցի զան . ո՞րչափ անդամ՝ կը փափաքէի թագաւորական . հարսաւութիւն մ'ունենալ , որովէս զի անոր ջրութեամբը միլիսն մը մարդոցմէ միլիսնաւոր դադունիք ստանամ , և անսից դաղնեացը մէջ խմ դանեմ : Ալերջապէս օր մը որ զրեթէ հարիւրերորդ անդամն էր որ բահը ձեռքս առած էի , ինքնիրենս կը հարցընէի թէ Քորսիացին այն մանուկը առնելով Բնչ կրնար ընել , փախչողի մը համար մանուկ մը ներդութիւն է . զոցէ , ըստ ինքնիրենս , տեսնելով որ կենդանի է , դեռը նետած է զան :

— Ո՛՛ , անկարելի է , դոչեց տիկին Տանկլար . վրէժինդրութեամբ մարդ մը կըսպաննուի , բայց սրտի հանդարտութեան մէջ մանուկ մը չխեղդուի իր :

— Մտածեցի որ զոցէ որբանոցը յանձնած էր , շարունակեց Ալիլֆօր :

— Ո՛՛ , այն , այն , դոչեց տիկին Տանկլար , զաւակս հնէ անշուշտ , սրարոն :

— Ես ալ որբանոցը վաղեցի և իմացայ որ նոյն զիշերը , այս ինքն սեպտեմբերի 20ին մանուկ մը բերեր էին հն , զոր զիտամբ սպատած բարակ կտաւով մը փաթթեր էին . կտաւին կէսին վրայ սեպուհի զինանշանին կէսը և Հ զիրը կը դանուէր :

— Ո՛՛ , իմ զաւակս է ան , դոչեց տիկին Տանկլար . բոլոր Ճերմկեղներս նոյն նշանները կը կրեին . քանզի սրարոն տը Նարկան սեպուհ էր և իմ անունս տը Հէրմին է : Ընորհակալ եմ , ով Տէր , որ զաւակս մնոած չէր :

— Ոչ , մնոած չէր :

— Եւ գուք կը համարձակիք այդ խօսքը ինձ ըսել . ձեր բերանովը այդ խօսքը կըսէք և չէք վախնար որ ուրախութենէօ սղիտի մացընէք զիս , սրարոն , ուր է , ըսէք , ուր է իմ զաւակս — :

Ալիլֆօր ուսերը թոթվեց :

— Ես զիտեմ , ըստա , և կը կարծէք որ եթէ զիտայի բոլոր այս մանրամասն սպատմութիւնը կ'ընէի ձեզ , ինչպէս որ թափքերայակ մը կամ վիորասան մը սպափքութիւն ունի ընել . ոչ , ախտու :

շեմ զիաեր : Վեց ամսուան հասակին մէ ջ կին մը ներկայացեր է և կտաւին միւս կտորը ցոցընելով մանուկը ուղեր է : Այն կինը օրինաց պահանջած ամսն ապահովութիւնները տալով, մանուկը ընդուներ է :

— Բայց սէտք էիր այն կիոջ վրայ տեղիկանալ, սէտք էիր դաւանլ զան :

— Եւ ինչ բանի կը կարծէք որ ես զբաղած ըլլամ, տիկին : Դատաստանական ծանր քննութիւն մը պատճառելով, ստորիկանութեան ամենէն խորամաննկ լրտեսները, ամենէն յաջող գործակալները զան գտնելու զբաղեցուցի : Այնչեւ Շալն անոր հետքը դասն, բայց Շալնէն անդին կորսուեր է :

— Կորսուեր է :

— Այն, յաւիտեանս չդանուելու համար — :

Տիկին Տանկլար այս պատճութեան ամսն մէկ պարագաները հառաջանիքով մը, արտասուրով մը և զարմանիքով մը մափկ կ'ընէր :

— Ասոնցմէ զատ ուրիշ բան չըրիբ, ըստ, այդշափով դո՞չ եղաք :

— Ո՛չ, ոչ, ըստ Վիլլֆօր, զան վնտուելէն, անոր վրայ տեղեկութիւն հարցընելէն և խուզարկութիւններ ընելէն երգէք չդադրեցայ : Սակայն՝ երկու երեք տարիէ ՚ի վեր քիչմ'անհոգ կեցեր էի, բայց այսօր առաջուանէ աւելի յարատես թեամբ և աւելի յամառութեամբ խուզարկութիւններս վերսախն պիսի սկսիմ, և պիտի յաջողիմ : Քանզի այսուհեան խիզճը չէ զիս զրդողը այլ երկիւղը :

— Բայց, կրկնեց տիկին Տանկլար, Ածնթէ-Քրիսթոյ կոմը մեր գործին վրայ բան մը չզիտեր, եթէ ոչ մը ընկերութեան մէջ մանել պիտի չուզէր :

— Ո՛չ, մարդիկ խիստ չարամիտ են, ըստ Վիլլֆօր, խօսեցած ժամանակը անոր աչքը դիտեցիք :

— Ոչ :

— Բայց ուրիշ անգամ աղէկ դիտած չէք :

— Այն, բայց միայն անհեթեռութիւն մը նշմարած եմ : Ամիայն զարմանիքս տարաւ որ մեղ տուած այն համադամ կերակութերուն և ոչ մէկուն ձեռք դպցուց :

— Այս , այս , ես ալ զիտացի . եթէ հիմա զիտացածս տուջէն զիտացած ըլլայի , ես ալ ամենեին կերակուրի մը ձեռք պիտի չդպցը նէի . պիտի կարծէի թէ զմղ թունաւորել կ'ուղէ :

— Եւ պիտի սխալէիք , յայտնի տեսանք :

— Այս , անտարակոյս . բայց հաւատայէք ինձ , տիկին , այս մարդը ուրիշ զիտաւորութիւններ ունի . ահա այս է ուատճառը որ ուղցի զնեղ տեսնել , ձեզի հօսիլ , զնեղ ամեն մարդոցմէն և զլաւուորաբար անորմէ զդուշացնել : Ըսէք ինձ , շարունակեց Վիլլիքօր խոր նայուածքը տիկնոջ վրայ խորունկ յարելով , մեր յաւրաբերութեանց վրայ ամենն ին մէ կու խօսեցած չէք :

— Ամենեին :

— Միաբար կը հասկընա՞մ անշուշտ , կրկնեց Վիլլիքօր սիրալիք կերպով . ներեցէք կրկին հարցմանս , աշխարհիս մէջ մէ կը չգիտեր , այնորէ ու չէ :

— Այս , այս , աղէկ կը հասկընամ , ըստ տիկին Տանկլար կարմրելով . կ'երգնում որ մէ կու ըստած չեմ :

— Յորեկ ձեր ըրած զործերը իրիկունը զրի առնելու սովորութիւն չտնիք . օրադիր չէք բռներ :

— Ոչ , ափսոն , կեանքս ունայնութեամբ կ'անյնի . ես իսկ կը մասնամ դայն :

— Բարձր ձայնով կ'երազէք արդեօք :

— Քոնս խօստ թեթև է . զուք չէք յիշեր — :

Տիկնոջ երեսը շառադնեցաւ , իսկ Վիլլիքօրի զէմբը դեղնութիւնութիւնը պատեց :

— Ստոյդ է , ըստ Վիլլիքօր հազիւ լսելի ձայնով մը :

— Վիլլիքապէս :

— Վերջապէս ես զիտամ ընելիքս . ութ օրէն Մօնթէ-Քըլիս թոյի հիլ ըլլալը , ուրիշ դալը , ուր երթալը և խոր պարափին մէջ հաղին տակէն դուրս հանուած մանկան վրայ ինչ նպատական խօսիլը պիտի իմանամ — :

Վիլլիքօր այս խօսքերը այնպիսի ձայնով մը արտասանեց , որմէ Մօնթէ-Քըլիս պիտի սարսուար եթէ լսէր դայն :

Թագաւորի զործակալը այս խօսքերէն ետև տիկնոջ ձեռքը սեղ :

անց , (իսկ Հերքին դժկամովեամբ անորը կը բռնէք) , և յարդա-  
նօք մինչեւ դուրը անոր ընկերացաւ :

Տիկին Տանկլար ուրիշ կառք մը բռնեց , ու մինչեւ կամուրջը  
զնաց , որուն միւս կաղմը իւր կառքն ու կառավարը զտաւ , որ սօրա-  
սելն ձանձրահալով իւր նստարանին վրայ հանգարառովեամբ կը  
քնանար :



### ԳԼՈՒԽ Թ

### ԱՐՍՈՎՆԱՅԻՆ ՊԱՐԱՀԱԿԱՆ ՄՐ

“Այս օրը՝ այն ժամուն որ տիկին Տանկլար թագաւորի գործա-  
կալին դահլիճին մէ ջ խորհրդի նստած էր , Ճամբորդութեան կառք  
մը Հելտէր փողոցը համելով և թիւ 27 տունը մանելով բակին  
մէ ջ կեցաւ :

Անմիջապէս ետքը՝ “դռնակը բացուեցաւ . և տիկին ուր Առսէրի  
իւր որդւոյն թեին կռթալով կառավարական իշխանութեան իջաւ :

Ալպէր Մէքըսէակոը իւր սենեակը տանելէն անմիջապէ և ետքը կառքը հեծաւ և Ծանդ-Էլիղէ դնաց Մօնթէ-Քրիսթոյ կոմօին տառնը :

Կոմօր իւր սովորական ժոյիտովքը անոր ընդունելու թիւն տուաւ : Զարմանալի բան . այս մարդուն որտին կամ մարին մէ ջ ամենեւ-ին մէկը համակրութիւն ստացած չէր երկեր :

Անոնք որ անոր մաերմութիւնը շահէլու կը ջանային , առջենին սպաս մը կը կանէին :

Մորսէրփ , որ բազուկները բացած դէպ ՚ի անոր կը վաղէր , զան տեսնելով իւր բազուկները իջեցուց և միայն իւր ձեռքը տալու բա-ռականացաւ , թէ և կոմօր բարեկամական մոխտ մը կը ձեռցընէր , և անոր ձեռքը բանեց առանց զայն սեղմելու , ինչպէս որ միշտ իւր սովորութիւնն էր :

— Ահա եկայ , սիրելի կոմն , ըստ Ալպէր :

— Բարի եկաք :

— Հաղիւ ժամ մը կայ Բարիդ համեիլո :

— Տիէրէն :

— Թրէրօրէն :

— Այս , ասոյդ է :

— Եւ ամենէն առաջ ձեզ այցելութիւն ընելու եկայ :

— Զեր ազնուութիւնն է , ըստ կոմնը անտարբերութեամբ :

— Բուք ուրեմն , բնչ լուր ունիք :

— Ինծի կը հարցընէք , օտարականի մը :

— Այսինքն ըսել կ'ուզեմ թէ ինծի համար բնչ ըրիք :

— Բայց յանձնարարութիւնն մը ըրած էիք ինձ , ըստ Մօնթէ-Քրիսթո անհանգստութիւն ձեռցընելով :

— Անտարբերութիւնն մը ձեռցընէք , կ'աղաշեմ , ըստ Ալպէր . կըսեն թէ համակիր զցացմանց համար անջրաբետ չկայ . հաւասա-ցէք որ թրէրօր ելեկտրական ցնցում մը զցացի , և իմացայ որ եթէ ինձ համար աշխատած ալ չէք , գոնէ դիս մաքերնիդ բե-րած էք :

— Կարելի է , ըստ Մօնթէ-Քրիսթո , և իրօք դձեզ միշեցի . սակայն մագնիսական հոսանքը , որուն հաղորդիչն էի , իմ կամքէս կախեալ չէր :

- Պատմեցիք ուրեմն այդ բանը, կ'աղաւեմ:
- Շատ աղէկ. ոլ. Տանկլար իմ տունս ճաշեց:
- Գիտեմ, քանզի անոր ներկայութենէն հեռու դանաւելու համար մայրս և ես բարիղլն մեկնեցանք:
- Բայց ոլ. Անտրէա Գավալլանթին ալ անոր սեղանակից եք:
- Եեր Խառլացի իշխանազմնը:
- Զափաղանցութիւն չընենք. ոլ. Անարէա ինքնինքը միայն դեպակում կ'անուանէ:
- Ինքինքը դերակում կ'անուանէ կ'ըսէք:
- Այս:
- Ուրեմն դերակում չէ:
- Ե՛ս, ի՞նչ զիանամ. ինքը այսպէս կ'անուանէ, ես ալ այնպէս կ'անուանեմ, ամեն մարդ ալ նոյն տիտղոսը կու տայ անոր. այս կերպով ունեցած շատապուիր:
- Ե՞նչ զարմանալի մարդ եք. ետքը:
- Ետքը, ի՞նչ ըսել կ'ուզէք:
- Ոլ. Տանկլար ձեր տունը ճաշեց ըսիք:
- Այս:
- Դերակում Անտրէա Գավալլանթիին հետ:
- Այս, դերակում Անտրէա Գավալլանթիին, իւր մարքեղ հօքը, տիկին Տանկլարի, ոլ. և տիկին Վիլլֆօրի հետ, որոնք առնիւ անձեր են. ատոնցմէ զատ կային նաև ոլ. Տըպրէ, Մարսիմիւթէն Մորել. ովկ կար ուրիշ. . . կեցիք. . . այս, միտքս եւ կառ, և ոլ. Շաթօ-Ռընօն:
- Իմ խօսքս ըրբն:
- Ամենենին:
- Իմ խօսքս չընելով աւելի դէշ ըրեր են:
- Ինչո՞ւ համար. կարծեմ թէ զձեզ չյիշելով ձեր բաղձանաց համեմատ վարուեցան:
- Սիրելիդ իմ կրօն, իմ վրայօքս չխօսելնոն պատճառը զիս մոքերնէն չհանելնին է, որ աւելի կը յուահատեցընէ զիս:
- Ինչո՞ւ հոգերնիդ կ'ընէք, երբ օրիորդ Տանկլար զձեզ մարերնէն չհանողներուն մէջ չէր զտնուեր: Բայց ստոյդ է որ կընաց ան ալ իւր տան մէջ զձեզ յիշել:

— Այդ կողմանէ բռլորովին անհոգ եմ, և կամ եթէ դիմ միաւ քը բերէ, անապարակցո իմ զինքը միաբար բերած կերպով ողիստի բԱլայ :

— Այդ Բնչ որտառուչ համակրութիւն է, ըստ կոմսը . ու բեմն դոք զիրար կատէք :

— Մտիկ ըրէք, ըստ Մորուր բֆ . եթէ օրիորդ Տանկլար այնպիսի կին մը ըլլար, որոն համար շափազանց սէր զզայի, և մեր երկու ընտանեաց մէջ որոշեալ ամումնական դաշնոց հաստացումը ընէր դոնէ ըստ երեսոթից, ըսելու խօսք պիաբ չունենայի : Կարճ ըսեմ . կարծեմ թէ օրիորդ Տանկլար կրնայ աղնիւ սիրուհի մը ըլլալ, բայց ոչ կին մը :

— Ուրեմն այդ կերոյ կը մտածէք ձեր ապառնի կնոջ վրայօք, ըստ Մօնթէ-Քրիսթօ ծիծառելով :

— Ո՛չ, այո՛, կը խառապվանիմ որ քիչ մը բիրտ բաց չիշտ են ըրած խորհրդածութիւններու : Եւ որովհետեւ անկարելի է այս երազէն իրողութիւն մը հանել, չեմ կարծեր որ օրիորդ Տանկլար կարենայ իմ կինս ըլլալ, այսինքն ինծի հետ ազրի, իմ տանս մէջ խորհի, քովս երդէ, ինձմէ տասը քայլ հեռու ոտանաւորներ և երած շառութիւններ յօրինէ, և այն բոլոր կենացս մէջ : Ոչ, սիրելիդ իմ կոմս, սիրուհի մը մարդս իրնայ թօղուլ, բայց իւր կինը մշանջենաւորապէտ պիաբ պահէ թէ իւր քայլը ըլլայ և թէ իրմէ հեռու : Հետեւարար օրիորդ Տանկլարը մշանջենաւորապէտ պահէ լլու տովկաբի բան մ'է, եթէ ինձմէ հեռու ալ ըլլայ :

— Ընտրողութիւննիդ դժուար է, դերակոմն :

— Այո՛, վասն զի շատ անգամ անկարելի բանի մը կը մտածեմ :

— Բնչ բանի :

— Հօրս դտած կնոջը նման ինծի կին մը դտնելու . — :

Մօնթէ-Քրիսթօի զայնը նետեց, և Ալոդէրի երեսը նայեցաւ՝ յնտիր առքանակիներու հետ խաղալով, որոնց զսպանակներուն ձայնը յանախ կը հանէր :

— Ուրեմն ձեր հայրը խիստ երջանիկ երած է, ըստ :

— Մօրս վրայ արդէն խօսեցած եմ ձեզ, պարոն կամս . երկա

նային հրեշտակ մ'է ան . զեղեցիկ , հաճարեղ և ազնուասիրաց կիր մ'է : Միասնակամբորդոթիւն ըրինք , որ և է զաւիի մը իւր մօրը հետ ընկերունալը կամ անոր համելի ըլլալու և կամ բռնադատեալ ըլլալուն կ'ընէ . բայց ես չորս օր անոր հետ զլուխ զլուխի տուի , հաւատացիք որ աւելի դոհ եղայ անոր ընկերութիւնէն քան եթէ Մարտ թագուհոյն կամ Տիանիքային հետ համբորդութիւն ըրած ըլլայի :

— Դիմելք որ այս խօսքերը լսողները կը յուսահատեցընէք + քարեկամ , և ամսուրի միալու մծ փափաք կը պատճառէք :

— Ահա այս է պատճառը , կրկնեց Մորսէրիք , որ հող չեմ ըներ օրիորդ Տանկլարի հետ ամուսնանալ դիտնալով որ աշխարհիս մէջ այնակ ո կատարեալ կին մը կը դանուի : Երբեմն դիտած էք որ մեր ինքնասիրութիւնը բնչպէ ո բոլոր մեր ունեցածները սրածառ զոյներով կը ներկայացընէ : Մարլէի կամ Գուէնի խանութենքը փայլող ադամանդը երբ մենք կը դնենք՝ աւելի ընտիր կ'երեւի . բայց երբ յայտնի տեսնենք որ աւելի մագտուր ադամանդ մը կը դանուի , և մենք դատապարտուած ըլլանք այն ստորնադոյն ադամանդը մշտնջենաւորապէ ո պահելու , կը հասկնաբ անշուշտ թե ուրչափ մծ նեղութիւն պիստի պաճառէ մնդ :

— Ունայնութիւն + մբմնջեց կոմոզ :

— Այս սպատճառաւ ո բախութենէս ովհանի թռչիմ այն օրը երբ օրիորդ Տանկլար տեսնէ թէ ես չնչին արարած մ'նմ , և իւր միւններուն փօխարէն հաղիւ հարիւրական հալար վրանք ունիմ — \*

Մօնթէ-Քրիսթօ Ժպտեցաւ :

— Ես ուրիշ բան մոտածեր էի + շարունակեց Ալլէր . Գրանդ տարօրինակ բաները կը սիրէ , ուղեցի որ զինքը օրիորդ Տանկլարին սիրահարեցընեմ . խիստ յանկուցիչ ոձով անոր դրած չորս նամակներուն Գրանդ առանց շփոթելու այսպէս պատասխանեց ինձ .

\*Ստորդ է որ ես արօրինակ մէկն եմ , բայց տուած խօսքս ետ առնելու չափ չեմ :

— Բարեկամական անձնու իրութիւնն ալ այսպէս ըլլալ ովէ տք է որ կ'ուզէք ուրիշին տալ այն կինը , զոր դուք իր սիրուհի կ'ընդունիք — \*

Ալպէր ժողակցաւ :

— Աղէ կ միաբու եկաւ , շարունակեց երիտասարդը , պարոն Գրանդ մօսերս սիմտի գայ . բայց ձեր հողը չէ , կարծեմ չէք սիրելը զան :

— Ես , ըստ Մօնթէ-Քրիսթօ , և ի՞նչ բանի մէջ դիմեցիք որ ես ու . Գրանդը չէմ սիրեք , սիրելիդ իմ գերակում : Ես ամեն մարդ կը սիրեմ , ինչպէս որ Աստուած պատոիրած է մեր ընկերը սիրելու , այսինքն իրը քրիստոնեայ . այսու ամենայնեւ կարելի է այնպիսի անձեւը զանուին , որոնք ինձ ատելի ըլլան : Դաւնանց ու . Գրանդ ա՛հրինէին . մօսերս սիմտի գայ կ'ըսէք :

— Այս , ու . Ակլլիքօր զինքը կը հանէք . քանդի ինչու կ'երեք՝ օրիորդ Աւանդինը ամուսնացընելու համար մոլեզներ է , ինչպէս և Տանկլար՝ օրիորդ Էօմէնին ամուսնացընելու : Ասուզիւ՝ կ'երեք թէ չափահաս աղջիկներ ունեցաղ հարց վիճակը խիստ անտանելի է . աղջիկնին առանց ամուսնոյ մասը իրենց տեսնդ կը պատճառէ և և մինչև որ զանոնք ձեռքէ հանեն՝ երակնին վայրինի մը մէջ ինչ նըստն անդամ կը զարիք :

— Բայց ու . ա՛հրինէն ձեզի շնմանիր . իւր գործը համբերութեամբ ՚ի զլուս կը հանէ :

— Ոչ միայն կը համբերէ , այլ և կարևորութիւն կու տայ իւր դործին . սպիտակ փողկապներ կը կապուի , և ու . Ակլլիքօրի ընտանեաց վրայ ակնած անօր կը խօսի :

— Արժանառու է , այնպէս չէ՞ :

— Կարծեմ . ու . աը Ակլլիքօր խիստ բայց արդարակորուլ մարդ մը ձանչցուած է միշտ :

— Ահա զոնէ այս մարդուն վրայ ու . Տանկլարի ըրածնուդ պէս գէշ չէք խօսիր :

— Պատճառու դուցէ իւր աղջիան հետ ամուսնացըն . ստիպուած չըլլալու է , պատասխանեց Ալպէր ծիծաղելով :

— Ստուդիւ , սիրելի սրաբոն , ըստ Մօնթէ-Քրիսթօ , միայն ինքն զինքնիդ հաւած էք :

— Ես :

— Այս , դուք . բայց դլամիկ մը առէք :

— Մեծ հաճութեամբ . բայց ըաէք ինչո՞ւ զիս անձնահամար կը կոչէք :

— Աւան զի կը տեսնեմ՝ որ օքնորդ Տանկլարի հետ չամուսնաւնալու համար ամեն ջանք ՚ի դործ կը դնեք և դուք ձ' զի հետ կը մրցիք : Ե՛՛ Հ , թողոցէք որ դործերը ինքնին յառաջանան , դոցէ խօսքը ետ առնելը առաջ ձեր կողմէ շըլլար :

— Կ՞նչ կ'ըսէք , ըստու Ալովէր աշքերը բանալով :

— Ե՛՛ Հ , անսարակայս , պարսն գերակումն , չեն կընար բռնի ձեր դլունիր երկու դրանց մէջ ճղմել . առանց կատակի բաէք ինձ , կրինեց Մօնթէ-Քրիսթօ իւր ձայնը փոխն լով , դործը տրել կը փափարէք :

— Սրառվս հարիւր հազար ֆրանք կու տայի :

— Ուրեմն որոսխցիք . Պ. Տանկլար ալ նոյն նազատական կրինինը տալու պատրաստ է :

— Արդեօք Ճշմարին է այդ երջանկութիւնը , ըստու Ալովէր , ուրուն ճակախն վրայ թէ և աննշմարելի ամսա մը պատմեց : Ուրեմն , պիրելիդ իմ կոսն , Պ. Տանկլար այսպէս ընելուն պատճառներ ունի :

— Ա՛՛ Հ , դռնէ հիմա ինքնասիրութիւնիդ կը տեսնեմ , սյդովէս ըլլալ պէտք է . ուրիշին ինքնասիրութիւնը տառապարի հարուածով վիրառորել կ'ուզէք , դռնէ առեղողի ձեր ինքնասիրութիւնը ծակու ածճամանակ պառացէք :

— Աչ , բայց կարծեմ թէ Պ. Տանկլար . . . :

— Ծատ դոհ պիտի ըլլար ձեղմէ , այնպէս չէ . բայց ամեն մօրդը զիսէ որ Պ. Տանկլար ամեննեին լաւ ընարուղութիւն չունի , և ուելի դոհ կ'ըլլայ իւր աղջիկը ուրիշի տալու :

— Որո՞ւ :

— Զեմ՞ դիտեր . դուք հարցուցէք , տեղեկացէք , անոր ընթացքը քննեցէք և ձեր օգտին համեմատ վարուեցէք :

— Ծատ աղելի . հիմա մտիկ ըրէք , մայրս . . . Աչ , սիսալեցայ ժայրս պարահանդէս մը տալու միտք ունի :

— Այս եղանակիս մէջ պարահանդէս մը :

— Նոր սովորութիւն մ'է ամառուան մէջ պարահանդէս տալը :

— Եթէ սովորութիւն իսկ չըլլայ , կոմուն հին կրնայ ընել , բառական է որ ուղէ :

- Այս պարահանդէսը բոլորովին ազնուապետական պիտի բլժ  
ըսց , յուշիսի մէջ Բարիկ մնացողները ճշմարիտ Բարիկեաններ են ,  
ու . Գալախանթիները հրատիրելու յանձն կ'առնո՞ւք :
- Երբ տեղի պիտի ունենայ ձեր պարահանդէսը :
- Շաբաթ՝ օրը :
- Ո . Գալախանթիի հայրը մինչև շաբաթ պիտի մնինի :
- Բայց իւր որդին անշուշտ պիտի մնայ . յանձնառու կ'ըլլագ  
զան հետերնիդ բերելու :
- Մտիկ բրեք , գերակուս , ես չեմ ճանչնար զան :
- Զեք ճանչնար :
- Ոչ , երեք կամ չորս օր տուած անդամ մը տեսած եմ զին-  
քը , և ամենեին երաշխառոր չեմ կրնար ըլլալ անոր համար :
- Բայց դուք ձեր տունը ընդունեցիք զան :
- Ոմ հրատիրելս մի նայիք . բարի արքայ մը յանձնարարու-  
թիւն ըրած էր ինձ , որ զոցէ ինքն ալ սխալած ըլլայ : Ուզրակի  
դուք հրատիրեցէք , բայց ինձ մի ըսէք որ ձեզ ներկայացընեմ զին-  
քը . եթէ այնպէս հանդիպի որ օրիորդ Տանկլարի հետ ամունա-  
նայ , պիտի կարծէք թէ ես ըրի նոյն միջնորդութիւնը և պիտի ու-  
զէք հետս կոռուիլ . մանաւանդ որ չեմ պիտեր թէ ես ալ պիտի  
զամ :
- Ո՞ւք :
- Պարտհանդէսին :
- Ինչու պիտի չգաք :
- Նախ որ տակաւին զիս չհրատիրեցիք :
- Դիտմամբ եկած եմ ձեր հրաւերը անձամբ բերելու . համար :
- Կը ճանչնամ ձեր ազնուտ թիւնը . բայց զոցէ արգելք մը  
ունենամ :
- Երբ հիմա խօսք մը ըսեմ , կը յուսամ որ ամեն արգելքնե-  
րը զոհելու պիտի հանիք :
- Ըստ ի՞ւ առաջէ որ զաք :
- Տիկին ալ Մորուերի կոմսուհին , կրինեց Աօնթէ-Բրինթօ սալո-  
ռուալու :

— Ա՛Հ , կոմն , կ'իմացընեմ որ տիկինն առ Մորուրվ համարձակ  
չետս կը խօսի . և եթէ ձեր սրախն մէջ չէք զդար տին համակրատ  
կան զդացումները , որոյ վրայ քիչ մը առաջ կը խօսէի , սպիտի ըս-  
տեմ որ այն զդացումներէն բոլորովին զրկուած էք . վասն զի չնրէ  
օր շարունակ մինակ ձեր վրայօք խօսեցանք :

— Ի՞մ վրայօքն . ճշմարիտ կը տարտաւորէք զիս :

— Մտիկ ըրէք , քանի որ կենդանի առակ մ'էք , հարկաւ ձեր  
վրայ միշտ սպիտի խօսուի :

— Ձեր մօրը համար ալ առակ մը եղած եմ . ստուգիւ զինքը  
խիստ մասցի ճանշնալովս չէի կարծեր որ երեւակայական այսպիսի  
խստորմանց մէջ զտնուի :

— Ձէ թէ միայն մօրս այլ և ամենուն համար առակ մը եղած  
էք , այնպիսի հանելուկ մը , որ մէկը չկրնար լուծել :

Մայրս միայն կը հարցընէ թէ ինչպէս կարելի է որ այդ որէս երիշ-  
անասարդ մնացած ըլլաք : Կ . . . կոմու հին զնեղ լորա Ռիւթվէնը  
կը կարծէր , բայց մայրս ներքնատէս զնեղ Գալիսովմըօն կամ  
Սէն-ժէրմէն կոմոր կը համարի : Երբ տիկին Մորուրվը տեսնելու  
դաք , իւր կարծեացը մէջ հաստատեցէք զինքը : Յաշողելու գժուած  
բութիւն շունիք , ըստ որում մէկուն փիլիսոփայական քարը և միւս  
սին հանձնարն ունիք :

— Ծնորհակալ եմ այս բանը ինձ իմացընելնուդ համար , բատ-  
կոմոր ժպտելով . ամեն ենթադրովեանց համեմատ վարուելու ողիւ-  
տի ջանամ :

— Ուրեմն շարալը օրը սիրու դազ :

— Քանի որ տիկինն առ Մորուրվ կ'աղտչէ :

— Ազնիւ մարդ մ'էք :

— Պ. Տամկլար ալ սիրու դայ :

— Ո՛Հ , արդէն եռակի հրաւերներ ընդունեց ան : Հայրս յանձ  
նառու եղած է զան հրաւիրելու : Ալիսի ջանանք պ. առ Ակիլիվորն  
այլ ընդունելու , բայց չենք յուսար որ դայ :

— Ամենեին յուսահատիլ ովէաք չէ : կ'լուն առակը :

— Կը սկարեէք , միրելի կուս :

— Կ'ու :

— Այս, դուք բնշո՞ւ կը զարմանաք :

— Ա՛հ, քառասունը անցընելէն ետև . . . : Ոչ, չեմ պարեր, բայց ուրիշներուն պարելը տեսնել կը սիրեմ: Տիկին առ Առաքրի ալ կը պարել:

— Ամենեին . ուրեմն միատեղ կը խօսակցիք . քանզի ձեզի հետ խօսելու մեծ փափաք ունի:

— Իրա՞ւ :

— Ճշմարիտ կ'ըսեմ որ առաջին անգամն է որ մայրս կ'ուղէ հետաքրքրութեամբ մարդու մը հետ խօսիլ — :

Ալոէր զլխարկը առնելով սուք ելաւ . կոմսը մինչեւ դուռը առնոր ընկերացաւ :

— Մէկ բանի համար ինքզինքս կը մեղադրեմ, ըստ կոմսը սահմուխին վերի կողմը կեցընելով զան :

— Ի՞նչ բանի համար :

— Անխոչեմութիւն ըրի, պէտք չէի Պ. Տանկլարի վրայ ձեզի այնորեւ խօսիլ :

— Ընդ հակոռակին պէտք էք խօսիլ, և միշտ խօսեցէք բայց նոյն կերպով :

— Ծառ աղէկ, կը վստահացլնեք զիս . Պ. ա'կինէն Երբ պիտի զայ :

— Առ առառելն հինգ կամ վեց օրէն :

— Եւ երբ պիտի ամուսնանայ :

— Պ. և ամիկին Աէն-Մէրանի համեմելուն պէս :

— Երբ Բարիզ հասնի՝ կը խնդրեմ որ իմ տունս բերեք զինքը . թէեւ քիչ մը առաջ դուք կ'ըսէիք թէ ես չեմ սիրեր զան, բայց ես կ'իմացընեմ ձեզ որ շատ ուրախ պիտի ըլլամ զինքը տեսնելով :

— Ծառ աղէկ, ձեր հրամանները պիտի կատարուին, պարոն :


— Նորէն տեսնուինք :

— Ծարաթ օրը, բոլորովին ապահով ըլլամք, այնպէս չէ :

— Կը հարցընելը, խօսք տուի ձեզ — :

Կոմսը ձեռքովը բարեկ լով Ալոէրի ետևէն նայեցաւ . Երբ երիտասարդը կառքը հեծաւ, կոմսը երեսը դարձոց և իւր ետքն պէրթուչիօն տեսնելով :

- Ի՞նչ լուր , հարցուց անոր :
- Տիկինը պալատը զայցեր է , ովաստավանեց զործակատարը :
- Երկար ատեն հոն մնացե՞ր է :
- Մէկ ու կէս ժամ :
- Անկէ իւր տունը վերադարձեր է :
- Ուղղակի :
- Շատ աղէկ . սիրելիդ իմ Պ. Պէրթուչիօ . Հիմա կընաս Նորմանտիա երթալ և տեսնել թէ այն ըսած փոքր կալուածս սիրտի կընաս զտնել — :
- Պէրթուչիօ խոնարհութիւն մը ըրաւ , և որովհետեւ կումնին հրամանները իւր բաղձանացը համաձայն էին , նոյն իրիկունը մեկնեցաւ :



### ԳԼՈՒԽ Ժ

#### ՏԵՂԵԿԱԲԻԹԻՒՆԵՐԸ

Պ. տը Ալլռֆօր տիկին Տանկլարի տուած խօսքին վրայ կեցաւ . քանզի գլխաւորաբար ինքն ալ կ'ուղէր զիսնալ թէ Մօնթէ -Քրիսթոյ կամնը բնչ կերպով կարող եղեր էր Օթէ օյլի տան սրաւմաթիւնը իմանալու :

Նորին օրը նամակ մը դրեց Պ. ար Պովիլիւ ահուն մնկուն , որ ժամ թանակաւ բանտերու տեսու ըլլալէ ետե՝ սատիկանութեան բարձա բաղդյն պաշտօն մը կը վարէր , որպէս զի իւր ուղած աեղեկութիւններն ստանայ . Պ. ար Պովիլիւ նոյն տեղեկոթիւնները Տշղիւ հաղորդելու համար երկու օր խնդրեց :

Երկու օրէն ետե՝ Պ. ար Ա.իլլիքօր յետագայ տեղեկոթիւննը բառացաւ :

«Մօնթէ-Քրիսթոյ կոմի կոչուած անձը մամնաւորաւով ո հանչ ցուած է լորտ Ա.իլլիքը անուն հարուստ օտարականէ մը , որ երբեմն բարիդ կու դայ , և հիմա ալ մոյրաքաղաքս կը զանոի : Ճանչ ցուած է նաև արբայ Պլուդոնի անուն Սիկիլիացի քահանույէ մը , որ Ասրեւքի մէջ մեծ համբաւ ունի հան ըրած իւր բազմաթիւ բարի զարծերովը » :

Պ. ար Ա.իլլիքօր ուրիշ նամակով մը հրամայեց անոր որ այն երկու օտարականներուն վրայ խիստ շուտ և ճիշդ աեղեկոթիւններ ստանայ . հետեւեալ տոտու իւր հրամանները զործազրուեցան , և իւր ընդունած աեղեկոթիւնները ասմեք են :

«Արբան , որ միայն տմիս մը Բարիկո պիտի կենար , Աէն-Աիլլիքիս ետին կրկնայարկ փոքր տան մը մէջ կը բնակի՞ր . տունը չորս սեննեակ ունեէ՞ր՝ երկնըրկու սեննեակ իրարու վրայ շինուած և բոլոր ընտակոթիւնը իւր ձեռքն էր :

«Ա.արի երկու սեննեակիներէն մէկը ոեղանատան էր , որուն մէջ ընկողենի փայտէ սեղան մը , աթոռներ և պահանոց մը կար , և միւսը փայտաշլն սրահ մ'էր սպիտակ ներկուած , անզարդ , տունոց թթոցի և առանց ժամացոցի : Յայտնի կ'երեւէր որ արբան խիստ կարեւոր կարստիններէ զատ բան չունէր :

«Արբան զլխաւորաբար վերի յարկին սրահին մէջ կը բնակի՞ր :

«Այս սրահը աւելի զբանուն մ'էր քան թէ նստելու սրահ մը , քանզի մադաղաթեայ տատուած արանական զրբերով լեցուած էր , որոց մէջ արբան տմիններով թաղուած կը մնայ , կ'ըսէր անոր սեննի կապանը :

«Այս սպասառը եկող պյուղելուները դժան ծակէն կը զիտէր , և եթէ անոնց զէմբը իրեն անծանօթ կամ անչամոյ երեւէր , կը

որատասխանէր անոնց թէ արքան Բարիղէն բացակայ է . որովհաշառը զոհ ըլլալով կը մեկնեին անկէ՝ զիտնալով որ արքան յառաջախ ճամբորդութիւն կ'ընէր և երբեմն երկար ժամանակ բացակայ կ'ըլլար :

«Այսու ամենայնիւ արքան թէ տան մէջ ըլլար թէ ոչ , թէ Բարիղ գանուէր և թէ Գահիրէ , միշտ ողորմութիւն կու տար , և ծառան դրան ծակէն իւր տիրո՞ անունովը միշտ ողորմութիւններ կը ցրուէր :

«Գրքատան քովի միւս սենեակը քննանալու խոց՝ մ՛էր , որուն բոլոր կարասիքն էին առանց վարադոյրի անկողին մը , չորս թէամբու , դեղին թառշեայ բազմոց մը և աղօթելու ծնդարան մը :

«Իսկ լորտ Ալլուր Գանգէն-Սէն-Ժօրժ փողոցը կը բնակէր :

«Այն ճամբորդութիւն սիրող Անդրիացիներէն մէկն էր ան , որոնք իրենց բոլոր հարստութիւնը ճանապարհորդելով կը վատանեն :

«Իւր բնակած տունը կարասիքովը մէկուղ վարձած էր . և որը միայն երկու կամ երեք ժամ չոն կը զանուէր , և իմաստ քիչ անդամ իւր տան մէջ կը պառկէր :

«Իւր խենթութիւններէն մէկը ամեննին Գաղղիարէն լեզուն խօսիլ շուզեն է , թէ և կը հաստատեն թէ բաւական անսխալ Գաղղիարէն կը զրէ՞ :

Այս թանկադին տեղեկութիւնները թագաւորի պարոն գործական ձեռքի հասածին հետաքաջական արքունիքի անդամները կը հաւաքէն իշնելով , դնաց կանաչ ձիթապտղի զոյնով զուռը զարկաւ և արքայ Պիտղոնին հարցուց :

— Ոլ . արքան առաւօտէն զուրս ելաւ , պատասխանեց ծառան :

— Այդ խօսքը ինձի մի ըսեր , ըստ այցելուն , ես այնպիսի անձի մը կողմանէ կու զամ , որուն այցելութիւնը արքան չինար մերժել : Աակայն կը ինդրեմ որ . . . . .

— Արդէն ըսի թէ հոս չէ , կրկնեց ծառան :

— Աւրեմն երբ վերադառնայ , այս այցատօմով և այս կնքեալ տոմսակը անոր յանձնէ : Այս իրիկուն ժամը ութիւն ոլ . արքան իւզ տունը կը զանուի :

— Անտարակոյս, պարոն, միայն թէ ու, արքան աշխատելու շնկիր, այն առևն գուրս ելածի պէս է:

— Ուրեմն այս իրիկոն ժամը ու վիճն կու զամ—, կրկնեց այս ցելուն և մեկնեցաւ:

Իրօք՝ որոշեալ ժամուն, նոյն մարդը նոյն կառքով վերստին եղաւ. բայց այս անդամ՝ կառքը փոխանակ ֆէրու փողոցին անկիւնը՝ կենալու՝ կանաչ դրան առջին կեցաւ:

Դուռը զարկաւ, և երբ բացին՝ ներս մտաւ:

«Ճառային իրեն մատուցած յարդանաց նշանները տեսնելով համարցաւ որ նույակը իւր փափաքը կապարեր էր:

— Ու, արքան հսկ է, հարցուց:

— Այս, իւր դրաստան մէջ կաշխատի, բայց ձեզ կըսպասէ—, պատասխանեց ծառան:

Օտարականը սանդու խէն վիր ելաւ և սեղանի մը առջե, որուն վրայ ծածկովով կանըեղ մը իւր բոլոր լոյսը կենդրանացուցեր էր, ինչ ատեն սենեկին միւս մասը մժմութեան մէջ կը զանուէր, եկեղեցական դպեսուով արքայ մը տեսաւ դլուխը այն ինդզով ծածկուած, որ միջին դարու սովորութեան համեմատ զիստաններաւն հակասուր կըսպօղէր:

— Ու, պիւզմիին հետ խօսելու պատիւն ունիմ, հարցուց այցելուն:

— Այս, պարոն, պատասխանեց արքան, և դուք պին անձն էր, որ սստիկանութեան տեսչին կողմանէ բանտերու նախկին տեսուչ ու, որ Պօվիլ ինձ կը դլիւ:

— Այս, պարոն:

— Բարիզի տարահովութեան հոկող դործականերէն մէջին էք:

— Այս, պարօն—, պատասխանեց օտարականը երկմտութեամբ մը և մանաւանդ քիչ մը կարմրելով:

Արքան իւր լսյն ակնոցը վերստին ուղղեց, որ ոչ միայն աշքերը այլ և քոնկերն ալ կը ծածկէր, և իւր տեղը նստելով նշան ըրաւ այցելուին որ նստի:

— Պատրաստ եմ՝ ձեզ մայիլ ընելու, պարօն, ըստ արքան բուն իտակական արտասանութեամբ մը:

— Խնծի յանձնուած պաշտօնը, պարոն, սրատախանեց այցը լրոն դժուարութեամբ խօսելու արէս իւր ամեն մէկ խօսքերուն վրայ կենալով, կը պահանջէ որ փոփոխակի վատահութիւն ունենանք — :

Արքան խոնարհութիւն մը ըրտւ :

— Այո, կրինեց օտարականը, ոստիկանութեան տեսուչը ձեր առաքինութիւնը ճանաչելով, իբր դատաստոր կ'ուղէ ձեզմէ այնպիսի բան մը իմանայ, որ հասարակաց ասպահովութեան կը նկատէ, յանուն որոյ ՚ի պաշտօնէ ձեզի կը դիմեմ։ Աւսոի կը յուսանք, գ. արքայ, որ ճշմարտութիւնը ոստիկանութեան յայանելու համար բարեկամական կապեր կամ մարդկային նկատում մը արդելք սիրտի չկրնան ըլլալ ձեզ։

— Բառական է, պարոն, որ ձեր դիտնալ ու զած բաները խղճիս չդպշին։ Ես քահանայ եմ, պարոն, և խոստովանութեան դադարնիքը իմ սրախ խորը կը թաղուի, ու միայն Աստուած կ'իմանայ։

— Անհող եղիք, պարոն արքայ, ըստ օտարականը, ըստ առմնայնի ձեր խղճին դպչելու բան մը սիրտի չառաջարկենք — .

Այս խօսքերուն վրայ՝ արքան կանգնեցին ծածկոյթը իւր կողմէն վար իջեցնելով հակառակ կողմէն վեր բարձրացուց, որով օտարականին գէմքը բոլորովին լուսաւորելով իւր դէմքը ստուերին մէջ մնաց։

— Կերեցէք, պարոն արքայ, ըստ ոստիկանութեան տեսչին պատցամաւորը, կանթեղին լոյսը աշքերս սաստիկ կը նեղէ — :

Արքան կանթեղին կանաչ ծածկոյթը իջեցուց։

— Հիմա, պարոն, խօսեցէք։

— Մօնթէ-Քրիսթոյ կոմը կը ճանշնա՞ր։

— Կարծեմ Զադոն ըսել կ'ուղէք։

— Զադոն . . . ։ Միթէ անոր անունը Մօնթէ-Քրիսթօ յէ։

— Մօնթէ-Քրիսթօ երկրի մը կամ թէ ըսեմ ժայռի մը անուն է և ոչ ընտանիքի։

— Շատ աղէկ ուրեմն . անուններու վրայ չվեճինք, և որովհետեւ գ. Մօնթէ-Քրիսթօ և Զադոն մի և նոյն մարդն է . . . .

— Բոլորավին նոյն անձն է։

— Ուրեմն Զադոնը ըսենք։

- Ըստ աղելի :
- Կը հարցինմ թէ կը հանշնա՞զ զան :
- Եղելի կը հանշնա՞մ :
- Ո՞վ է :
- Մալթացի հարստան նաև այսրդարի մը տղան է :
- Այս, զիսեմ, այդպէս կըսեն . բայց կը հասկընաք անշուշտ որ սատիկանութիւնը բառած խօսքերով չկրնար բառականանալ :
- Այսու ամենայնիւ, կրկնեց արքան խօստ քաղցր ժպիտով մը, երբ այդ բառած խօսքը հշմարիտ է, պէտք է որ ամեն մարդ դո՛չ ըլլայ, և սատիկանութիւնն ալ ամեն մարդոց պէս բառական համարի :
- Բայց բամենուդ վրայ ապահով էք :
- Ի՞նչպէս, ապահով եմ կ'ըսէք :
- Կը աեմնէք, պարզն, որ ես ձեր անկեղծութեան վրայ ամենին չեմ կասկածիր, այլ կը հարցընեմ թէ ապահով էք :
- Մաիկ ըրեք, պարզն, ես Պ. Զագոնի հայրը կը հանշնայի :
- Ի՞նչ կ'ըսէք :
- Այս, և իմ մանկութեանս մէջ շատ անդամ անոր որդուոյն հետ խաղացած եմ :
- Սակայն կումնի տիտղոսը Բնէ պիտի ըլլայ :
- Հեք դիտեր որ տիտղոսը սատիկով ծախու կ'առնոի :
- Իտալիոյ մէջ :
- Ամեն կողմ:
- Բայց իւր անքաւ հարստութիւնները ուր դտած է :
- Ո՛չ, անքաւ չկրնար ըստիլ, պատասխանեց արքան :
- Ո՞րշափ հարստութիւն կը կարծէք որ ունենայ, դուք որ զինքը կը հանշնաք :
- Ո՛չ, հարիւր յիսուն կամ երկու հարիւր հազար ֆրանք եւ կամուտ ունի :
- Այդպէս ըսէք, բառ այցելուն, բայց երեք կամ չորս միլիոն կ'ըսեն :
- Երկու հարիւր հազար ֆրանք եկամուտը, պարզն, զիշտ չորս միլիոն դրամագլուխ կ'ընէ :

- Երեք կամ չորս միլիոն եկամուտ ունի կը ըստին :
- Ա՛հ, անշառատավի է այդ :
- Կոր Մանթե-Քրիստոյ կղղին կը ճանշնաբք :
- Անշուշտ, Բալէրմոյէն, Կարպալին կամ Հոռոմէն ծովով Գագուղիա եկտղները կը ճանշնան զայն, ըստ որում անոր քովին կ'անցնին և կը տեսնեն :
- Ըստածնուն նայելով խիստ հիանալի տեղ մ'է եղեք :
- Ժայռ մ'է, պարոն :
- Ինչու ոքեմն կոմոր այն ժայռը դներ է :
- Անշուշտ կոմն ըլլալու համար, Խոտալիոյ մէջ կոմն ըլլալու համար կոմութիւն մը ունենալ պէտք է :
- Ո, Զարոնին երիտասարդութեան պատմութիւնը անշտ ըստ լսած էք :
- Հօրը :
- Ոչ, որդւոյն :
- Ա՛հ, այդ մասին ստոյդ տեղեկութիւն չունիմ, քանզի երիշտասարդութեանը մէջ ինձմէ բաժնու եցաւ :
- Պատերազմ ըրած է :
- Կարծեմ թէ զինուորական է :
- Ո՞ր բանակին մէջ ծառայած է :
- Ծովային :
- Ըսէք, դոք անոր խոստովանահայրը չէք :
- Ոչ, պարոն, բողոքական կը կարծեմ զինքը :
- Ի՞նչպէս, բողոքական :
- Կը կարծեմ կ'ըսեմ և չեմ հաստատեք : Կարծեմ թէ զարդիոյ մէջ ամեն կրօնիք աղատութիւն կոյ :
- Անշուշտ, բայց այս միջացիս իոր հաւատքը չէ փնտուածնիս այլ դործը . յանուն ուստիկանութեան պարոն տեսչին կը սկահանամուր որ զիտցածնիք ըսէք :
- Զարոն խիստ ողորմանէք մէ կը ճանչցուած է, Արեւելեան քրիստոնէից իոր մաստցած մեծամեծ ծառայութեանցը համառ մեր սրբազն պապը տապետի պատուանունը տուաւ անոր, որ միայն իշխաններու կը շնորհուի, հինգ կամ վեց մեծ ժաղանէներ ուշ

նի, որոնք իշխաններու կամ՝ տէրութեանց իւր ըրած ծառայութեանցը փախարէն բնդուած է:

— Եւ զանոնք չ'կըեր:

— Ոչ, բայց անոնցմավ կը պարծի. կ'ըսէ թէ մարդկաւթեան բարերարաց շնորհաւած վարձատրութիւնները բանաւորաց տրուածներէն նախամեծար կը համարի:

— Ու թե մե այդ մարդը +ու-էշիլ ըսուած աղանդաւորներէն մէ կն է:

— Ճիշդ այդպէս, միայն թէ անոնց մնջ զլիսարկը և շադանակագոյն զգեստը չտնի:

— Բարեկամ՝ ունի:

— Այս, բոլոր զինքը ձանչցողները իւր բարեկամներն են:

— Բայց վերջապէս անշտառ թշնամի մը պիտի ունենայ:

— Միայն մէկ թշնամի ունի:

— Ի՞նչ է անոր անոնք:

— Լորա Վիլմոր:

— Ո՞ւր կը զանուի:

— Այս միջոցիս Բարիկ կը զանուի:

— Այդ մարդը կրնայ ինձ տեղիկութիւններ տալ:

— Անարակոյս, Զագոնի Հնդկաստան գտնուած ժամանակը ինչո՞ւ հան:

— Գիտեք ուր կը բնակի:

— Ըստ-ա՛ Անդէնի կողմը բայց փողոցը և տան թիւը չեմ:

— Այն Անդիացիին հետ բարեկամութիւն ունիք:

— Ես Զագոնը կը սիրեմ ու ան կ'ատէ, այս պատճառաւ իւրաբու պազտութեամբ կը նայինք:

— Պ, աբրայ, կը կարծէք որ Մօնթէ-Քրիսթոյ կոմոը այս անդամ Բարիկ զալէն առաջ երրէք Գաղղիա եկած է:

— Այս մասին կընամ ասլահով յընել զձեզ որ երրէք եկած չեն, բայց որում ասկէ վեց ամիս առաջ Գաղղիոյ վրայ տեղեկութիւններ ստանալու համար ինձ դիմեց, և որովհետեւ ես ալ չէի զիստեր այն տաեն թէ Երբ պիտի կարենամ Բարիկ վերադառնալ, ոլ, Գաղղալդ անթին անոր զրկեցի:

— Անտրէան :

— ԱՇ, անոր հայրը, Պարմռլումի օն :

— Ըստ աղէկի, պարոն. Հիմա միայն մէկ հարցում ունիմ՝ ընկըու, և կը խնդրեմ որ յանուն ձեր պատույն, մարդկութեան և հաւատոյ՝ առանց ծածկելու պատասխանէք ինձ :

— Ըսէք, պարոն :

— Մօնթէ-Քրիստոյ կոմոք Բնչ նպատակաւ. Օթէ ոյլի մէջ տուն մը գնեց, զիտէք :

— Անշուշտ, ինձ ըսած է :

— Ի՞նչ նպատակաւ, պարոն :

— Բալէբանյի մէջ Բիզանի սեպուհին հաստատածին նման յիշմարանց մը հաստատելու նպատակաւ։ Տեսած էք այն յիմարան նոցը :

— Համբաւը լսած եմ, պարոն :

— Ծքեղ հաստատութիւն մ'է — :

Եւ այս խօսքին վլայ արքան օտարականը բարեկց այնպիսի կերպ պով մը, որով կ'ուղէք իմացընել թէ իւր ընդմիջեալ աշխատութեան սկսելու կը փափառէք :

Այցելուն կամ արքային կամքը հասկընալուն և կամ իւր հարցումները վերջացուցած ըլլալուն՝ ինքն ալ ուր ելու :

Արքան մինչեւ դուռը անոր ընկերացաւ :

— Միշտ ողորմութիւններ կ'ընէք, լսու այցելուն, և թէպէտ հարուստ էք, կ'ըսեն, բայց աղքատաց համար ձեզ բան մը նուիրելու պիտի համարձակիմ։ ըրած նուէրս ընդունելու պիտի հաճէք :

— Ծնորհակալ եմ, պարոն. աշխարհիս մէջ միայն մէկ բանի հականձաւոր եմ. ըրած ողորմութիւններս իմ քսակէս կ'ուղեմ ընել :

— Սակայն . . . :

— Որոշումն անփոփոխելի է, պարոն. բայց դուք մինստեղէք եւ պիտի դանէք։ Ափան, հարուստ մարդոյ համբուն վրայ շաս մշշուաներ կընան հանդիպիլ — :

Արքան դուռը բանալով վերջին անդամ բարեկց զան :

Օստարականն ալ բարելով դուրս ելաւ :

Կառքը ուղղակի ու ող Ակլը թօրի առնը տարաւ զինքը :

Ժամը մը ետքը կառքը վերստին Տամբայ ելաւ , և այս անդամ՝ գէպ՝ ՚ի քօնթէն-Սէն ժէրմէն փողոցը ուղղեցաւ , և թիւ Շ տան առջելը կցաւ :

Լորտ Ակլը այս տան մէ չ կը բնակէր :

Օստարականը նամակով մը լորտ Ակլմորէն ժամադրութիւն մը խնդրեր էր , և Անդդիացին ժամը տասին որոշեր էր :

Առաջի ոստիկանութեան ու տեսչին պատգամաւորը ժամը տասէն տասը վայրկեան տռաջ հասնելով՝ ծառան իմացոց անոր որ լորտ Ակլմոր Նշգութիւնը խիստ պահող ըլլալուն գեռ եկա ծ չ էր , բայց ժամը տասը հնչած ժամանակ անշուշտ պիտի դար :

Այցելուն սրահին մէ չ սպասեց :

Սրահը նշանաւոր բան մը շունէր , կահեալ տան մը սրահեւ րուն կը նմանէր :

Անոր մէ չ տեսմաւած երեւլի զարդերն էին Աէզրի արդի երկու ամաններով կրակարան մը : Ժամացոց մը՝ վրան Աէրը կանգնած , որ իւր աղեղը կը լարէ , երկու կտորէ բաղկացեալ հայելի մը , ու բուն երկու կտորը մէ կ մէ կ նկարներ կային՝ մէ կը Հոմերոսը կը ներկայացնէր իւր առաջնորդին հետ և միւսը Պէլիգէրը , որ կը մուբար :

Պատին վրայ աշխարհագրական մոխրադ ոյն տախտակ մը կախուած էր , և սեղանին վրայ սե նկարներով կարմիր ծածկոցի մը :

Սրահը ջահերով լուսաւորուած էր , բայց աղօտ տպակեայ զունա աներով ծածկուած ըլլալով՝ ակար լոյս մը կը տարածէին անոնք զոգցես զիստմամբ ոստիկանութեան ու տեսչին պատգամաւորին յող անած աշաց շինասելու համար :

Տասը վայրկեան ետքը ժամացոցը տասը զարկաւ :

Հինգ երորդ հարուածին՝ զուռը բացուեցաւ և լորդ Ակլը ներս մտաւ :

Յանցաւ . և աշխիւ ու կիսամօրուօք և սպիտակամորթ և սպիտակայեալ խարսնեալ մաղերով միջահամակ մարդ մ'էր :

Իւր զգեստները Անդդիական բնլորսովին տարօրինակ ձև մը մէա

Ներն . 1844 թաւականին ձեռվը ուղի կոճակներով և լոյն օձիքով  
կապոյտ թիկնոց մը հագած էր , սպիտակ բարակ տառեալ բանջրէն  
մը և նանքինեան կերպասէ ունազգեստ մը , որ ոռվարականէն ե-  
րեք բլաշտափ կարճ էր , բայց նոյն կտառէ փոկերը կը քաշէին դայն  
և չէ ին թաղուր որ մինչեւ ծունկերը բարձրանայ :

Ներս մանելուն պէս՝ իւր առջի խօսքը հետեւ եալն եղաւ .

— Գիտէք , պարոն , որ ես Գաղղիարէն չեմ՝ խօսիր :

— Գիտեմ , այսինքն մեր լեզուն խօսիլ չեք ախորժեք , պատաս-  
խանեց ոստիկանութեան ող . տեսչին պատկանաւուրը :

— Բայց զուք կրնաք Գաղղիարէն խօսիլ , կրկնեց լորտ Ա.իւ-  
մոր . քանզի ես չեմ կրնաք խօսիլ , բայց կը հասկընամ :

— Ես ալ բաւական Անդղիարէն կը խօսիմ . ուստի մի՛ նկատիք :  
կրնաք ձեր լեզուն խօսիլ :

— Այս — , ըստ լորտ Ա.իւմոր այնպիսի արտասանութեամբ մը ,  
որ միայն Մեծին-Քրիստոնիոց քնակչաց յատուկ է :

Այցելուն իւր յանձնարարական նամակը անոր ներկայացոց :

Լորտ Ա.իւմոր բոլորովին անդղիական պաղութեամբ զայն կար-  
դալէն եաւ :

— Հասկըցայ , ըստ , շատ աղջկ հասկըցայ — :

Ասոր զրոյ ոյցելուն սկսու իւր հարցումները ընել , որմնը դրե-  
մէ արբայ Պիւզնին եղած հարցումներն էին :

Բայց որովհետեւ լորտ Ա.իւմոր Մօնթէ-Քրիստոյ կումին թշնա-  
մին ըլլալով՝ աբբային ակէս իւր ըստծներուն չափ չէր դներ , ի-  
րենց մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը առել երկարեցու :

Մօնթէ-Քրիստոյի երիտասարդութիւնը պատմեց . իւր խօսքին նա-  
յելով կոմնը տարեկան հաստիին մէջ Անդղիացոց հետ պա-  
տերազմող Զնդիաստոնի փորք տերութեանց մէկուն կը ծառայէր .  
առաջին անդամ Ա.իւմոր զան հոն տեսնը էր , և իրարու ուէ մ' պա-  
տերազմնը էին :

Այն պատերազմին մէջ Զարդն զերի կյանալով Անդղիա զբկուեր  
էր զերիներու նառով մը , ուրիշ ծովը նետուելով՝ ի լուղ փախ-  
չեր էր :

Այնուհետեւ սկսեր էր իւր Շատրւորդութիւնները , մննամարտու-  
թիւնները և բաղձանքները կատարել :

Յունատանի սպասամբութեան ժամանակ Յունաց դռնդերուն մէջ մաեր էր :

Անոց ծառայութեան տակ եղած տաեն Թեսաղոնիկէի լերանց մէջ արծաթի հանք մը զաեր էր, բայց զգուշացեր էր իւր դիւտ մարդու յայտնելու :

Նավարինոյի սպասերազմէն ետև՝ երբ Յունական տէրութիւնն ալ հաստատուեցաւ, Օթոն թագաւորէն այս հանքը փորելու առանձանաշնորհը խնդրեց և ընկալաւ :

Իւր անբաւ հարստութիւնը այս հանքէն է, որ Վիլմորի ըստածին նայելով մէկ կամ երկու միլիոն ֆրանք եկամուտ կը բերէ, սակայն այս հարստութիւնը պիտի սպառէր անշուշտ երբ հանքն ալ սպառէր :

— Բայց զիաւէր ի՞նչ նպատակաւ Գաղղիա եկած է, հարցոց այցելուն :

— Երկաթուղեաց վրայ շահագիտութիւններ ընել կ'ուղէ, սպատասիսանեց Վիլմոր, ասկէ զատ՝ քաջ քիմիագէտ և երեելի բնուղէտ մը ըլլալով՝ հեռազրի նոր միջոց մը զած է, որուն զործառ զրութեանը կը սպառապի :

— Տարին որչափ ծախք կ'ընէ, հարցոց սոտիկանութեան Պ. աւագ չին սպասարկութեան :

— Ո՛չ, սաստիկ կծծի է, տարին հաղիւ հինգ կամ վեց հարիւ հաղար ֆրանք ծախք կ'ընէ — :

Յայտնի կ'երեւէր որ Անդիխային ատելութեամբ կը խօսէր, և կոմմին վրայ ի՞նչ յանցանք դնելը չդիտնալով, անոր ազահութիւնը կը մնալուէր :

— Օթէօյլի տանը վրայօք տեղեկութիւն մը ունիը :

— Անշուշտ :

— Ի՞նչ անզեկութիւն ունիք :

— Ի՞նչ նպատակաւ զնելը չէ՞ր հարցըներ :

— Այս :

— Կոմնը իւր շահագիտական փորձերով ու երեւակամբը իւր ունեցածը պիտի վասնէ, կը հաստատէ որ Օթէօյլի իւր դնած տան շրջակաները հանքային ջուրի աղբիւր մը կայ, որ պանեւէրի,

Այս շնորհի, և Գոմքը էի ջուրերուն հետ պիտի կրնայ մըցիլ : Այս  
հուշակաւոր ազգիւրը գանելու համար արդէն երկու կամ երեք ան-  
դամ իւր պարտէ զը տակն ու վրայ ըրաւ . բայց չդանելուն համար  
քիչ ժամանակին պիտի տեսնէք որ իւր տան թորոշիքը եղող բո-  
լոր տաները ծախտ պիտի առնէ : Ես կը յասամ որ իւր երկա-  
մուլքոյն, իւր ելքաբական հեռաց ըին կամ հանգախուզութեանը մէ ջ  
իւր հարստութիւնը պիտի վասնէ . և որոյ հետեւ կ'առեմ զինքը +  
խիստ պիտի ուրախանամ վար կամ անազան անոր կործանումը  
ան սնելու :

— Ես ինչու կ'առեք զինքը, հարցոց ոցցելուն :

— Ըստ որում Անդ զինց մէջ բարեկամներէս մէկուն կինը հբա-  
րութեց, պատասխաննեց լորս Ալեքսանդր :

— Եթէ զինքը կ'առեք, ինչու վրէժ լուծելու միջոց մը չէք  
զինառելու :

— Երեք անգամ կոմին հետ կոտեցայ + ըստ Անդ զինցին . ա-  
ռաջին անգամ առանձանակով, երկրորդը առողջ և երրորդը երե-  
սայրի մէծ ստուբուլ :

— Եւ այն մնամարտութեանց հետեւթիւնը Բնայէս եղաւ :

— Առաջին անգամ թես ջախջախեց, երկրորդ անգամ սուրը  
մինչև թոքս մինց, երրորդ անգամ այս վէրքը ըրսու . — :

Անդ զինցին իւր շապիկին օձիքը քակեց, որ մինչեւ ականջները  
բարձրացած էր և ասի մը ցուցուց անոր, որուն կարմրութիւնը ա-  
նոր շատ հին չըլլալը կը յայտնէր :

— Այս պատճառաւ խիստ կ'առեմ զինքը, կրկնեց Անդ զինցին :  
և անտարտկոյս իմ ձես քովս պիտի մեռնի :

— Բայց կարծեմ թէ դան սպաննելու միջոյներուն չէք մնած եր :

— Ինչպէս, ամեն օր դնուածութեան կ'երթամ, և Կրիզիէ  
վարսեար ամեն օր տունս կը դոյ — :

Այցելուն այսափ աեղեկութիւններէն դա՛ Եղեր էր, կամ զո-  
նէ Անդ զինցին անմնցմ առ իմ աեղեկութիւնն շտնելը :

Աւստի պատուամասորը ոտք ելու . և լորս Ալեքսանդրը բարեկընն  
ետեւ (օր անգ զինական պազալ թեամբ և քաղաքավարութիւնները անոր  
պատասխաննեց) մերինեցաւ :

Իսկ լորտ Վ.ի լմոր փողոցին զրան զոյտելուն ձայնը տռնելով ողէն՝ իւր դահնի վաղեց, վայրինի մը մէջ իւր խարտեաշ մաս դերը, մոխրագոյն կիսամօրուքը, կեղծ ծամելիքը և սպին հաննելով, Մօնթէ-Քրիսթոյ կոմին սև մաղերը, թուխ զոյնը և մօքդաբտեայ առանձները երեան ելան :

Միւս կողմէն չէ թէ ստիկանութեան ոլ, աեռէին սրատդամաւուըը, ոյլ նոյն ինքն ոլ, պը Վ.ի լը Փօրն էր, որ լորտ Վ.ի լմորի առանձնէն ելնելով իւր տունը վերադարձաւ :

Թագաւորի զործակալին սիրտը քիչ մը հանդարտած կ'էրեկը այս կրին այցելութենէն ետեւ, թէ և ստոդիւ եթէ ոչ սիրտ հանդարտեցնող, զոնէ անհանդստութիւն պատճառող բան մ'ալ չիւ մացեր էր :

Հետեւաբար՝ Օթէ օյլի ճաշէն ՚ի վեր սուաջին անդամն էր որ նոյն իրիկունը հանդարտութեամբ քնայաւ :



### ԳԼՈՒԽ ԺԱ

### ՊԱՐՍՀԱՅՆ ԳԼՈՒԽ

Յաւլիսի ամենէն տաք օրերուն մէջ՝ ոլ, որ Առրսէր վի սուրբ ըահդէսին համար որոշուած շաբաթ օրը վերջապէս եկաւ հասաւ :

Կրիկուան ժամը տասն էր . կոմինին տանը ողարտիղին մեծ ծառ-  
ոերը լայնածառալ ընդարձակուած էին , որոնց մէջէն ոսկեդոյն աստ-  
վերով զարդարուած կապոյտ երկինքը հազիւ կը տեսնուեր :

Գետնայարկի սրահներուն մէջ երած շոտեթիւնը կը նուագէր , և  
շրջապարն ու արշաւապարը եռահնգուն խաղացողներ ունեին . ան-  
համար ճրագներուն օրուան որէս պայծառ լոյսը պատռհաններուն  
վարդակապատներէն դորս կ'անցնէին :

Այն միջոցին տան արկինը , որ երգալով աւելի զուրբը կ'ե-  
րեէր , տամնի չափ ծառաներու հրամայեց որ որաբուշին մէջ սե-  
ղանը պատրաստեն :

Մինչև այն վայրկեան երկմատոթեան մէջ էին թէ սեղանատան  
մէջ պիտի ընթրեն եթէ կարծ խոտերուն վրայ կանդնուած կա-  
նելեայ կտաւէ երկար վրանին տակը :

Աստղապարդ պայծառ երկնից երևոյթը վրանին տակը ընթրելու  
սրոշումը հաստատեց :

Խտալիոյ սովորութեան համբ մատ զոյնողոյն լապտերներով պար-  
ակիին ծառուղիները կը լուսաւորէին , և սեղանը մուսնըսով և ծա-  
ղիկներով կը զարդարէին , բնշտէս որ սովորութիւնն է այն երկիր-  
ներուն մէջ , որ սեղանին այս զարդարանքէն քիչ մը կը հասկր-  
նան , որ ամեն զարդարանկէ նախամեծար է երբ կատարեալ եղած  
ըլլայ :

Տը Մորուքի կոմուհին խը վերջին հրամանները տարէ եւ մեծ  
սրահը մատած ժամանակը՝ հրաւիրեալները կոմուհույն ազիւն հիւ-  
րասիրութենէն և կոմինին նշանաւոր անունն էն հրապուրեալ սրահնե-  
րը կը լցուէին . վասն զի առաջուց զիտէին որ այս աօնախմբու-  
թեան մէջ Մէրուէտէսի լաւ ընարողութեան շնորհիւը այնպիսի բա-  
ներ պիտի տեսնեն , որոնք պատմուելու և ուշտք եղած ժամանակը  
օրինակ ըլլալու արժանի պիտի ըլլան :

Տիկին Տանկլար քանի մը օր առաջ պատահածներէն խիստ տնա-  
հանդիսաւ եղած ըլլալով տիկին տը Մորուքի վիթի պարահանդէսին եր-  
թալու . կը վարանէր , երբ նոյն առառ իւր կառքը Վիլլֆօրի կառ-  
քին հանդիսէր էր :

Աիլլֆօր անօրնշան մը ըրաւ , և երկու կառքերը իրարու մօտե-  
ցան , և գոհակիներուն մէջն :

- Տիկին ար Առօքէ բՓին պիտի երթոք, այնոք ու չէ, հարցող  
թաղաւորի դործակալը :
- Աչ, պատասխանեց տիկին Տանկլար, անհանգիստ եմ :
- Աղեկ չէք ըներ, կրինեց Ափլըֆօր, անշուշտ պէտք է ոք  
զձեղ հան աեօնեն :
- Կը կարծէք :
- Անշուշտ :
- Աւըեմն կ'երթամը — :
- Եւ երկու կառքերը իրենց համբան շարունակեցին :
- Աւսորի տիկին Տանկլար եկեր էր և ոչ միայն իւր անձնական դեմքիութեամբը այլ և իւր զարդերովը կը փայլէր :
- Սրահին մէկ դռնէն ներս մտած ժամանակը Աէրաէտէս ալ միւս  
մէն ներս կը մննէր :
- Դումնու հին Ալորէ ըր զրկեց որ տիկին Տանկլարը դիմաւորէ :
- Ալորէ ափկոնջ մօտեցաւ և անոր հազուտոը դովելէն ետե՛ իւր  
թենը անոր ներկայացոց և պատուառոր տեղ մը աարաւ դինքը :
- Ալորէ իւր բոլորափեր նայեցաւ :
- Աղջիկս կը փնտոէք, ըստ տիկինը ժպանէլով :
- Այս, ըստ Ալորէ արդեօք հետերնիդ չըերելու անդիւն  
թիւնն ունեցա՞ :
- Անհոգ եղիք, օրիորդ ար Ափլըֆօրը տեսաւ. և անոր թելը  
մտաւ. ահա, ետեւէս կու զան, երկուքն ալ սպիտակ շրջազդեստ  
հազած են՝ մէկը դամելիայի և միւսը մինականջի գունչը բռնած +  
ըայց ըսէք ինձ . . . :
- Եւ դոք զով կը փնտոէք, հարցոց Ալորէ ժպանէլով :
- Մօնթէ-քրիսթոյ կոմը այս իրիկուն պիտի չզայ :
- Տան ու եօթը + պատասխանեց Ալորէ :
- Ի՞նչ ըսէլ կ'ուդէք :
- Ըսել կ'ուզեմ թէ դոք ասան ու եօթներորդն էք այս հարա  
ցումը ընող, կոմը աղէկ դործ կը տեսնէ . . . կը շնորհառեմ  
զինքը . . . :
- Ամենուն ալ այս նոյն պատասխանը տուիը :
- Ո՛չ, իրաւունք ունիք, դեռ չպատասխանեցի ձեզ, անհոր

եղիք, տիկին, այն նորանշան մարդը պիտի ընդունինք. մենք մասնաշնորհ մարդիկ ենք :

— Երեկ իրիկուն Օքէլոյին եկամք :

— Ոչ :

— Կամոց հօն էք :

— Նորէն տարօրինակ բան մը ըրառ :

— Միթէ ուրիշ կերպ կընաց ընել. Ետէ ուստի ստուած պարը կը պարէք, որաւն վրայ Յոյն իշխանունին զմայլած կ'երեւէք, պարէն ետեւ կոմոց փունջի մը ծայրը շքեղ ազամանդ մասնի մը կապեց և պարող օրիսրդին նետեց, որ Երրորդ արարուածին մէջ կոմոին պատիւ ընելու համար մասնին ձեռքը դրած երեցաւ : Յոյն իշխանունին այլ պիտի զայ :

— Ոչ, այն պատիւն զիկուած ենք :

— Հաստ աղէկ, զիս հս թողոցէք և ամիկին աը Ա.իլրֆօրի քովը զացէք. կը տեսնեմ որ ձեզի հետ խօսելու անհամբերութեան մէջ կը զանոնի — :

Ալպէր տիկին տանկլարի խոնարհութիւն մը ըրառ և գէպ ՚ի տիկին Ա.իլրֆօր յառաջացաւ, որ Երիտասարդը դեռ իրեն չժօտեցած բերանը բացեր էր խօսելու :

— Գրաւ կը գնեմ որ ձեր ըսելիքը զիտեմ, ըստ Ալպէր զան ընդմիջելով :

— Ձեմ՝ կարծեր, ըստ տիկին Ա.իլրֆօր :

— Եթէ զուշակեմ, Ճիշդը կը խօստովանիք :

— Այս :

— Ձեր պատուո՞ն վրայ :

— Պատուոյս վրայ :

— Պիտի հարցընէք թէ Մօնթէ-Քրիսթոյ կամոց եկած է իամ պիտի զայ :

— Ամենեին. այս միջոցիս զիս զբաղեցրնողը անչէ, պիտի հարցընէք թէ ոյ. Գրանզէն լուր մը ունիք :

— Այս, Երեկ նամակ առիք :

— Ի՞նչ կ'ըսէ :

— Թէ նամակին հետ համբայ պիտի ելնէ :

- Շատ աղէ կը հիմա կոմին համար ըսէք :
- Կամպ պիտի դայ , անհօգ եղիք :
- Գիտէք որ կոմը ուրիշ անուն մը ունի :
- Ոչ , չէի դիտեք :
- Անթէ Քրիստօ կողին մը անուն է , և կոմը զերդաստանական անուն մը ունի :
- Ամենեին լսած չեմ :
- Աւրեմն ես ձեզմ՝ ուելի աւզեկութիւններ ունիմ , անոր անունը Զադան է :
- Կարելի է :
- Մալթացի մ'է :
- Առ ալ կարելի է :
- Եւ նաև այսպարի մը որպի :
- Այդ աեզեկութիւնները եթէ բարձր ձայնով պատմէիք , ամենուն ալ հաճելի պիտի երեկիք :
- Հնդկաստանի մը ջ պատերազմի մը ջ մտեր է . Թեսազնիկէի մը ջ հանք մը դտեր է , և Քարիզ եկած է հիմա Օթէօյլի մը ջ հանքային ջուրերու աղբիւր մը դանելու :
- Մեծ լուրեր են ատամք . պիտի ներէք որ ուրիշի ալ պատմեմ :
- Այս , բայց առանց ձայն հաճելու և առանց անունս տալու :
- Ի՞նչ պատճառաւ :
- Ըստ որում դրեթէ դադանիք մ'է :
- Ո՞վ ստացեր է այդ դադանիքը :
- Աստիճանութիւնը : Կոմին անսովոր զեղլութիւնը տեսնելով բոլը Բարիզ յաւզուած էր , և ոստիկանութիւնը երէկ իրիկուն այս տեղեկութիւնները ընդուներ է :
- Աւրեմն խիստ հարստատ ըլլալուն համար պիտի բռնէին զան :
- Եթէ ստացուած առջելութիւնները նպաստառոր չըլլային , անդ չտ դրս խը դալիքը այն էր :
- Խեղճ կամն . և խը վասնողէն տեղեկութիւն ունի :
- Չեմ կարծէր :
- Աւրեմն բարեթիւն մը պիտի ընեմ եթէ խմացընեմ : Գալու ոչ ու պիտի լսեմ : անօք —

Այս միջնորդիս՝ վառվուուն աչօք, ոև մազերով և փայլուն ընչայք-քով գեղեցիկ երխուսարդ մը դալով յարդանօք ախինն ար Ախու-ֆօրը բարեեց :

Ալպէր անոր ձեռքը թոթվեց :

— Տիկին, ըստ Ալպէր, պատիւ ունիմը ձեզ ներկայացնել ու Թաքսիմիլիէն Մորէլ, որ հեծելազօրաց հրամանաստար և մեր ա-մենէն ընտիր և մանաւանդ ամենէն քաջ պաշտօնաստարներէն մէ ին-է :

— Արդէն Օթէօյլ, Մօնթէ-Քրիսթոյ կոմին տունը պարոնը տեմնելու ուրախութիւնը ունեցայ —, պատասխանեց տիկինն ար Ակիլլիքօր յայտնի պաղութեամբ մը երեսը զարձնելով :

Այս պատասխանը մանաւանդ տիկինոջ ձայնը ողորմելի Մորէլին սիրով վիրառորեցմն, բայց միւս կողմը դառնալով անոր փոխարէնը ընդունեց . զրան քովը գեղանի և սպիտակ դէմք մը տեսաւ, ու բուն կապոյտ քաղցր աշքերը առանց յայտնի բան մը նշանակե-լու իրեն յարած էին, ինչ ատեն ձեռքը բունած փունջը մինչեւ իւր շրմանց կը մօտեցընէր :

Մորէլ այս ողջօյնը այնչափ աղէկ հասկրցաւ, որ նայն նայուած քով անոր նայելով, ինքն ալ թաշկինակը իրանը տարաւ, և իր կու կենդանի արձանները, որոնց սիրով իրարու համար սատոկա-պէս կը բարախէր, և միայն սրահին երկայնութեամբ իրարմէ բաժ-նուած էին, վայրիեւան մը ինքզինքնին մօռցան, և կամ այս լուիկ մօտածութեան մէջ վայրիեւան մը սրահին բազմութիւնը չտեսան :

Երկար ատեն այսուէս յափշտակուած պիտի մեային և մէ ին ալ պիտի չգիտէր իրենց կացութիւնը, և թէ Մօնթէ-Քրիսթոյ կոմոց այն միջոցին սրահիը չմանէր :

Արդէն ըսած ենք որ կոմոց ուր որ երթար՝ կամ կեղծ և կամ ընական հրապուրանօք ամենուն ուշագրութիւնը կը դրաւէր . ասոր պատճառը ոչ իւր վայելուչ կտրուած բայց պարզ և առանց շքա-նշանի ոև թիկնոցն էր, ոչ անգարդ սպիտակ բամիրնը և ոչ այն տանազգեստը, որ ստից այնսպիսի քննուշ ձեւ մը կու տար, որ ա-մենուն ուշադրութիւնը կը դրաւէր, այլ իւր դիմաց տժգունութիւ-նը, դռւող ոև մազերը, երեսին հանդարտութիւնն ու մաքրութիւ-

նրան խորին և ալխուր նայուածքը, մերջարէս այն վայելու բերանն  
էր, որ սրտին մէջ խօրին արհամարհանք մը ունենալը յայտնի  
կը ցուցնէր. ահա այս պատճառաց համար էր որ ամենուն նայ-  
ուածքը անոր վրայ կը հաստատէր :

Մրահին մէջ կարելի էր անորմէ առելի զեղեցիկ մարդ մը դանուէր,  
բայց անոր որէս յայտարար նշաններ ունեցող մէկը չկար, թող  
ներսուի մեղ այսուէս ըստենու. կամին վրայ ամն բան նշանակու-  
թիւն մը և իւր արժանաւորութիւնը ունէր. ըստ որում օգտարկոր  
բաններ մասածելու սովորութիւնը իւր դիմաց զծերուն և իւր ամնն  
ժողոր շարժմանցը անհամեմատ վայելութիւն մը և հաստատ թիւն  
մը տուեր էր :

Ասկէ զատ՝ մեր Քարիզեան ժողովութիւն այնչափ դարմանալի է,  
որ այս ամենուն ամեննեն ուշադրութիւն չէր ըներ ելքէ անոնց տա-  
կը անրատ. հարստոթեամբ մը սոկեզօծեալ դարձնի պատմութիւն  
մը չըլլար :

Ենչ և է ամենուն ուշադրութեան առարկայն ըլլալով. և իւր  
ծանօթներուն հետ թեմե ողջոյններ փոխելով մինչեւ տիկինն Առո-  
ուրֆի քովը յառաջացաւ, որ ծագկազարդ կրակուրանին առջելը  
կանոնած ըլլալով, զբան դիմացը զրուած հայելիին մէջ անոր  
զալը տեսուեր և զան ընդունելու պատրաստեր էր :

Աւատի պարկեցած ժամկտով մը անոր դարձած ժամանակը արդէն  
կունը իրեն մօտեցիր էր :

Անտարակցու կարծեց որ կոմու ոլիսի սկսի իրեն հետ խօսելու,  
միւս կողմէն կումն ալ անտարակցու կարծեց թէ արիկինը առաջ  
բերանը պիտի բանայ. բայց փոփոխակի լուռ. կեցան, այնչափ սո-  
վորական ողջոյնները անտարակցու անտարման կը համարէին իրարու,  
և զիրար բարեկէն ետե՛ Աօնթէ-Քրիսթօ Ալպէրին դարձաւ, որ  
ձեռքը բացած իւր քովը եկեր էր :

— Մայրս տեսամբ, հարցուց Ալպէր :

— Հիմա զան ողջունելու պատիւը ունեցայ, ըստ կոմու, բայց  
ձեր հայրը չտեսաց :

— Ահա հմտ է, աեսէք, այն երեկի մարդոց խմբեակին մէջ  
բազաքական խնդիրներու. վրայ կը խօսակցի :

— Ասոյի կ'ըսէք, չոն եղաղները երևելի մարդիկ են, ես չեմ դիմեր. և ի՞նչ բանի մէջ երևելի են. զիտէք, պարսն, որ շատ տեսակ երևելի մարդիկ կը դանուին :

— Անոնցմէ մէկը, այն բարձրահասակ նիշար մարդը զիատն մ'է. Հռոմի դաշտին մէջը մողէզ մը դասձ է, որ սովորականէն մեծ ողնայար մ'ունի, և եկած է այս զիւաը զիանոց հաղորդելու : Անոր վրայ երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան. բայց վերջապէս բարձրահասակ պարոնը շահեցաւ. Ողնայարը զիանոց մէջ մեծ շշուկ հանեց. նիշար պարոնը լոկ պատռույ և զէսնի ասպիտէք, պաշտօնատար անուանեցին զան :

— Ա՛ս, կը տեսնմէ որ արժանաւորապէս վարձատրուեր է. ուրիշների ուրիշ ողնայար մ'ալ զտնէ, զինքը հրամանատար պիտի անուանեն :

— Հաւանական է, ըստ Մորսէրֆ :

— Եւ ովլ կրնայ ըլլալ միւսը որ կանաչ դոյնով բանուած կարպոյտ թիվնոց մը հաղեր է :

— Այս թիվնոցը Հասարակագետութիւնը հնարած է, որ ինչոր զիտէք արհետու չհասկնալով և ուղելով Ակադեմաններուն միազգեստ մը տալ, Դատիթ գերձակին ազաշեց որ զգեստ մը նկարէ :

— Ա՛ս, ուրիշն այս պարոնը Ակադեման է, ըստ Մօնթերիսթո :

— Այու, ութ օրէ ՚ի վեր զիանոց ժողովին մասնակից է :

— Եւ ի՞նչ է իւր արժանաւորութիւնն ու յատկութիւնը :

— Իւր յատկութիւնն է կարծեմ հաղարներուն զլուխը դնդանեցներ խօթել, հաւերըն տորոն կերցընել, և շանց ողնայարի ծոծը կէտի ոսկով հանել :

— Եւ ասոր համար զիտութեանց Ակադեմիային մէջ կը դանուի :

— Գաղզիական Ակադեմիային մէջ :

— Գաղզիական Ակադեմիան ի՞նչ զործ ունի այդ բանին մէջ :

— Հիմա ըսեմ, կ'երեսի թէ . . . :

— Իւր ըրած փորձերը զիտութեանց մեծ բայլ մը բնել տուին լուել կ'ուղեք անշուշտ :

— Աչ, բայց խիստ ընտիր ոճով կը դրէ :

— Աւրեմն Հաղարներուն զլուխը զնոդասկզներ խօթելով , հաւերան տակները կարմիր ներինելով . և շաներուն ունայարի ծուծը հանելով մեծ ժառայոթիւն մը կը մաստցանէ : — :

— Ալպէր սկսաւ ծիծաղիլ :

— Միւոր ով է , հարցուց կունը :

— Միւոր :

— Այ՛ , երբորդը :

— Ծոգաւոր կազզյա զղեսառվը :

— Այ՛ :

— Կոմին պաշտօնակիցն է , այն անձը , որ Ատենակալաց միազգունաւ մը հնարելու առաջարկութեան տմինէն առելի ընդդիմացաւ և յաջողեցաւ . ազատ օրագիրները իրեն դէմ խօսեցան , բայց վերջապէս հաշուուեցան անոր հետ , և հիմա կըսեն թէ դեսպան պիշտի անուաննեն զինքը :

— Եւ ի՞նչ արժանաւորութեամբ ատենակալ եղած է :

— Երկու կամ երեք ծիծաղարծ դուսանական խարդը յօրինելով , Սիէքլը օրագրին ընկերութեան չորս կամ հինգ բաժանորդութիւն առնելով , և հինգ կամ վեց տարի շարունակ պաշտօնէին համար քուէ տալով :

— Հիմա չնորհք մը պիտի ընէք ինձ :

— Ի՞նչ կը ինդրէք :

— Ար խնդրեմ որ զիս այդ մարդոց չներկայացընէք , և եթէ առնոր ներկայացուիլ ուղեն , իմացընէք ինձ — :

Այս միջոցիս կոմինը զդաց որ ձեռք մը իւր թեին կը դպչէք : Գլուխը դարձոց և Պ. Տանկլարը տեսաւ :

— Դուք էք , Պ. տեպուհ , բառ :

— Խանու զիս սեպուհ կ'անուանէք , բառ Տանկլար . ալէկ դիտէք որ ես կարևորութիւն չեմ տար ախտղոսիս : Դերակումնը չեմ ես . այնուպէս չէ , Ալպէր , դուք ձեր տիտղոսին կարեւորութիւնն կու տար :

— Անշոշտ , պատասխանեց Ալպէր , վասն զի եթէ դերակումնի տիտղոսը վրայէս հանեմ , բան մը չեմ ունենար . բայց դուք եթէ ձեր սեպուհի տիտղոսն ալ զահէք , դարձեալ միլիոնատէր մ'էք :

— Կարծեմ թէ Յուլիսի թագաւորութեան Ժամանակ ամսնէն ընտիր ախտղոսը այս է , կրինեց Տանկլար :

— Դժբաղդաբար, ըստու Աօնթէ-Քրիսթօ, մարդս կրնայ սեպտ չ, Գաղղիոյ ատենակալ կամ՝ Ակադեմեան ըլլալ, բայց ցմահ միլիոնատէր՝ ոչ երբէք։ Ըստիս յայտնի առաջոյց են Ֆրանքֆորթի Ֆրանք և Բռլին, որոնք միլիոնատէր էին, բայց մասնկայցան։

— Սամց կ'ըսէք, ըստու Տանկլար դոյնը նետելով։

— Եյս իրիկոն նամակէ մը այս լուրը ստացայ. անոնց իլլայ դրեթէ միլիոն մը ունէի. բայց Ժամանակին իմացած ըլլալով, առկէ դրեթէ ամիս մը ստուջ ստակներս անոնց քովէն պահանջից։

— Անոնք իմ՝ վրաս երկու հարիւր հազար Փրանք քաշած են, կրկնեց Տանկլար։

— Աւքեմն կ'իմացընեմ որ իրենց ստորագրութիւնը հարիւրին շնոր արժողութիւն ունի միայն։

— Եյս, բայց ես շատ ուշ իմացայ, ըստու Տանկլար. անոնց ստորագրութիւնը պատուած եմ։

— Աղէկ, ըստու Աօնթէ-Քրիսթօ, այս երկու հարիւր հազար Փրանքն ալ միւսներտն քովը պիտի երթան . . .

— Լոեցէք, այդ խօսքերը մի բանաք հիմա, մանաւանդ ո՛, Գաղղալցանթիի որդւոյն առջեւ —, ըստու Տանկլար Աօնթէ-Քրիսթօյի մօտենաւով, և այս խօսքերը ըսելէն ետեւ Ժպիտով մը երիտասարդին կողմը դառնալով։

Մոբսէրֆ՝ կոմինին քովէն հեռանալով իւր մօրը հետ խօսելու դացեր էր։

Տանկլար ո՛, Գաղղալցանթիի որդին բարեելու. համար կոմինին բաժնուեր էր։

Աւստի Աօնթէ-Քրիսթօ վայրիեան մը մինակ մինայ։

Սրահին տաքութիւնը երթալով կը սաստկանար։

Սպասաւորները պատովներով և սպազպաղակներով լցուած ափօէններով սրահներուն մէջ կը շրջադաշէին։

Աօնթէ-Քրիսթօ թաշկինակովք քրտնալից երեսը սրբեց. բայց ափսէն իւր առջեւէն անցած ժամանակը ետ քաշուեցաւ և զովանալու. համար բան մը չառաւ։

Տիկին աը Մոբսէրֆ իւր աչքը Աօնթէ-Քրիսթօյի վրայէն չէր վերցուցած։

Ավագելին ձեռք չդպրունելը և ետ քաշուելու ժամանակ ըրած շարժումը դիտեր էր :

— Ալպէր, ըստ, բան մը զիտեցիր :

— Ի՞չ բան, մայր իմ :

— Կոմոր մեր տունը երբէք ճաշել չուզեց :

— Այս, բայց իմ տուած նախաճաշը ընդունեց. ըստ որում այն նախաճաշով միստ. ընկերութեանց մէջ մնել :

— Քո նախաճաշիդ զալով կոմոին տունը ճաշեց ըսել չէ, մըմնինց Մէրսէտէս, և այս իրիկուն իսկ կը զիտեմոր բան մը չառաւ :

— Կոմոր շատ քիչ բան կ'ուտէ, մայր իմ — :

Մէրսէտէս ախրութեամբ ժպանցաւ :

— Անոր քովը զնոտ, ըստ, և ուրիշ ափուէ մը առջեէն անշած ժամանակ սովորէ զան որ բան մը առնու :

— Ինչո՞ւ համար, մայր իմ :

— Այս շնորհը ըրէ ինձ, Ալպէր —, ըստ Մէրսէտէս :

Ալպէր մօրը ձեռքը համբուրեց և դնաց կոմոին քովը նստաւ :

Առջիններուն պէս լեցուած ուրիշ ափուէ մը կոմոին առջեէն անշած ժամանակ՝ Մէրսէտէս աեւստ. որ Ալպէր կ'ըստիպէր զան, մինչեւ իւր ձեռոքը պարզպարզ մը անոր կը ներկայացնէր. բայց կոմորը յամառութեամբ մերժեց զայն :

Ալպէր մօրը քով վերադարձաւ :

Կոմուհոյն դպինը նետեր էր :

— Կը աեւսնես, Ալպէր, ըստ, չընդունեց :

— Այս, բայց ինչո՞ւ հաղդ կ'ընես :

— Դիտես, Ալպէր, կինները զարմանալի են. ուրախութիւն մը պիտի զզայի երբ կոմոին բան մը առնելը տեսնէի, եթէ նրան հաս մը իսկ ըլլար առածը : Բայց զոյցէ Գաղղիական սովորութիւններէն շախորժեր, զոյցէ ուրիշ բան մը կ'ուղէ :

— Ոչ ամենն ին, Խտալիոյ մէջ ամեն բան ուտելը տեսայ, անշուշտ այս իրիկուն անհանդառութիւն մը անեցած պիտի ըլլայ :

— Ասկէ զատ, ըստ կոմուհոյն, զոյցէ միշտ տաք կլիմաներու տակ ապրելով, ուրիշներուն չափ տաքութիւնը չզդար :

— Զեմ կարծեր, ըստ որում տաքութենէն նեղուելուն վրայ

դանդատեն իսկ լսեցի , և կ'ըսէք թէ ինչն . Համար վանդակներն  
ալ չեն բանար , քանի որ պատուհանները արգելն բացեր են :

— Սառդիւ , ըստ Մէրսէտէս , հիմա այս միջոցով պիտի ստու-  
դեմ թէ այս ըրածը դիտմանը է թէ ու — :

Եւ սրահն դուրս ելու :

Պայրիկան մը ետքը՝ վանդակաստաները բացուեցան , և սրահն  
մէ ջ գտնուողները պատուհաններուն զարդարող յասմիններուն և բա-  
ղեղներուն մէջն լայտերներով լուսաւորուած պարակը և վրանին  
տակի պատրաստուած բնմիքրիքը տեսան :

Պարողը և պարուհիք , խաղամօլք և խօսասէրք ուրախութեան  
ձայն մը հանեցին և ներս մանող օդը հեշտանգը կը ծծէին :

Կոյն միջոցին Մէրսէտէս ներս մասսաւ առաջուանէ աւելի դունա-  
տեալ , բայց իւր զիմաց վրայ քանի մը պարադայից մէջ նշանաւոր  
եղած հաստատամատւթիւնը նկարուած էր :

Ուղղակի դէպ ՚ի իւր ամուսինը դնաց , որ խմբեակին մը կեղրո-  
նը կը կազմէր :

— Այս պարոնները հօս մի շղթայեր , պարոն կոմն , ըստ և ես  
թէ խաղալ չեն օիրեր , դոցէ հօս խեղդուելէն աւելի պարակըն  
ողը վայելելը նախամմծար կ'ընտրեն :

— Տիկին , պարտէ զը առանձին չենք երթար , ըստ խիստ հա-  
մարձակ ծեր զօրապետ մը :

— Շատ աղբէկ , ըստ Մէրսէտէս . Հիմա ձեզ օրինակը տամ — :

Եւ Մօնթէ-Քրիսթովի դառնալով —

— Պարոն կոմն , ըստ , հաճեցէք պատուել զիս ձեր թեր թերինք  
ներկայացընելով — :

Կոմնը այս պարզ խօսքերուն վրայ դրեթէ սարսուալէն ետե՝ վայր-  
ինան մը Մէրսէտէսին երեսը նայեցաւ :

Այս մէկ վայրիկանը փայլակի մը ուրագութիւնը տնեցաւ , բայց  
Մէրսէտէսին համար դարի մը շափ տե եց , այնշափ ոյն մէկ նայ-  
ուածքին մէջ Մօնթէ-Քրիսթովի տնեցած մասաւ թիւնները յայտ-  
նի կ'երե էին :

Կոմնը իւր թեր կոմսուհոյն ներկայացուց , և մբառվարդերով  
ու դամելիաներով զարդարուած սանդուխներուն մէկն միտուել  
վար ի՞նան :

Նրեաց ետակն ու սիւս սանդուխէն քսանիի չափ Աեմնղներ ու բաշ-  
խով թեան բարձր ձայներով պարագալ զը իջան :



### Գ. Ա. Ռ. Ի. Խ. Ժ. Բ.

ՀԱՅԵՐ ՈՒ Ա. Կ. Ը.

Տիկին աը Մորսէրֆ իւր ընկերէն հետ դէպ ՚ի ծառողի մը  
յառաջացաւ, որուն երկու կողմը բարձրացած թմբի ծառերը զիբար  
դրկելով կամարապատ ճամբայ մը կը կազմէին, և որու մէջէն ջերա-  
մանոցը կ'երթուէր :

— Սրահին մէջ խիստ տաք էր, ոյնպէս չէ, պարոն կոմս, ըս-  
տաւ Մէրսէտէս :

— Ա. յո՛, տիկին, և շատ աղէկ մատծեցիք պատուհաններն ու  
վանդակները բանալ տալու — :

Այս խօսքերն ըսելով կոմսը դիտեց որ Մէրսէտէսի ձեռքը իւր  
բազիին դրայ կը դուզար :

— Բայց դոք ոյդ բարակ շրջազգեստով և ձեր պարանողը վաթ-  
թած այդ շղաշտահով դոյցէ պաղիք, ըստ :

— Գիտե՞ք ուր կը տանիմ՝ զնեղ, բայտ կոմուշին՝ առանց Աօնաթէ-Քրիսթոյի խօսքին պատասխանելու :

— Ոչ, տիկին . բայց կը տեսնեք որ կը հնապանդիմ՝ ձեղ :

— Այս ծառուղոյն ծայրը տեսնուած ջերմանոցը կ'երթանք — :

Կոմուշ հարցընելու պէս Աէրսէտէսի երեսը նայեցաւ . բայց կոմուշին առանց խօսք մը խօսելու . իւր ճամբան շարտնակեց, կոմուշը ձայն չհանեց :

Վերջապէս ջերմանոցը հասան, որուն մէջ եղած զանազան գեղազիկ պատողները արդէն յուլիսի սկիզբը հասունցեր էին, փառք այն ջերմութեան աստիճանին, որով ջերմանոցները կը տալ ցլնեն՝ շատ անդամ բարիդի մէջ բացակայ եղած արևուն այն տաքութեան փոխանակելու . համար :

Կոմուշ հին Աօնթէ-Քրիսթոյի թել թողուց, և դնաց մշկահատ խաղողի որթէն ողկոյզ մը փրցուց :

— Ընդունեցէք այս ողկոյզը, պարսն կոմս, բայտ Աէրսէտէս այնայինի տիսուր ժայխտով մը, որ իւր աշաց ծայրը փայլած արտասուքը կ'երեցընէր . դիաեմ որ մեր խաղողները Սիկլիոյ և Ափորոսի խաղողներուն չետ չեն բազդատուիր, բայց կը յուսամ որ մեր Հիւսիսային խեղճ արեին համար ներողամիտ սիրտի ըլլաք մեղ — :

Կոմուշ խոնարհութիւն մը ըրաւ և քայլ մը եւս քաշուեցաւ :

— Կը մերժէք, ըստու Աէրսէտէս դողդոջուն ձայնով մը :

— Տիկին, պատասխանեց Աօնթէ-Քրիսթօ, մնձ խոնարհութեամբ կ'աղաւեմ որ ներէք ինձ, այդ խաղողը ամեննե ին չեմ սիրելու — :

Աէրսէտէս ողկոյզը դեալինը նետեց : Վօտակայ ծառի մը վրայէն ընափը դեղձ մը կախուած էր, որ խաղողին պէս ջերմանոցին արտեստութեամբ հաղաւածուածու հարցընյած էր :

Աէրսէտէս ուժուածու գաղափար պաղին մօաենալով փրցուց դայն :

— Աւքեմն այս դեղձը ընդունեցէք — , ըստու :

Բայց կոմուշ նոյն շարժուածը ընելով մերժեց :

— Ո՛չ, այս ալ կը մերժէք, ըստու այնողիսի վշտակի ձայնով մը, որ անոր հեծկլտալը չէր կրնար ծածկել . ստուգիւ խիստ դժբաղդ եմ եղեր — :



J. MANDOUKIAN

Առար վրայ երիար լուս թիւն մը տիրեց . խաղաղին պէս գեղձն  
ալ առազին վրայ դլորեցաւ .

— Ուարոն կուն , կրիսեց վերջապէս Աէրուէտէս թախանձաղին նայուածքով մը Մօնթէ-Քրիսթյի երեսը նայելով , արարացի պատառում չ առջըդու թիւն մը կայ որ մը և նոյն առանձաց տակը հային ու աղին մասնակից եղազր մշանջնապէս բարեկամը կընէ :

— Գիտեմ , արկին , պատասխանեց կոմոք . բայց հիմա Գաղղիան կը պանութիք և ոչ Աբարիս . և Գարգիոյ մէջ աղին ու հային մասնակցութենէն մշանջնազր բարեկաման թիւն չկայ :

— Բայց վերջապէս , ըստ կոմուհին սրբի բարախմամբ իւր նայուածքը Մօնթէ-Քրիսթյի աշաց վրայ յարելով և իւր երկու ձեւորը զրեթէ ջղաձգութեամբ անոր թեր բռնելով , բարեկամ ենք մենք , այնպէս չեմ — :

Կոմոին արինը զէպ 'ի իւր սիրար յորդեց , և մեռելատիոյ գունաւեցու . արինը սրան կոկորդը ելնելով՝ իւր ոյտերը պատաց : Ե իւր աչքերը շխացեալ մարդու մը ովք ո քանի մը մանրերկորդ որուոք կը տեսնէին :

— Անշուշտ բարեկամ ենք , արկին , պատասխանեց կոմոք : Ե ինձն բարեկամ պիտի շրլամիք — :

Կոմոին ձայնը ամփին ող Մորսէրի բազմացած ձայնէն տինւամի հերի եր , որ կոմուհին երեսը դարձոց և այնովին հառաջանք մը հանեց + որ հեծաթեան կը նումնէր :

— Ծնորհակալ եմ — , ըստ Աէրուէտէս և իւր Զամբրոն շարուշակից :

Առանց խօսք մը խօսելու պարտէ զին բոլորաիքը շրջեցան :

— Պարոն , կրիսեց յանկարծ կոմուհին տասը վայրիւնն ըլին Շջագայութիւն մը ընելին ետե , տառյգ է որ այնչափ բաներ տեսած + այնչափ ճամփորդութիւնն ը ըրած : և այնչափ նեղութիւնն ը կրած եք :

— Եւս + արկին , խիստ շատ տառապանդներ կընցի , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ :

— Բայց հիմա երջանիկ եք :

— Անտարակոյս , պատասխանեց կոմոք , ըստ որում մէկը Իոհանունից ուրառունջու չէսե՞ք :

Արգի երջանկութիւննիդ կատարեալ է :

— Ներկայ երջանկութիւնս անցետլ թշուառութեանս կը հաւասարի, ըստ կոմնը :

— Ամենեին ամուսնացած չէք, հարցոց կոմնուհին :

— Ես ամուսնանամ, պատասխանեց Մօնթէ-Բրիսթօ սարստալուլ, և ով ըստ ձեզ այդ խօսքը :

— Մէկը չըստ, բայց նորատի և գեղանի անձ մը շատ անգամ Օքերային տանելնիդ տեսնը են :

— Կշխանի աղջիկ մ'է ան, տիկին, զոր Կոստանդնուպոլիսին իր դերի զնեցի, և ես աշխարհիս մէջ սիրոյ ուրիշ առարկայ մը շունենալում՝ ինձ որդեգիր ըրի զան :

— Ուրեմն առանձին կ'ապրիք :

— Այս :

— Քոյր . . . որդի . . . կամ հայր չունիք :

— Մէկը չունիմ աշխարհիս վրայ :

— Ուրեմն ինչպէս կրնաք ասդրիլ առանց սիրոյ առարկայ մը ունենալու :

— Յանցանքը իմն չէ, տիկին + Մալթայի մէջ նորատի աղջիկ մը կը սիրէի և անոր հետ ամուսնանալու վրայ էի, երբ պատերազմը վրայ համնելով ստիպուեցայ հեռանալ անորմէ : Կարծեցի թէ այնչափ կը սիրէ զիս որ մինչև դառնալս պիտի սպասէ և մինչև գերեզմանը ինձ հաւատարին՝ պիտի մնայ : Բայց վերադարձիս՝ զան ամուսնացեալ զայ :

Քանի տարեկանը լրացրնող ամեն մարդու պատմութիւնն է այս : Բայց ես զույե ուրիշներէն աւելի տիտր մը ունէի, և ուրիշ մը զուցէ ինձի շափ շտառապէր — :

Կոմուհին վայրիեան մը լուռ կեցաւ, ըստ որում յայանի կ'երեւէր որ շունչ առնելու պէտք ունէր :

— Այս, ըստ, մարդս մէկ անգամ կը սիրէ . . . և այն սիրայն յիշատակը ձեր սրտէն ելած չէ . . . : Բայց անկէ ՚ի վեր սիր կինը ամենն ին չտեսանք :

— Ամենեին :

— Ամենեին :

— Անոր դանուած քաղաքը մէկ մ'ալ շվերադարձայ :

— Մալթա :

- Այս ։ Մալթա ։  
 — Աւրեմն Մալթա կը դանուի ։  
 — Կարծեմ ։  
 — Եւ ձեզ այնչափ տառապանքներ պատճառելուն համար չեւ  
 վեցիք անոր ։  
 — Անոր, այս ։  
 — Բայց մայն անոր ներեցիք . ուրեմն զան ձեզմ բաժնողներն  
 միշտ կ'ատե՞ք — ։  
 Կամսուհին Մօնթէ-Քրիստոյի առջև կեցաւ անուշահու խաղու-  
 զին մէկ մասը տակաւին ձեռքը բռներ էր ։  
 — Առեք, բայս ։  
 — Ամենենին մշկահաս խաղող չեմ տաեր, աիկին, պատաժա-  
 նեց Մօնթէ-Քրիստօ այնպիսի կերպով մը որպէս թէ ամենենին այս-  
 պիսի խօսք մը առաջն եղած չեր իրենց մէջ — ։  
 Կամսուհին յուսակառ շարժումն մը ողկոյզը մօտակայ խիս ծաւ-  
 ռոց մէջ նետեց ։  
 — Անողքելի էք — , մըմնջեց Մէրուտէռ ։  
 Մօնթէ-Քրիստօ այս կշտամբանց վրայ առջդայ կեցաւ, որպէս թէ-  
 քրեն ողջուած շըլլար այն խօսքը ։  
 Այս միջոցին Ալուր դէոլ ՚ի իրենց կը վագեր ։  
 — Ո՛չ, մայր իմ, բայս, մեծ դժբաղդութիւնն մը ։  
 — Ինչ կայ, ինչ պատահեցաւ, հարցոց կամսուհին՝ աղետուլի  
 երազէ մը արթնցածի պէս . դժբաղդութիւնն մը ըսկը . իրաք՝ ողետք  
 է որ դժբաղդութիւնն մը պատահի ։  
 — Ու, աը Ակլլիքօքը եկաւ ։  
 — Ետքը ։  
 — Եւր կինն ու աղջիկը տանիլ կ'ուղէ ։  
 — Ինչ պատճառաւ ։  
 — Աւան զի Աէն-Աէրանի տիկինն մարբէզուհին Բարիզ հասնեւ  
 շաբ իմեցուցեր է որ զի. Աէն-Աէրան Մարսիլիայէն մեկնելով ա-  
 նաշին օթեանին մէջ մեռեր է : Տիկին Ակլլիքօքը դուարթմաթեան  
 մէջ լըլլալով չեր ակեր ոչ այս դժբաղդութեան հաւատալ և ու-  
 մոփկ ընել իւր ամենանցն խօսքելով : Բայց օրինը Աւանինին ու

ուաջին խօսքերէն ամեն բան դուշակեց, թէե զ. ալ Ալիլլիֆօր անորութեանի պահէնը համար զգուշութիւններ կ'ընէր . այս դոյժը կայծակի հարածածի պէս աղջեց իրեն և նուազեալ ինկառ :

— զ. ալ Սէն-Մէրան օրիորդ Վալանթինի ինչն է, հարցոց կոմիլ :

— Օրիորդին հանին է . իւր թոռը Ֆրանդին հետամուսպեալու . համար Բարիդ կու զար :

— Ինչ կ'ըսէք :

— Այս կերպով Ֆրանդին ամուսնութիւնը ետ կը մնայ, ըստ Ալլիքը : Ինչո՞ւ զ. ալ Սէն-Մէրան օրիորդ Տանկլարի ալ հանին զըլլար :

— Ալլիքը, Ալլիքը, ըստ տիկին ալ Մորուէրի կշտամբական քաղցր ձայնով մը, ինչ կ'ըսէս : Ո՛չ, պարզն կոմս, ըստք անոր որ այս խօսքը շփայելեր, քանի որ կ'ակնածէ ձեզմէ — :

Կոմսուհին քանի մը քայլ յառաջացաւ :

Մօնթէ-Քրիսթօ այնպիսի տարօրինսակ նայուածքով մը և այնպիսի մասիսորչ ու կեղծ զարմանքով մը անոր նայեցաւ որ կոմսուհին ետ դարձաւ :

Անոր ձեռքը բռնեց, ինչ ատեն իւր որդւոյն ձեռքն ալ կը սեղ մէր և երկուքն ալ իրարու միացընելով,

— Բարեկամ ենք, այնուէս շԵ՞ , ըստ :

— Ո՛չ, ձեր բարեկամնը, տիկին, ամենելին ոյդ համարձակութիւնը չունիմ, ըստ կոմսը . բայց ամեն պարագայի մէջ ձեր խօնարչ ծառան եմ — :

Կոմսուհին սրտի անսպատմելի անձկութեամբ մը անորմէ բաժնուեցաւ, և առար քայլ չըրած՝ կոմնը տեսաւ. որ Սէրսէտէս իւր թաշկինակովը աշքքը կը սըրէք :

— Միթէ մօրս հետ անհամաձայնութիւն մը ունիք, ըստ Ալլիք զարմանքով մը :

— Ընդէ հակառակին, պատասխանեց կոմնը, տեսաք որ ձեր առջեւ հիմա ըստ որ իրարու բարեկամ ենք :

Սրահը մասած ճամանակին՝ Վալանթին և զ. ու տիկին Ալլիլլիֆօր անկէ կը մեկնէին :

Աւելորդ է ըսկէ թէ Մորէլ իսկ անոնց ետեղն դորս ելեք  
էր :



### ԳԼՈՒԽ ԺԳ.

#### ՏԻՐԱԿ ՏԸ ԱԼԵՍ-ՄԻՇԱԿՆ

Իրաք ոյ, առ Վելլվօրի տան մէջ ախրաղին տեսարան մը տես-  
դի ունեցեր էր :

Տիկին առ Վելլվօր ե. Վալանթին պարահանգէսը երթալէն ե-  
ակ՝ թագաւորի զործակալու, որ իւր ամեւմնոյն թափանձամբ մօտիկ  
շնելով անոր ընկերանալ չու զնը էր, սովորութեանը համեմատ  
իւր գահլիճը քաշուեր էր ծրար մը թղթերով, որոնց քանակու-  
թիւնը կրնար ուրիշ մարդու սարսափ պատճառել, բայց անոնք իւր  
կենաց անդործ ժամերան մէջ հաղիւ կը բաւէին իւր աշխատու-  
թեան ցանկութիւնը յագեցընելու :

Սակայն այս անդամ թուղթերը ձեի համար կուտուած էին.  
քանզի Վելլվօր աշխատմը, զայած չէր այլ խորհելու. իւր դո-  
ռը դացելով ու հրամացելով որ միայն իմաստ կարեռը զործ մը պա-  
տահանձ տանեւ զան իրեն իմաց տան, իւր թեալթուին վրայ նստաւ  
և եօթը կամ ուիժ օրէ ի վեր իւր տիրութեան և դառն յիշառաւ-

հետջ բաժմակը յարդաղ սրարապաները վերստին մի առ մի իւր մասոց մէջ ներկայացու :

Այս առևն փոխանակ իւր առջեք կուտուած թու զթերը խառնելու , իւր դրանոցին մէկ դպրոցը քաշեց , անոր դաղանի մէկ ծակը բացաւ , և իւր մասնաւոր թզթակցութեանց և աւղեկութեանց խանկաղին ծրարը հանեց , իւր քաղաքական ընթացքն , դրամային դպրծոց , անիրաւ գատաստանաց կամ դաղանի պիրահարութեանցը մէջ իւր թշնամիներն եղողներուն անունները միայն իրեն ծանօթ զրերով անմնց մէջ կարդան . նշանակած էր :

Հիմա որ թագաւորի գործակալը սկսեր էր երկնչիլ , անոնց թիւը զինորը կը սարսափեցներ , թէ և այն ամեն անունները , որչափ և զըրաւոր և ահութու ըլլային , շատ անդամ՝ իւր ժամանակը շարժեր էին , ինչորէս կը ժպտի լերան բարձրադրոյն կատարը համառը համբորդը՝ երբ իւր սառուաց սրամայր ժպտեր , անկուս համաստարհներ և դահավէմներ կը տեսնէ , որոնց հետ այնչափ երկար ժամանակ և դժուարութեամբ մրցեր էր նոյն բարձրութեան վրայ հանելու համար :

Երբ այն անունները վերստին իւր յիշողութեան մէջ ներկայացուց , ու անոնց ծանօթութիւնները վերստին աչքէ անցուց , քննեց . ու անոնց վրայ մասնեց , իւր դլուխը շարժելով ,

— Ոչ , միմաց , այս թշնամիներէն մէկն ալ չի՞նար այնչափ համբերութեամբ և մէծ դժուարութեամբ մինչեւ ցայսօր սպասել , թրպէս դի այս դաղանեաց մէջ ինձմէ վրէ ժլուծելու զայ : Երբեմն , ինչպէս կ'ըսէ Համլէթ , խիստ խորունկ թարուած դաշնակաց շշուկը զետնի տակէն կ'ելնէ , և շըմսլի փոսփորական հուրերուն պէս օդին մէջ յիմարութեամբ կը վարէ , բայց լոկ բոց են անոնք , որոնք բռնկելով զմեզ կը շփութեն : Կարելի է քորսիացին իւր պատմութիւնը քահանայի մը պատմելով , քահանան ալ Մօնթէ-Քրիստոյի պատմեց , և կոմը սույզդ տեղեկութիւն ստանալու համար :

«Սակայն ստոյդ տեղեկութիւնը իրեն ի՞նչ օգուած պիտի ընէ , կրկնեց Վիլը վոր վայրկեան մը մասմէլէն ետեւ , պարսն Մօնթէ-Քրիստո , կամ ու , Զաղան , Մալթացի նաւայարդարի մը որդին :

Թեստղոնիկէի մէջ հանք դանողը այսպիսի տիտր, դաշտնի և առնօդու գործի մը վրայ տեղեկանալէն ի՞նչ պիտի շահի : Աբրայ Պիտղոնիկէն և լորու Ակլորէն, այսինքն իւր բարեկամէն ու թշնամիէն ստացած իրարու հակառակ տեղեկութիւններէն սա միայն ստոյդ, Տիշդ և յայտնի կ'երեկի որ ինձի հետ ամենեին ո՛ք և է ժամանակի և որ և է պարագայի կամ առմի մէջ հաղորդակիցութիւն ունեցած չէ — :

Ակլորֆօր այս խօսքերը իւրովին կ'ըսէր բայց իւր ըսածներուն ալ համազուած չէր :

Ամենէն սոսկալին դաղսնիքին երեան ելնելը չէր, քանզի կրնար ուրանալ կամ պատասխան մը առաջ :

Իրեն անհանգստութիւն պատճառողը պատին վրայ արխոներանդ զրերով երեցած Մանէ, Թէկէ, Փաքէուը չէր, այլ զանոնք զծող ձեռքին մարմինը կ'ուզէր ձանշնալ :

Այն միջոցին որ իւր սիրու հանդարանցընելու կը ջանար, և իւր փառապիրութեամբ երազած այն քաղաքական ապագային տեղը՝ այնշափ երկար ատենէ 'ի վեր քունի մէջ եզող թշնամին արթընցընելու երկիւղին հետ մէկտեղ իւր անային ուրախութիւնները սահմանող ապագայ մը կը դիտէր, իւր տանը դառմին մէջ կառքի մը ձայնը առաւ, ետքը տարիքը առած անձի մը հառաջելով և ողբաշով տանգուի խէն վեր ելնելը լսեց :

Ակլորֆօր իսկոյն իւր դահշլիմին պարզունակը բացաւ, և պառատիկին մը առանց իւր դալուսազ իմացընելու՝ ներս մտաւ իւր ցիսին բազկին տակը առած և զլխարկը ձեռքը բռնած :

Իւր սպիտակացեալ մազերուն տակը զեղնած փղոսկրի նման տժդոյն հակատը կ'երեկէր . և իւր աչքերը, որմայ անկիւնները տարիքը խորունկ խորշը բացած էր, լացերէն օւռենալով զրեթէ աներեցից եղեր էին :

— Ո՛չ, պարսն, այս ի՞նչ դժբաղդութիւն է, ըստ աիկինը, ես ալ պիտի մեռնիմ, այն, անշոշու ևս պիտի մեռնիմ — :

Այս խօսքերէն ետեւ դրան ամենէն մօտ թևաթոյին վրայ ինիւա և սկսաւ հեծկլտալով ողբալ :

Ծառաները դրան սեմոց վրայ կանցնած և ներս մանելու չհայ-

մարձակելով՝ Կուտաքթիկի ծերունի ծառային կը նայէին, որ իւր տիրոջը սենեկին այս ձայիր լսելով՝ վազեր եկեր և միւս ծառաշներուն ետին կանգներ էր :

Ակլլիքօր խր զոքանչին քաղլը վաղեց, վասն դի եկազը տիրին ար Սէն-Մէրանն էր :

— Ո՞վ Տէր Աստուած, Բնշ կոյ, տիկին, Հարցոց անոր, ինչ շնու այդպիս կը տաղնասիր. Պ. ար Սէն-Մէրան հետերնիդ չէ :

— Պ. ար Սէն-Մէրան մմատ —, ըստ մարքեզու հին առանց երկարաբաննլու և դրեթէ ապուշ նայուածքով մը :

Ակլլիքօր քայլ մը ետ քաշուեցաւ և ձեռքերը իրարու զարկաւ :

— Մեամն . . . , ըստ Ակլլիքօր կակազելով, այսպէս յանկարծ մնամն . . . :

— Ուժ օր առաջ, շարունակեց տիկին ար Սէն-Մէրան, ճաշէն ետեւ միատեղ կառքը հեծանիք, Պ. ար Սէն-Մէրան քանի մը օրէ ՚ի վեր անհանգստութիւն մը ունէր, սակայն մը սլրելի Վալանդինը տեսնելու բաղնանքը անոր ոյժ կու տար, և իւր անհանգստութիւնը բանի տեղ չդնելով ուզեց ճամբայ ելնել, երբ Մարսիլիայէն վեց մղոն անդին՝ խր սովորական դեղահատերը առներէն ետես այնպիսի խորին քաւնի մէջ ընկղմեցաւ, որ բնական չէր երեւէր ինձ, սակայն զան արթնցընելու կ'երկմատէի, և անսայ որ իւր դէ մքը կը կարմրէր և քոնդին երակները սովորականէն աւելի սասակութեամբ կը բարախէին : Գիշերը վրայ համեսլով և բան մը չականելուս՝ թռդուցի որ քնանայ. շատ շանցաւ՝ խորունկ և կոկծեցոց ձայն մը հանեց երազի մէջ տաղնապող մարդու մը պէս, և յանկարծական շարժմամբ զլու իւր դէոյ ՚ի ետեւ կախեց : Սենեկապանս կանչեցի, կառավարը կեցոցի, Պ. ար Սէն-Մէրանի անունը տուի, ու դելից սրուակս անոր քթին բոհեցի, ամեն բան լմնցեր էր, ամուշ սինս մնաեր էր, և մինչև Եքս անոր անշնչացեալ մարմնոյն քոյ մնացի — :

Ակլլիքօր աղջած և բերանը բաց մնացեր էր :

— Անսարակոյս բժիշկ մը կանչեցիք :

— Անմիջապէս, բայց ինչպէս որ ըսի՛ շատ ոչ էր :

— Այս , բայց դոնէ կրնար համիլտոնը թէ ողորմելի մարզք զը ինչ հիանդով մէկամբ մնաւ :

— Ասոկալի կտըռաւած մը կ'երեի ըստ բժիշկը :

— Եւ ինչ ըրիք այն ատեն :

— Ու այ Աւա-Մէրան միշտ կ'ըսէր որ եթէ Բարիզէն հեռու մնոնի , կը բաղձայ որ իւր մարմինը բնասանացը շիրմին մէջ թաղուի : Կապարեայ արկղի մը մէջ դնել առի դան և անորմէ քանի մը օր առջեւ անցայ :

— Ո՛չ , խեղճ մայր իմ , ըստ Ա.իլլիոր . այդպիսի մեծ դժբաղ դութենէ եաւ ձեր այդ տարիին մէջ ինչոր կարող եղաք այդ դորձերը կատարել :

— Աստուած ոյժ տուս ինձ . ասկէ զատ՝ միմէկ սիրելի ամուսինս նոյնը պիտի չընէ՞ր ինձ ինչ որ ես իրեն ըրի : Անորմէ բաժնուելէս ՚ի վեր՝ կարծեմ թէ խենթեցած եմ . ալ չեմ կրնար լալ . ստոյդ է այն խօսքը թէ իմ տարիքս եղողներուն արտասու քը կ'ըստառի . սակայն ինձ այնովէս կ'երեի թէ այսպիսի գժբաղդութեան մէջ եւ զողը սրէաք է որ կարենայ լալ : Ո՞ր է Ա.ալանթին , ոպարօն , անոր համար մնաք համբայ ելած էինք , կ'ուղեմ Ա.ալանթինս տեսնել — :

Ա.իլլիոր մոտեց որ խխոտ տարադէալ պիտի ըլլայ եթէ Ա.ալանթին ոպարահանդէոր զնայ ըսէ . ուսաի մարզք զուհոյն պատասխանեց թէ իւր թուը մօրուին հետ դուրս ելած է և խկոյն մարդ պիտի զրկէ զանանք կանչելու :

— Հիմա շուտով կանչել տուէք , սպարան , կ'աղաշեմ — , ըստ տիկինը :

Ա.իլլիոր տիկին այ Աւա-Մէրանի թէը իւր թե ին տակը առաւ , և անոր աննեակը տարաւ զան :

— Հանգտացէք , մայր իմ — , ըստ անոր :

Մարքէզուհին այս խօսքին վրայ դլուխը վերցուց և այն մարդը առեմնելով , որ իւր այնչափ ցաւած աղջիկը կը յիշեցընէր , որոն կենդանի պատկերն էր Ա.ալանթին , անոր տուած մայր անունին վրայ սիրաը շարժեցաւ , սկսաւ լալ և թեաթուի մը վրայ ծնբացընեալ իյնալով իւր ողատկառելի դլուխը ծածկեց :

Վ.իլլիքօր իւր կին ծառաներուն պատասիրեց որ հաղ տահին առար, ինչ առեն ծերունի Պարուան ալ ահա դողով իւր տիրոջը քով կը վաղեր, վասն զի ծերերը ուրիշ բանէ չեն վախնար, բայց եթէ երբ կը տեսնեն որ մահը զիրենք մողլով ուրիշ ծերի մը կեանքը վերջացուցած է:

Սէն-Մէրանի տիկինը միշտ ծնրագրեալ ջերմեռանդաթեամբ առջօմելու ժամանակ՝ Ծաղաւորի զործակալը կառք մը բերել տուան և ինքը անձամբ իւր կինն ու աղջիկը բերելու դնաց:

Պարահանդէսին սրահը մտած ժամանակ այնչափ դունատեալ կ'եւ թեէր, որ Վալանթին անոր քովը վաղեց դոչելով:

— Ո՛չ, հայր իմ, դժբաղբութինն մը պատահեցաւ արդեօր:

— Սիրելի հանիկ եկաւ, Վալանթին, ըստ պարսն տը Վիլլիքօր:

— Հաստ հաւս չեկա՞ — , հարցուց նորատի աղջիկը դոզդզաւ լով:

Պ. տը Վիլլիքօր պատասխանի տեղ թեւ իւր աղջկան ներկաւ յացոց :

Վալանթինի զլուեր թալիութեամբ դարձաւ:

Տիկին տը Վիլլիքօր անոր օդնութեան հասաւ և իւր ամուսնոյն հետ մինչեւ կառքը տարառ զան:

— Տարօրինակ բան է այս, ըստ տիկին Վիլլիքօր + որո՞ւ մաքէն կ'անցնէր այսովիսի բան մը — :

Եւ բոլոր այս ընտանիքը այսպիսի անհնարին թախծութեամբ սրահէն դորս եւան և այն ուրախ դիշերին մնացեալ ժամերուն վրայ սե քողի նման իրենց տրամութիւնը տարածեցին :

Սանդուխին վարի կողմը Վալանթին Պարուան տեսաւ, որ իրեն կ'ըսպասէր:

— Պ. Կուտարթիկ այս իրիկուն զձեղ տեսնել կ'աւգէ, ըստ ցած ձայնով մը :

— Հանիս տեսնելէս ետե կու դամ — , ըստ Վալանթին :

“Արատի աղջրիկը իւր այս տկարութեանը մէջ հակըցեր էր որ այս ժամուս տիկին տը Սէն-Մէրանի ողէ տը անեցած անձը ինքնէ էր :

Վալանթին իւր հանին անկողնոյ մէջ դտաւ :

Անձայն դրկոնդիտաւութիւն , թախծալից որտի այտում , ընդհաւալ հառանքաներ , կիրիչ արտասուր , աչա ատմիք էին սյուտեսկ յութեան պատմուելու կարելի եղող մանրամասն պարագաները , տիկին առ Վիլլֆօր իւր ամուսնոյն թեէն շրամնուելով , ոգործի այրի կոոչ առջե զ ռնէ ըստ երեւութից ակնածանօք կեցեր էր :

Վայրկեան մը ետքը՝ բերանը իւր ամուսնոյն ականջին մօտեցը նելով ,

— Զեր հրամանավը , ըստ , աւելի աղէկ է որ ես քաշտիմ , վասն զի իմ ներկայաժիւնս դայէ աւելի վշտագնէ ձեր զորանքը — :

Տիկին առ Սէն-Մէրան անոր ձայնը լսեց :

Էա — Այն , այն , ըստ Վալանթինի ականջին , թող երթայ , բայց դուն քովս կեցիր — :

Տիկին առ Վիլլֆօր դուրս ելաւ , և Վալանթին առանձին իւր հանին անկողնոյն քովը մնաց . վասն զի թագաւորի դործակալը այս անակնիւպ մահուան վրաց վշտամաժիւն մը զգալով իւր կոոչը կերպացաւ :

Պ. Կուարթիէ տան մէջ եղած ձայները լսելով , ինչպէս ըստիք , իւր ծեր ծառան զրիեր էր որ ոտանձառը ինչ ըլլալը իմանայ :

Երբ Պարուա վերադարձաւ , Պ. Կուարթիէ իւր կենդանի և հոմանարալի աշօքը հարցուփորձ ըրաւ . զան :

— Ափսոս , պարոն , ըստ Պարուա , մեծ զժբաղդութիւն մը պատահէր է . տիկին առ Սէն-Մէրան Բարիդ եկեր է , և իւր ամուսնոը մնաեր է — :

Պ. առ Սէն-Մէրան և Պ. Կուարթիէ իրարու . Հետ ըարեկամական սերտ կաստով մը կաստուած չէին . սակայն ինչպէս յայտնի ծերի մը մահուան զդյալը մեծ ազդեցութիւն կ'ընէ ուրիշ ծերի մը :

Կուարթիէ տառապեալ և մարծութեանց մէջ ընկղմած մարդու մը պէս դլուիը կուբծքին վրայ կախեց , Ետքը մէկ աշքը չողեց :

— Օրիորդ Վալանթինը կ'ուզեք — , ըստ Պարուա :

\*Սուարթիէ նշան ըրաւ թէ այս :

— Պարտհանգէսն է՝ ինչպէս որ պիտեք , քանզի փառաւոր հազարամած եկաւ ձեզի մեար բարեւ ըսելու — :

\*Սուարթիէ վերսավին ձախ աչքը զոցեց :

— Զան տեսնել կ'ուզեք , այնպէս չէ :

\*Ծերառնին նշան ըրաւ թէ իւր փափարը այն էր :

— Անշուշա տիկին առ Մարտէրֆի առնեն հիմա պիտի կանչեն զան . անոր դարձին կ'ըսպասեմ , և կ'ըսեմ որ ձեր քովը դայ այս չէ ուղածնիդ :

— Այս — , պատասխանեց կաթուածահարը :

Աւստի Պարուան Վալանթինի դարձին սպասեց , և ինչպէս ըսկիք՝ իւր համին փափարը անոր խնացուց :

Վալանթին ալ ծերառնին բաղձանքը կատարելու համար՝ անոր սենեակը եկեր էր տիկին առ Աէն-Մէրանի սենեկէն ելնելէն ետե , որ թէպէտ խիստ յտզուած էր , բայց վերջապէտ յոզնութենէն ընկածելով ջերմատ քունի մը մէջ ընկղմեցաւ :

Չեռքի հեռաւորութեամբ փոքր սեզան մը մօաեցուցեր էին առնոր , որոն վբայ շիշ մը նարնջի օշարակ , (որ իւր սովորական ըմպելիքն էր) և բաժակ մը դրեր էին :

Ասկէ ետե՝ ինչպէս ըսկիք՝ նորատի աղջիկը Կուարթիէի սենեակը երթալու . համար մարդք զուհոյն անկունին քովէն հեռացեր էր :

Վալանթին եկաւ ծերառնոյն համբոյր մը տուաւ , և անոր խիստ խանդաղատանօք իւր երեսը նայելը տեմնելով , իւր աչքերէն վերտինն արտասուք բղիկիլը զդաց , որոնց աղբիւրը ցամքած կը կարծէր :

\*Ծերառնին իւր նայուածքը անոր վբայէն չէր վերցըներ :

— Այս , այս , ըստ Վալանթին , ըսել կ'ուզես թէ հաս միշտ սիհափ սիրէ զիս , այնպէս չէ — :

\*Ծերառնին նշան ըրաւ թէ իւր նայուածքով չիշդ այն ըսել կ'ուզեր :

— Բարեբաղդաբար այդպէս է , կրկնեց Վալանթին , եթէ ոչ ինչ պիտի ըլլայի ես , ով Աստուած իմ — :

Առաջուանի ժամը մէկն էր . պարուա , որ քնանալու մեծ վատիար ուներ , դիսողաթիւն ըրաւ . որ այնպիսի վշտալի դիշեր մը ամեն մարդ պէտք է որ հանգստանայ : “Օքը ունին չուզեց ըսել թէ իւր հանգստաթիւնը իւր թուր տեսնելն էր : Աւստի Վալանթիւնը դրկեց որ քնանայ . իրօք արտօնութիւնն ու յոդինութիւնը նորատի աղջկան անհանգստաթիւն մը պատճառեր էին :

Հետեւեալ առաջ Վալանթիւն իւր հանիին սենեակը մանելով , անկողնոյ մէջ զատ զան + մարգեցու հայն տենդը մինչեւ այն ժամը դադրած չէր . իւր աչքերը կրակի պէս կ'այրեին , և ջղային սաստիկ յուզանի մը ենթակայ եղեր էր :

— Ո՛վ Աստուած իմ , տակաւին անհանգիստ ես , սիրելի հանիս , զուեց Վալանթիւն անոր անհանգստաթեան նշանները տեսնելով :

— Ո՛չ , աղջիկս , ոչ , ըստ տիկին առ Աէն-Մէրան . բայց անհամբերութեամբ քեզ կ'ըստաւէի որ հայրդ հոս կանչելու զրկեմ :

— Հայրս , ըստ Վալանթիւն անհանգստաթեամբ մը :

— Այո , խօսելիք տնիմ անոր — :

Վալանթիւն շհամարձակեցաւ . իւր հանիին կամբին դէմ կենալ , մանաւանդ որ պատճառը չէր դիաներ . վայրկեան մը ետքը Վիլբֆօր ներս մնաւ :

— Պարոն , ըստ տիկին առ Աէն-Մէրան առանց դարձուածոյ կերպեր բանեցընելու և իւր ժամանակին կարծութեանը վրայ վախցողի մը պէս , ինձ զրած էիք որ այս աղջիկը ամուսնացընելու դիաւուորութիւն մը տնիք :

— Այո , տիկին , պատասխանեց Վիլբֆօր . զիտաւ որութիւննիս հաստատուեցաւ , և դաշինք մը եղաւ :

— Փեսայացտիւն անունը Պ. Թրանզ ա՛շբինէ է :

— Այո , տիկին :

— Այն ա՛շբինէ զօրապետին որդին է , որ մեր կողմնակիցն էր , և Յափշտակչին Ելայա կղզին դառնալէն քանի մը օր առաջ սպաննուեցաւ :

— Ճիշդ ան է :

— Ժադուկէնի մը թուան հետայս ամուսնութիւնը ընելու դրժակամութիւն չցոյցըներ :

— Տարեբաղդարաք մեր քաղաքական երկագառակութիւնները վերաշացած են, մայր իմ՝ ըստ Ալիլլիքօր՝ պարոն ա'լիրինէ իւր հօրը մահաւան ժամանակ զրեթէ մանուկ մ'կը, հաղիւ թէ ու. Կուարթիւն կը ճանանայ, և անտարակոյս եթէ ոչ ուրախութեամբ, դոնէ անտարքերութեամբ ողիսի առանէ զան :

— Այցելու կը առանէք այս ամսումնութիւնը :

— Ամեն կերպով :

— Երիտասարդը Բնչողէս է :

— Ամենուն յարդանքը կը վայելէ :

— Յարսմար է :

— Խիստ պառաւութը ճանչ ցուած երիտասարդներէն մին է — և Այս ամեն խօսակցութեամն միջային Ալալանիլին անձայն կեցեր էր :

— Ուրեմն, ըստ ափկինարը Աէն-Աէրան քանի մը մահրերկրորդ մասծելէն եաւ, պէտք է որ շուտով կատարենք, քանզի ապրեւու ժամանակս կարճ է :

— Ի՞նչ կ'ըսէք, ափկին, ի՞նչ կ'ըսեմ, հանիս, գոչեցին միատեղ ու Ալիլլիքօր և Ալալանիլին :

— Ես զիտեմ ինչ կ'ըսեմ, կրինեց մարքէզուհին : պէտք է որ անտարք, որպէս զի քանի որ Ալալանիլին մոցյը շունի, դոնէ իւր հանիին օրհնութիւնը առնու : Քանզի ինձմէ զատ մէ կը շունի իմ ողօրմելի Ուշնէ աղջկանս կողմանէ, զոր գուք այնչափ շուտով մռաւ ցաք, պարոն :

— Ա՛հ, ափկին, ըստ Ալիլլիքօր, կը մասնաք որ այս խեղջ զաւկին կորոնցոյնած մօրը տեղ ուրիշ մայր մը տալ պէտք էր :

— Մօրու մը երրեք մօր տեղը չկրնար բանել, սրախն : բայց ինզիրը ատար վրայ չէ : ինզիրը Ալալանիլինի ամուսնութեամն վրայ է : մեռեալները հանդարս թողունք — :

Այս ամեն խօսքերը այնպիսի ձայնով մը արտասաներ էր, որ զրեթե գուանցութեամն կը նմանէր :

— Զեր փափաքը լինվին ողիսի կատարեմ; ափկին, ըստ Ալիլլիքօր : մահաւանդ որ իմ բաղձանքս ալ ձերինին համեմայն է : ու: Թը անզ ա'լիրինէն բարին հասնելուն ոկէմ : :

— Սիրելի հանիս + ըստ Ալլանթին + միջեւ պատշաճութեանց պիտի չնայինք, մեր սուզը պիտի չյարկենք . . . այսպէս շարագուշակ ժամանակի մէջ կ'ուզէք ամուսնութիւնը կատարել:

— Զաւակս, ընդումիջնեց մարգեզուհին աշխատմիւ, հեռացուր մաքեզյդ դռե հիմ մասծոթիւնները, որոնք ակարամիտներու արդելք կ'ըլլան իրենց տպագան տպահովելու: Ես խոկ մայրս մահուան անկաղնոյ մէջ եղած ժամանակ ամուսնացայ, բայց այս պատճառուու ալ դժբաղդ չեցայ:

— Գարձեալ մեռնելու խօսք կ'ընեք, տիկին, կրինեց Ալիլֆօր:

— Այս, գարձեալ կ'ընեմ. . . բայց դուք չեք համկընար + ես պիտի մեռնիմ կ'ըսնեմ. եւ մեռնելուս առաջ կ'ուզեմ փեռաս աեւնել, կ'ուզեմ պատուիրել անոր որ իմ մռուս երջանիկ ընէ, կ'ուզեմ անոր աշքերէն խմանալ թէ ինձ հնազանդելու: Եւ Ալերջապէս կ'ուզեմ ճանչնալ զան, շարունակեց հանին, որոյն ողի եթէ արժանաւոր մէկը չէ, զերեզմանիս մէջն զամ զինքը աեւնելու:

— Տիկին, ըստ Ալիլֆօր, հեռացուցէք ձեր մաքեն այդ յուղաւալ դաշտիարները, որոնք պրեթէ յիմարտթեան կը առնին: Աեռեալները իրենց գերեզմանին մէջ պառկելնուն պէս առանց երրեք անկէ ելնել կարենալու կը ննջն:

— Ոհ, այս, այս, հանդարակցուր սիրոտ + սիրելի հանիս, ըստ Ալլանթին:

— Ես ես կ'ըսեմ, պարսն, թէ ձեր կարծածին պէս չէ. այս իրիկուն սոսկալի քուն մը քնացայ. քանզի հոգիս մարմինէս բաժնուած կը աեմնէի + աշքերս, զգոնք բանալու. կը չանայի, ակամայ կը դոցէին. դիտեմ որ այս բանս ձեղ անկարելի պիտի երեկի, մանաւանդ ձեզ, որպան. հաւատացէք որ տիկին Ալիլֆօրի հազորելու դահընին մէկ դռուն եղած անկիւնէն սպիտակ ստուերի մը անշշոկ ներս մանելը և նոյն ձեր կանգնած աեզը զալը դոց ազըս տեսայ — :

Ալլանթին վախնալու ձայն մը հանեց:

— Զձեզ սաղնապեցրնողը ջերմն էր, տիկին, ըստ Ալիլֆօր:

— Գուք մի հաւատագ եթէ կ'ուզէք, բայց ես ըստիս վրայ առ

ողահով եմ. սպիտակ ստուեր մը տեսայ, և անշուշտ զդոյարած նուցս միայն մէկուն վկայութեանը հաւատալու համար այդ բաժան կին շարժիլը ընեցի, այո, այդ սեղանին վրայ եղաղ բաժակին:

— Ո՞չ, սիրելի հանի, երազ մ'էր այդ :

— Ամենին երազ չէր + վասն զի ձեռքս զանդակին երինցոցի + և զայն հնչեցացած ժամանակս ստուերը աներեայթ եղաւ : Սենեկապանը այն ատեն այս ճարգով ներս մասաւ :

— Ռւրեմն մարդ մը տեսաք :

— Ռւրաւականները միայն անոնց կ'երեխն որժնք որ այէտք են տեսնել, անշուշտ իմ ամուսնոյս հոգին եր, և եթէ ամուսնոյս հոգին զիս կանչելու կու դայ, ինչո՞ւ համար իմ հոգիս աղջիկս սրաշտպանեւլու պիտի չգայ : Յարաբերութեան կազը կարծեմ առելի ուղղակի է :

— Ո՞չ, աիկին, ըստու Ափլըֆօր ականայ սիրազ շարժելով, վերանցոցիւք այդ տիսրազին խօսքերը, դուք մեղի հետ պիտի ապրիք, տականին երկար ժամանակ և երջանիկ պիտի ապրիք, և մենք սիրափ սիրենք ու յարգենք զձեզ և պիտի ջանանք մացընել . . . :

— Երբեք, քնառ ամենին, ըստու մարգեզուհին : Ա. ա'կըինէն երը սիտի վերագառնայ :

— Ասյրիեանէ վայրիեան անոր կ'ըստպանենք :

— Ըստ աղջկ, դալուն պէս՝ իմացոցիւք ինձ : Ըստ ընենք, առ հասպարհնք : Ասկէ զատ՝ կ'ուզեմ հօտար մ'ալ տեսնել, որպէս զի բոլոր մեր ինչքը Առլանթինին ըլլուր տառահովնեմ :

— Ո՞չ, մայր իմ, մրմիջեց Վալանթին իւր շորթերը հանինին կիզիչ ճակախն յարելով. զիս մեռցընել կ'ուզես. չերմէ վրադ է տականին. քեզի պէտք եղածը հօտար մը չէ, այլ բժիշկ մը :

— Բժիշկ մը, ըստու մարգեզուհին ուսերը թոթվելով, ես հիւնդ չեմ, միայն ծարաւութիւն ունիմ :

— Ի՞նչ կ'ուզես խմելու, բարի հանիս :

— Գիտես որ միայն նարնջի օշարակ կը խմեմ միշտ : Բաժակս սեղանինին վրայ է, ինձի տուր, Վալանթին — :

Վալանթին բաժակը լեցուց և դրեթէ սոսկումով մը տառ զայն իւր հանին ներկայացնեց. վասն զի մարգեզուհին կը սկնդէր ոք այս նոյն բաժակը ստուերը բռներ էր :

Արքէղուհին ՚ի մի ումոյ պարզեց զայն :

Նաքը զլուխը բարձին դրաւ կրկնելով :

— Կօտարը, Կօտարը կանչեցէք — :

ու առ Անիլլի Փօր դուրս ելաւ, Աւալանթին խր հանիին անկողանցին գրվը նստաւ :

Աերեկէր թէ ողորմելի աղջիկն ալ խիստ պէտք ուներ այն քժշկին : որ իւր հանիին համար կանչելու առաջարկեր էր :

Բոցանման կարմրութիւն մը իւր այտերուն խնձորը կ'այրէր, հետալով շունչ կ'առնաւր և երակը ջերմոտի ողէս կը բարտիւր :

Պատճառը այն էր որ թշուառ աղջիկը կը մտածէր թէ ինչ յուսահատութեան մէջ սիստի իյնար Մաքսիմիլիէն երբ իմանար որ ակիկն առ Սէն-Մէրան փոխանակ իւր բարեկամներէն մէկն ըլլալու, զինքը չնանչցած՝ իւր թշնամին եղեր էր :

Որչափ անդամ՝ Աւալանթին մտածեր էր որ ամեն բան իւր հանիին պատմէ, և բնաւ երկմտելու չէր եթէ Մաքսիմիլիէն Սորէլին սհաւնը Ալոքէր առ Սորսէրֆ կամ Ռատու առ Շամօ-Ռինօ ըլլար, սակայն Սորէլ հասարակ ժողովրդենէ յառաջ եկած էր, և ազնուատոհմ չեղողներուն առ Սէն-Մէրանի մարքէղուհու հւոյն ոնեցած արհամարհանքը Աւալանթին շատ աղէկ կը ճանչնար :

Այս զաղոնիքը անօգուտ տեղը յայտնելը աղէկ դիմանալով, Աւալանթին ամենն ին չհամարձակեցաւ երեան հանել զայն . Քանզի իւր հայրն ու մօրտոն այս դաշտնիքը իմանալնուն պէս ամեն բան սիստի կորսուէր :

Գրեթէ երկու ժամ այսպէս անցաւ, տիկին առ Սէն-Մէրան տաղնապեալ և յուղեալ քունով կը քնանար, երբ Կօտարին զալը խմացւցին :

Թէև այս լուրը խիստ ցած ձայնով խմացոցեր էին, բայց սիկին առ Սէն-Մէրան զայն լուղով իւր դլուխը բարձրացաւ :

— Կօտարը ըսկիք, թող զայ, ըստաւ, թող զայ — :

Կօտարը դրան առջնը ըլլալով ներս մնաւ :

— Գնա, Աւալանթին, ըստաւ տիկին առ Սէն-Մէրան, ու զիս պարոնին հետ առանձին թող :

— Բայց, մայր իմ . . . :

— Պհաւ , զնամ — :

Նորատի աղջիկը իւր հանիքին հակասը համբորեց և աչքերը  
թաշկնակովը դոյքելով դուրս եւաւ :

Դրան առջեւ սենեկապանը տեսաւ , որ բժշկին դալը և սրահին  
մէջ սպասելը խմացուց :

Վալանթին արտորնօք վար իջաւ :

Բժիշկը ընտանիքին բարեկամը և ժամանակին ամենէն ճարտար  
բժիշկներէն մէկն էր . Վալանթինը շատ կը սիրէր , վասն զի առ  
նոր աշխարհը դալը տեսներ էր :

Գրեթէ օրիորդ տը Ալիլֆօրի հասակաւ աղջիկ մը ունէր , որ  
կուրծքի հիւանդութիւն ունեցող մայրէ մը ծնած էր . մինչեւ անոր  
աշխարհը դալը իւր կնոջ կերպը վատանդի մէջ էր :

— Բարի եկագ , սիրելի Պ. ա'Ավրինեի , ըստ Վալանթին , մեծ  
անհամբերութեամբ ձեղ կ'ըստասէինք . բայց նախ ըսէք , բնշպէս  
են Մասրէն և Անթուանէթ — :

Մատրէն Պ. ա'Ավրինեի աղջիկն էր և Անթուանէթ անոր եղա  
բօր աղջիկը :

Ա. ա'Ավրինեի տրտմութեամբ ժատեցաւ :

Անթուանէթ շատ աղէկէ , ըստա , և Մատրէն բաւական լաւ  
վիճակի մէջ կը զանուի : Զիս ինչո՞ւ կանչեցիք , սիրելի աղջիկս ,  
ոչ ձեր հայրը հիւանդ է և ոչ տիկին տը Վիլֆօր : Մեր ջղա-  
յին հիւանդութենէ աղտատ չըլլալնիս յայանի է , ուստի չեմ կար-  
ծեր որ այնպիսի բանի մը համար կանչէք զիս , որ մեր երեակայու-  
թենէն դուրս ըլլայ — :

Վալանթին կարմրեցաւ :

Պ. ա'Ավրինեի շատ անգամ ճիշդ դուշակութիւն կ'ընէր . ըստ  
որում մէկուն բարցյականէն բնականը զննող բժիշկներէն մէկն էր :

— Ոչ , ըստ Վալանթին , հանիքս համար կանչեցինք զնեղ .  
մեղ պատահած զժբաղդաթիւնը խմացաք , այնպէս չէ :

— Բան մը չեմ դիտեր , ըստա Պ. ա'Ավրինեի :

— Ափսո՞ս , ըստ Վալանթին իւր հառաջանքը դապելով , հառ  
մեռաւ :

— Պ. տը Աէն-Ալբանը :

ՀԱՅԻ :

— Յանկըմիծ :

— Յանկըմիծ ական կալուածէ մը :

— Կալուածէ մը , կրկնեց բժիշկը :

— Այս , ողորմելի հանիս ալ , որ իւր ամեւ օինէն երթէք բաժանուած չէր , այնպէս կը կարծէ թէ ոլ . որ Աէն-Մէրան զինքը միւս աշխարհէն կը կանչէ , և թէ ինքն ալ անոր քովը ովկտի երաժայ : Կ'աղաքեմ , ոլ . Ավրինեի , աղէկ հազ տարեք հանիխ :

— Ուր է հիմա տիկինը :

— Կոտարին հետ իւր սենեակը կը դանուի :

— Ոլ . Նուարթիկն ինչպէս է :

— Միշտ նոյն վիճակին մէջն է . խելքը կատարեալ կենդանի է : Եայց ինքը նոյն անշարժութեան և նոյն համրութեան մէջ կը դանուի :

— Եւ ձեզի համար նոյն սէրը ունի , այնպէս չէ , սիրելի դաւակո :

— Այս , ըստ Վալանթին հառաջելով , զիս շատ կը սիրէ :

— Եւ ով շոփեր զձեզ — :

Վալանթին տիսրութեամբ ժագանյաւ :

— Եւ ինչ է ձեր հանիխն հիւանդութիւնը :

— Զոյլին զարմանալի յուղմանք մը , և տարօրինալ ու անհանդիստ քուն մը ունի . այս առտու կը սիրէ թէ իւր քունին մէջ իւր հողին տեսեր էր , որ քնայցած մարմարն վրայօք օդին մէջ կեցեր էր . զառանցութիւն մ'է այս . կը հաստատէ նաև թէ ուրուականի մը իւր սենեակը մանելը տեսեր , և անոր իւր բաժակին դպչիլը լսեր է :

— Զարմանալի բան , ըստ բժիշկը , չէի դիտեր որ տիկին ար Աէն-Մէրան կը զառանցէ :

— Ես իսկ առաջին անդամն է որ կը տեսնեմ , ըստ Վալանթին . այս պատճառաւ շատ վախցոց զիս . կարծեցի թէ իննիթեցաւ . հայրս կը հանչնաք , պարան , և դիտէք թէ ուշափ ծանը բնուաթիւն մը ունի , հօրս անդամ՝ մեծ աղիցցութիւն ըրաւ :

— Հիմա կը տեսնենք , ըստ ոլ . ա'Վարդինեի . ըսածնիդ տարօրիք նակ կ'երեի ինձ — :

Նօստարը մարքէ զոհւյն սենեկին մեխելով, ծառաները եկան  
Վալանթինի իմացուցին որ իւր հանին առանձին կը դանուի :  
— Անը ելիք, ըստ բժշկին :

— Դուք պիտի չդա՞ :

— Ես չեմ համարձակիր վեր ենելու . ըստ որում հանիս հրա-  
ման չուներ որ ես զնել կանչեմ . առիւ զատ՝ ինչպէս որ կըսէք՝  
ես ալ խոռված և անհանգիստ եմ . քիչ մը պարտէ զը պիտի իջ-  
նեմ պարտելու որ շոնչ առնում — :

Բժիշկը Վալանթինի ձեռքը թռմելեց և մարքէ զոհւյն սենեակը  
ելաւ, ինչ առեն նորատի աղջիկը պարտէ զը իջաւ :

Հարկ չէ ըսել թէ Վալանթինի սիրելի շրջադայութիւնը պար-  
տէ զին որ կողմն էր : Քանզի նորատի աղջիկը տան բոլորիկը  
շրջապատող ծաղկոցին մէջ երկու կամ երեք անդամ շրջադայելին,  
և իւր կուրծքը կամ մաղերուն մէջ տեղաւորելու համար վարդ  
մը փրցնելն ետե՛ դէպ ՚ի նոտարանը տանող ստուերաւոր ծառու-  
զին կ'երթար, և անիւ վանդակներուն կը մօտենաք :

Այս անգամ՝ Վալանթին ըստ սովորութեան իւր ծաղկանց մէջ  
երկու կամ երեք դարձ ըրաւ, բայց առանց անմնցմէ փրցնելու :

Իւր սրախն սուզը չէր ներեր որ այս անգամ այն պարզ դարձը  
իւր վրայ կըէ :

Վալանթին վանդակներուն մօտեցած ժամանակ իրեն այնպէս  
կ'երեւէր թէ իւր անունը կը լսէ :

Այն առեն զարմանալով կանգ առաւ :

Բայց ձայնը աւելի որոշ իւր ականջին հանելով, Ապրսիմիլինինը  
ըլլալը հանչ ցաւ :



ԽԱՍՏՈՒՄԸ

Իրաք Մորէլի վրայ առջի իրիկունէն ՚ի վեր կենդանութիւն  
էր մեացեր :

Մայրերու և սիրահարներու յատուկ եղած բնազզումով գուշա-  
կեր էր որ տիկինն աը Աէն-Աէրանի դալուսաէն և մարբէղին մա-  
հուաննէն եաւ իւր պիտին նկատող դէպք մը տեղի պիտի ունենար  
Ահլիրֆօրի տան մէջ :

Խնչպէս որ պիտի տեսնենք , իւր նախազզուշութիւնները ստոյգ-  
էին , և զինքը շաղանակենիներուն տակի վսնդակաց առջեւ դողով  
ու սարսափով տանողը պարզ անհանգստութիւն մը չէր :

Աւալանթին չէր զիտեր որ Մորէլ իրեն կը բռստառէ , անոր գալստ-  
եան սովորական ժամը հասած չէր , ուստի բարեբազզութիւն մը  
կամ թէ ըսենք երջոնիկ համազզացութիւնն էր որ նորատի աղջի-  
կը պարտէզը կ'առաջնորդէր :

Մորէլ օրիորդը տեսնելուն պէս՝ կանչեց զան , և Աւալանթին ա-  
նոր մօտեցաւ :

— Այս ժամուն դո՞ն ես հոդ , սիրելիս , ըստ աղջիկը :

— Այս , խեղճ սիրուհիս , պատասխանեց Մորէլ . դէշ լուրեր  
առնելու և բերելու եկայ :

— Ռւրեմն զժբազդութեանց առւն մ'է այս , ըստ Աւալանթին .  
ըսէ , Մաքսիմիլիէն : Բայց արդէն ընդունած վիշտերս ըստական  
չեն արգեօք :

— Սիրելի Աւալանթին , ըստ Մորէլ իւր սրտի յուզմոնքը հան-  
դարսեցնելու ջանալով , մտիկ ըրէ ինծի , կ'աղաչեմ . վասն զի  
քեզի ըսելուքներս կարեոր բաներ են . Երբ դքեզ ամուսնացընե-  
լու միաբ ունին :

— Մաիկ ըրէ , ըստ Աւալանթին , քեզմէ բան մը պահել չեմ  
ուղեր : Մաքսիմիլիէն : Այս առտու ամուսնութեանս խօսքը ըրին :

և հանիս, որուն վրայ յոյս գրած էի իմ միակ պաշտպանս կարծելով, ոչ միայն այն ամուսնութեան հաւանութիւն կու տայ, այլ և այնչափ կը փոթացընէ դայն, որ միայն տ'էրինէին դարձը կը յապաղէ, և անօր համնելուն հետեւալ օրը ամուսնութեան դաշնաքը պիտի ստորագրուի :

Սրտաճմլիկ հառաջանք մը երիտասարդին սիրտը ուռեցոց, և տիրութեամբ ու երկար ժամանակ նորատի աղջկան երևը նայեցաւ:

— Այսոս, կրկնեց ցած ձայնով, սոսկալի բան մ'է երբ մարդ իւր սիրած կնոջ բերնէն այս խօսքը կը լսէ թէ՝ օքու տանջանացդ ժամբ որոշուած է և քանի մը ժամէն տեղի պիտի ունենայ, բայց ինչ ընենք, պէտք է որ համբերնէք, և իմ կողմանէս ընդդիմութիւն մը սղիտի չընեմ»։ Քանի որ դաշնադիրը ստորագրելու համար միայն ո՛ւ, տ'էրինէին կ'ըսպասեն, քանի որ անօր համնելուն հետեւալ օրը անօրը պիտի ըլլաս, որեմն վազը ձեռքի ո՛ւ, տ'էրին նինին պիտի տառ, ըստ որում այս առառ Բարիկ հասաւ ան — :

Վալանթին հառաջանք մը հանեց :

— Ժամ մը տուաջ Մօնթէ-Բրիսթոյ կոմսին առան էի, ըստ Մարել, ու ձեր խօսքը կ'ընէնք. կոմսը ձեր ընտանեաց վշտակից կ'ըլլար, ու ես միոյն քեզի ցաւակից կ'ըլլայի, երբ յանկարծ բակին մէ չ կառքի մը ձայնը ըսեցի։ Մինչեւ այն վայրիկանը նախազգացութեանց չէի հաւատար, վալանթին, բայց հիմա պէտք է որ հաւատամ. այն կառքին ձայնը ինձ ստրառու մը պատճառ եց. շատ շանցաւ՝ սանդուխին վրայ ստից ձայներ լսեցի։ Հրամանատարին բարձրահնչիւն ունաձանայնը այնչափ սարսափ պատճառած չէր Տոն Շուշանէին, որչափ անօր բայլերուն ձայնը ինձ պատճառ եց։ Ակրթապէտէս դուռը բայցուեցաւ. տուաջ Ալուէր որ Մարտէրի ներս մանեւլուն, կարծեցի թէ սիստեր եմ, բայց անօր ետեւէն ուրիշ երիտասարդ մը յառաջանալով, կոմսը անօր ըստւ. օԲարի եկաք, ու, սեպուհ Փրանդ տ'էրինէ»։ Խնդրինքս բռնելու համար բռլոր ոյժս տամիտիեցի. զայն նուտեց և սիսայ դոզալ, բայց մայիս դէրք մը կեղծելով ուզեցի հռն կենալ, հազիւ հինգ վայրկեան կարող եղայ կենալու, կրնամ ըսել որ ոյն հինգ վայրկենին մէ չ եղած իսպերէն մէ ին ալ չլսեցի, ինքզինքս կորսնցուցեր էի :

— Խոեղչ Մաքսիմիլիէն, մրմնջեց Վալանթին :

— Վալանթին, պատասխան տուր ինձի, բայց դիտցիր որ այդ պատասխանդ կամ մահ և կամ կեանք պիտի պատճառէ ինձ. ինչ ըսելու միաբ ունիս — :

Վալանթին զլուխը խանարհեցոց. այս խօսքին ներքե ընկճեր էր :

— Մաիկ ըրէ, ըստ Մորէլ, առաջին անդամը չէ որ մեր վիճակին վրայ կը մասած ենք. մեր այսօրուան կացութիւնը ծանր է, դժողակ և վտամ: Կարծեմ թէ ամուլ վշտակրութեամբ վհատելու և անփոյթ կենալու ժամանակը չէ. այս բանս անոնց կիյայ ընկէ, որմնք որ անձայն նեղութեան համրերել և իրենց արտասուրը դիւրութեամբ ըմպել կը զիջանին: Այսպիսի մարդիկ կրնան զանուիլ, և անշուշտ Ըստուած ալ անոնց երկրի վրայ ունեցած համրերութեան համար երկնաքը վարձք մը պիտի տայ. բայց մրցելու կամք զգացողը թանիազին ժամանակ մը չկորսնցըներ, և բաղդէն ընդանած հարուածը անոր կը վերագարձընէ իսկոյն: Ըսէ, Վալանթին, չար բաղդին դէմ մրցելու կամք ունիս. քանզի այս բանս հարցընելու համար եկած եմ — :

Վալանթին սարուաց, և սուկումով ու խռովեալ աչօք Մորէլի նայեցաւ:

Իւր հօրը, հանիին, վերջապէս իւր բոլոր ընտանիքին ընդդիմանալը երբէք մոքէն անցած չըր:

— Ի՞նչ կ'ըսես, Մաքսիմիլիէն, հարցուց Վալանթին, և մըրցիլ ըսելով ի՞նչ կ'իմանառ. նուիրական սրարաքս ժխտեմ, հօրս հրամանին և մահամերձ հանիիս կամքին դէմ դնեմ. անկարելի է — :

Մորէլ շարժում մը ըրաւ:

— Ազնիւ սիրու մը ունիս գտն և անշուշտ ըստածս կը հասկընաս, սիրելիդ իմ Մաքսիմիլիէն, և այնչափ աղէկ կը հասկընաս որ չես ուզեր խօսիլ: Ես դէմ կենամ, Ըստուած չլնէ. ոչ, ոչ, բոլոր ոյժս պահած եմ ինքզինքիս դէմ մրցելու, և ինչպէս ըսիրարտասուրս խմնչու համար. սուկայն երբէք չեմ կրնար հայրս վշտացընել ու հանիիս վերջին ժամըը խռովել:

- Երաւոննք ունիս , բայս . տղազարթեամբ Մորէլ :
- Այդ ինչ կերպով խօսեցար ինձի այդ խօսքը , ով Աստուած իմ , զուեց Աւալանթին վիրաւորեալ սրտով :
- Քու վրատ գմայլող մէկաւ մը արև խօսեցայ , օրիորդ , կրկնեց Մաքսիմիլիէն :
- Օրիորդ բար ինձի , զուեց Աւալանթին , օրիորդ բար , ոչ , ինչ եսական անձ մ'ես եղեք . զիս յուսահատութեան մէջ կը տեսնես ու ըստածս չհասկընալ կը կեղծես :
- Կը սիսալիս , շատ աղէկ կը հասկընամ . ըսել կ'ուզես թէ զ . աը Ակլը քօրի չես կընար ընդգինանալ , մարքէզուհետին անհանգութիւն ընել չես ուղեր , ու վայրը տրիշի հետ ամուսնանալու դաշինքը պիսի ստորագրես :
- Բայց ուրիշ ինչ կերպ կրնամ ընել :
- Գէաք չես ինձի հարցընել այդ բանը , օրիորդ , ըստ սրտմ կը տեսնես որ այս խնդրոյն մէջ աղէկ խորհուրդ չեմ տար քեզ , և իմ եսութիւնս պիսի կուրացընէ զիս , պատասխանեց Մորէլ , որոն խորունէ ձայնը և զոյ բռուերը իւր զայրոյթին աճումը կը յայնէին :
- Ինչ առաջարկութիւն պիտի ընէիր ինձ , Մորէլ , եթէ զայն ընդունելու պատրաստ դանէկիր զիս , պատասխան տար . բաւական չէ ըսել թէ ըրածս դէշ է , այլ պէաք ես ինչ ընելիքս ցուցընել ինձ :
- Առանց կատակին կը հարցընես ինձ այդ բանը , Աւալանթին , ըսել , և ես համարձակ ըսեմ քեզի տալու խրասս :
- Անշուշտ , միքըլիդ իմ Մաքսիմիլիէն . քանզի եթէ բարի է խրատ , կը ընդունիմ :
- Աւալանթին , բար . Մորէլ , արդէն անջատեալ տախակիներուն մէկը տեղէն հանելով , բարկութեանս ներելուդ առաջոյց ձեռքդ ինձի տուր . պատճեռը այն է որ կելքս զլուխս չէ , և ժամէ մը ՚ի վեր մորիս մէջէն խօստ խելացնոր խորհուրդներ կ'անցնին : Ո՛չ , բայց եթէ իմ խրասս մերես . . . :
- Ըսէ , ո՞րն է տալու խրատ :
- Ահա ըսեմ , Աւալանթին — :

Կորատի աղջիկը ձեռքու դեպ ՚ի երկնը վերցոց և հառաջանք մը հանց :

— Ես աղօս եմ, կրկնեց Առքսիմիլիէն, ու երկու քնուս բառելու չափ ալ հարուստ, կ'երդնաւմ որ շուրջներս ճակախի չմօտեցած իմ իլինս պիտի ըլլաս :

— Կը սոսկացընես զիս այդ խօսքով, բառ Աալանթին :

— Հետո եկու, շարտնակից Աորէլ, զքեղ քրոջս առնց տաճիմ, որ քու քայրդ ըլլալու արժանի անձ մ՚է, միատեղ Ալջերիս, Անդդիա կամ Ռմերիկա կը մեկնինք, եթէ չես ողեր որ Գաղղիոյ դաւանենքն մէկուն մէջ ոպասենք մինչև որ մեր բարեկամները ձեռ ընտանեաց ընդդիմութեան յաղթեն, ու այն ատեն Բարիու վերադառնանք — :

Աալանթին դլու իր շարժեց :

— Մաքւս կ'անցնէք որ այդ ստաջարկութիւնը պիտի ընետ ինձ, Մարսիմիլիէն, ես ալ քեզմէ աւելի անմիտ պիտի ըլլամ եթէ մէկ խօսքով զքեղ շիեցընեմ, անկարելի է, Աորէլ : անկարելի է :

— Ուրեմն քու բաղդիդ պիտի հնազանդիս, եւ ամենենին պիտի շաշխատիս անոր հարուստին զէմ դնել, բառ Աորէլ թախծութեամբ մը :

— Ա, յա, եթէ մեռնել իսկ պէտք ըլլայ :

— Ուրեմն, Աալանթին, վերստին կը կրկնեմ՝ իրաւոնք տնիս : Երբ ես իւենթեցեր եմ, եւ դո՞ն կ'ապացոցանես ինձ թէ կիրքը ամենէն ուղիղ միտքերը անգամ կը կուրացնէ : աւստի դոչ եմ աւենելով որ առանց կրքի գտառզութիւն կ'ընես : Թող այնպէս ըլլայ, ու բեմն որոշուած է, վաղը անշոշաւ ու Փրանդ ա'կրինին կինը պիտի ըլլաս, չէ թէ կատակերգական խաղերու մէջ տեսնուած թամբնական այն արարողութեամբ, որ դաշնաց ստորագրութիւնը կ'անուանեն, այլ քու անձնական կամօրդ :

— Դարձեալ կ'ըսեմ, կը յաւսահառեցընես զիս, Աալանթին, բառ Աալանթին, գաշոյնը վերստին մէջ կը խօնես : ըսէ, ինչ պիտի ընելիը եթէ քայրդ ինձի տուածիու ոլուս խրատ մը մարի ընելը :

— Օրիորդ, կրկնեց Աորէլ դառն մոլուսով մը, ես ինքնառէր

եմ ըսիր, իմ ինքնասիրութեամբս ամենեին մարէս չեմ անցընե՞լ  
թէ որիշները ինչ պիտի ընէին եթէ իմ տեղս ըլլային, այլ կը  
մտածեմ թէ տարի մ'է որ ես գքեղ կը ճանչնամ, և այն օրէն  
իմ բոլոր երջանկութիւնս քու սիրոյդ վրայ դրի. օր մը ինձ ըսիր  
թէ կը սիրես զիս, և այն օրէն իմ ապագայ երջանկութիւնս քեզի  
չետ ամուսնանալէս կափեալ էր: Բայց հիմա ամեն յոյսերը կը  
կորոնցընեմ և ինքնիրենս կըսեմ թէ բաղդիս յաջողութիւնները  
ձախորդութեան փախուցան, ինքընիքս երկինքը կը կարծէի, և  
հիմա զեանի վրայ դանուիմ: Ամեն օրուան պատահած բաներ են  
ասոնք. խաղամշլ մը ոչ միայն ունեցածը այլ և շունեցածն ալ կը  
կորոնցընէ: — :

Մորէլ այս խօռքերը սրափի կատարեալ հանդարտութեամբ խօսեր  
էր. Վալանթին իւր հետազօտիչ նայուածքով զարմանքով անոր  
երեսը նայեցաւ, և կը ջանար միանդամայն իւր սրափն խորը վրդո-  
վուշ շփոթութիւնը անորմէ պահելու:

— Բայց վերջապէս ինչ պիտի ընես, հարցոց Վալանթին:

— Մնաս բարեաւ ըսելու պատփիը ունիմ, օրիորդ, վիայ կոչե-  
լով զԱստուած, որ իմ խօռքերս կը լսէ և սրտիս դարձնիքը կը  
ճանչնոյ, և քեզի այնպիսի հանդիստ, երջանիի և ուրախ կեանք մը  
կը մաղթեմ, որ ալ միաբդ չըերես զիս:

— Ո՞չ, մրմնիեց Վալանթին:

— Մնաս բարեաւ, Վալանթին. մնաս բարեաւ, ըսաւ Մորէլ  
խօսութիւնն մը ընելով:

— Ո՞ր կ'երթաս, դոչեց Վալանթին ձեռքը վանդակին մէջէն  
երիցընելով և Մաքսիմիլիէնի զգեստը բռնելով, քանզի աղէկ կը  
հասկընար որ իւր սիրահարին սրափի հանդարտութիւնը ստոյդ  
չէր:

— Ընտանեացդ մէջ նոր շփոթութիւնն մը չպատճառելու և իմ  
կացութեանս մէջ զանուող ամեն պարկեցաւ և անձնուէր մարդոց  
օրինակ մը ըլլալու համար զբաղելու կ'երթամբ:

— Ինձմէ բաժնուելէդ առաջ ըսէ ինձ թէ ինչ պիտի ընես,  
Մաքսիմիլիէն: — :

Երիթասարդը տիսրութեամբ ժպտեցաւ:

— Ըսէ , ըսէ , ըսաւ Ա.ալանթին , կ'աղաւեմ :

— Դիտուորութիւնդ փոխեցիր , Վ.ալանթին :

— Ազէկ զիտես որ չէմ կրնար փոխել , ուղրմելի մարդ , դռչք նորաաի աղջիկը :

— Ուրեմն մնաս բարեաւ , Վ.ալանթին — :

Վ.ալանթին այնպիսի ուժով մը վանդակապատը շարժեց , որ իրամբ չէր յուսացուեր . և որովհեան Մորէլ կը հեռանար , նորաաի աղջիկը երկու ձեռքերը վանդակին մէ ջէն դուրս հանեց , և զանտնք միացընելով :

— Ըսէ , Մաքսիմիլիէն , ինչ պիտի ընես , կ'ու զեմ զիտալ :

— Ա՛ս , անհոգ եղիք , ըսաւ Մաքսիմիլիէն դռուէն երեք քայլ չեռու կենալով . բաղզին ինձ համար պահած խստութեանց ուրիշ մը պատասխանատու ընել չէ միտքս : Ուրիշ մը դուցէ սպառնայ քեզ ըսելով թէ պիտի երթայ Պ. Ֆրանզը զանէ , զան զրգուել և անոր հետ մենամարաի . ասոնք անմտի զործեր են : Պ. Ֆրանզ մեր զործին մէջ ինչ յանցանք ունի , այս առատու առաջին անգամն եւ որ զիս աեսաւ , զուցէ զիս տեսնելն ալ մոռցած է . ձեր երկու ընտանեաց մէջ այս ամուսնութեան որոշումը եղած ժամանակ չէր զիտեր իսկ որ աշխարհիս մէջ ինծի պէս մարդ մը կայ : Ձեւաբերար Ֆրանզին հետ ամենն ին զործ չունիմ , և կ'երդնում որ երրեք պիտի շատեմ զան :

— Բայց զո՞վ պիտի ատես , զի՞ս :

— Զ.քեղ ատեմ , Վ.ալանթին . ո՛չ + Աստուած չընէ : Կինը նուիրական է , և սիրուած կին մը սուրբ է :

— Ուրեմն ինքզինքդ պիտի ատես , գյրանդ մարդ :

— Յանցաւորը ես եմ , այսպէս չէ , ըսաւ Մորէլ :

— Մաքսիմիլիէն , ըսաւ Վ.ալանթին , Մաքսիմիլիէն , կ'ու զեմ որ հոս դաս — :

Մաքսիմիլիէն իւր քաղցր ժողովովը վերստին մերձեցաւ , և եթէ դեղնութիւնը չըլլար , իւր առվորական վիճակին մէջ պիտի կարծէին զինքը :

— Մտիկ ըրէ ինծի , սիրելիս , իմ պաշտելի Վ.ալանթինս , ըսաւ երիտասարդը իւր քաղցր և ծանը ձայնովը , աշխարհի , ծնու-

դաց և Աստուծոյ առջեւ ամշնալու համար խորհութիւնը մը չունեցող մեղի պէս անձերը իրարու սրախն խորը կը թափանցին : Ես վիստասան չեմ, և ոչ մելամաղձառ դիւցանին մը . ոչ Առանքրէտի դերը կը ներկայացընեմ և ոչ Անընիք . սակայն ես իմ կեանքս քեզ նուիրեցի , ու դուն հիմա կը մերժես դիս , իրաւունք ունիս , արդէն ըսի , դարձեալ կը կրկնեմ . զբեղ կորոնցընելով իմ կեանքս ալ պիտի կորանցընեմ : Երբ ինձմէ հեռանաս , Աալանթին ես մինակ պիտի մնամ աշխարհիս վրայ . քոյր իւր ամուսնոյն քովը երջանիկ է , անոր ամսութինը իմ լոկ քեռայրս է , այսինքն այնպիսի անձ մը , ուրու հետ միայն ընկերային դաշամբ միայած եմ . ուստի իմ կեանքս երկրի վրայ մէ կու օգուտ չունի : Իմ ընելիքս այս է . մինչեւ ամուսնանալուդ վերջին մանրերկրորդը պիտի սպասեմ , քանդի բաղդին զիայուածական յաջողութեան մէկ սոտերն անդամ չեմ ուզեր կորոնցընել , վասն զի վերջապէս մինչեւ այն վայրկեանը Պ. Գրանդ կընայ մեռնիւ . իրարու մօտեցած ժամանակնիդը կընայ կայծակէ զարնուիլ . մահուան գատապարտեալի մը ամեն բան համանական կ'երեի , և իւր կենաց ազատութեան վրայ խորհելով մինչեւ հրաշք մը կարելի կը համարի : Ուստի ինչպէս ըսի՞ մինչեւ վերջին վայրկեանը պիտի սպասեմ , և երբ իմ դժբաղդութինս սատղուի , և անդարմանելի ու անցոյս մեայ , քեռայրիս և սստիկանութեան տեսչին մէկ մէկ նամակ պիտի դրեմ , դիտաւորութիւնս անոնց պիտի իմացընեմ , ու անտառի մը անկիւնը , փասի մը ետին կամ դետի մը եղըր ատբանակալը դլիս պիտի պարպեմ , և այս ըսածս Գաղղիոյ ամենէն պարկեշտ մարդու մը դաւակին ըլլալուս պէս ճշմարիս է — :

Աալանթինի բոլոր մարմինը սկսաւ դողալ :

Երկու ձեռօքը բռնած վանդակապատը թողոց , բաղուկները թռւլութեամբ վար կախուեցան , և իւր այտերուն վրայէն արտասուաց երկու կամիւներ զլորեցան :

Երիտասարդը ախուր և անողոք անոր առջեւը կեցաւ :

— Ո՛չ , զթա ինձի , մեղքցիր , ըստ Աալանթին , պիտի աողըիս , այնպէս չէ :

— Ոչ , պատառոյս վրայ կ'երդնում , ըստ Սաքսիմիլիէն . սակայն

քու ինչ հայդ, դուն քու սրբագրի կատարած սիրափ ըլլաս, և քու խիզճի պիտի մեայ քեղի — :

Վալանթին իւր թախծալից սիրաը սեղմելով ծնկան վրայ եւ կաւ :

— Մաքսիմիլիէն, ըստ, Մաքսիմիլիէն, բարեկամս, երլրի վրայ եղրայրս, ու երկնից մէջ իմ Հշմարիս ամուսինս, կ'առաշեմ, ինձի պէս ըրէ, վիշտերով ապուն. զույէ օր մը վերսակն միանանք :

— Մնաս բարեաւ, Վալանթին, կրկից Մորէլ :

— Ով Աստուած իմ, դոչեց Վալանթին ձեռքերը դէպ ՚ի երկինք վերցնելով վանմ՝ կերպով մը, կը տեմնես որ Շնազանդ ազշիկ մը ըլլալու համար ամնն կրցածս ըրի. աղաչեցի, թախանձեցի, ոչ աղաւանացս միտ դրաւ, ոչ թախանձանացս և ոչ արտասուացս : Ուրեմն, շարունակեց իւր արտատոքը սրբելով, նախախմեծար կ'ընտրեմ ամշնալով մեռնիլ քան թէ խոզի տագնասորով մը : Պիտի ապրիս, Մաքսիմիլիէն, և ես քեզմէ որիշ մէկու. հետ սիրափ չամուսնանամ. ոք ժամուն, ոք վայրկենին կ'ուզես, հիմա կ'ուզես. խօսէ, հրամայէ և ես պատրաստ եմ Շնազանդիլ քեղ — :

Մորէլ, որ մեկնելու համար վերատին քանի մը քայլ տուեր էր, այս խօսքին վրայ եա դարձաւ, և ու բախութենէն դունատեալ, սիրու սիրուած՝ ձեռքերը վանդակներուն մէջն Վալանթինի երկլնացոց :

— Վալանթին, ըստ, սիրուհիս, պէտք չես այդ կերպ խօսիլ ինձի, եթէ ոչ աւելի աղէկ է որ մեռնիմ : Ինչու բռնութեամբ սիրափ առնում՝ զքեղ, երբ զքեղ սիրածիս պէս դուն ալ զիս կը սիրիս . այս կերպով կ'ըստիպես զիս որ մարդասիրութեան համար ապրիմ, ուսափ ես ալ մեռնիլ նախամեծար կը համարիմ :

— Երօք, մըմնջեց Վալանթին, աշխարհիս վրայ ով կը սիրէ իս . ան : Իմ վշտացս մէջ ով մակը արեց զիս . ան : Յոյսս որուայ է . որու վրայ կը յարի իմ այլայլեալ նայուածքս, որու վրայ հանդչի իմ թախծալից սիրաս . անոր վրայ, միշտ անոր վրայ : աւանը ունիս, Մաքսիմիլիէն, հօրս տունը և ամնն բան սիրի:

թողում ու քու հետի ոլիսի զամ։ Ո՛չ, որչափ ապերախտ եմ՝ եղեր, ամենը բան պիտի թողում, մինչեւ իմ սիրելի հաւս, որ միտքէս ելեր էր։

— Ոչ, ըստ Մաքսիմիլիէն, Պ, Կուարթիէի համար ըսիր թէ իմ վրաս համակրութիւն ցուցուց . փախչելէդ առաջ ամեն բան անոր պատմէ, և անոր հաւանութիւնը Աստուծոյ առջեւ կ'արդարացընէ զքեզ, ասիէ զատ՝ երբ ամուսնանակ, մեր տունը կու զայ, այն ատեն մէ կ'զատի տեղ երկու զաւակ կ'ունենայ։ Կրաքարու հետ ինչ կերպով խօսակցելնիդ ինձ ըստած ես, այն նշանացի սրտառու չ լեզուն ես ալ շուտով կը սորվիմ։ Ո՛չ, կ'երգնում Վալանիմին, որ մեր առջեւ երեցած յոսահատութեան տեղ կը խօսանամ զքեզ երջանիկ ընել։

— ՏԵ՞ս, Մաքսիմիլիէն, տես, ինչ աղջեցութիւն ունիս վրաս, ըստածներուդ զրեթէ կը հաւատամ։ սակայն հայրս պիտի անիծէ զիս, անողոքնի սիրտ մը ունի և երբէք պիտի չներէ։ Ուստի մարի ըրէ, Մաքսիմիլիէն, եթէ հնարքով, աղաշանկցով կամ դիպուտով և կամ ինչ զիսնամ վերջասիւս որ և է կերպով ամուսնութիւնը յապաղել կարենամ, կ'ըսպասես, այնպէս չե։

— Այս, կ'երգնում, եթէ դուն ալ երգնուս որ այն սոսկալի ամուսնութիւնը բնաւ պիտի չկատարուի, և եթէ զքեզ դատառորին, քահանացին առջեւ ալ քաշեն, ոչ պիտի ըսես։

— Մօրս վրայ կ'երգնում, Մաքսիմիլիէն, որ աշխարհիս վրայ ինչի ամենէն նուիրական է։

— Սպասենք ուրեմն, ըստ Մորէլ։

— Այս, սպասենք, կը կնեց Վալանիմին, որ այս խօսքին վրայ շունչ կ'առնուր . մեղի պէս թշուառները աղատելու այնշափ միջոցներ կան։

— Ես քեզի կը վստահիմ; Վալանիմին, ըստ Մորէլ։ ինչ որ ընես ինձ ընդունելի է . բայց եթէ քու աղաշանացդ ականջ չղըն նեն, եթէ հայրդ, ափկին ար Աէն-Աէրան սպահանչեն որ դաշնաղիրը ստորագրելու համար վաղը Պ, Գրանդ ա'էրինէն կան չուի . . . \*

— Խօսք տուած եմ քեզ, Մորէլ։

— Աւրեմն փոխանակ ստորագրելու . . . :

— Կու զամ՝ զքեղ զանելու և միատեղ կը փախչինք . բայց մինչեւ այն ժամուն հասնիլը զԱստուած չփարձենք, Մորէլ, և զիւրար չտեսնենք . զրեթէ հրաշք մը և Աստուածոյ նախախնամութիւնն է որ մննք մինչեւ ցարդ դեռ ձեռք չանցանք . եթէ զմեզ բռնէին, եթէ մեր ինչ կերպով զիրար տեսնենիս իմանային, այնուհետեւ պիստի չլարենայինք զիրար տեսնել :

— Իրաւունք ունիս, Աալանթին, բայց Բնչպէս զիտնամ թէ :

— Պ. Տէշան նօտարէն :

— Կը հանչնամ՛ զան :

— Եւ ես կը գրեմ քեղի, հաւատա ինձի : Ով Աստուած իմ, այն ամուսնութիւնը, Աալսիմիլիէն, քեղի ատելի եղածին չափինածի ալ ատելի է :

— Ընորհակալ եմ, սիրելիդ իմ Աալանթին, կրկնեց Մորէլ : Աւրեմն իրարու միտքը հասկըցանք . ես որոշեալ ժամը դիտեմ, հու կու զամ՝ դուն ալ այս պատէն բազկացս մէջ կը ցասկես, և զիւրութեամբ կը փախչինք . ոգարափզիս զուռը կառք մը կըսպասեցընեմ, միատեղ կը հեծնանք ու զքեղ քրոջս առոնը կը առնիմ . հոն կ'ուզես անձանօթ կը մնաս, կ'ուզես փառաւորապէս ինքզինքդ կը ճանչցընսո, մեր զօրութիւնն ու կամքը ՚ի զործ կը դնենք, և չենք թողուր որ մեր կամքը կտրեն զանուիի պէս, որ հառաշանէներով միայն ինքզինքը կը պաշտպանէ :

— Հաս աղէկ, Աալսիմիլիէն, ես ալ կ'ըսեմ թէ ինչ որ ընես՝ ինձ ընդունելի է :

— Սիրելիդ իմ Աալանթին :

— Գո՞չ ես հիմա քու կինէդ, ըստ նորատի աղջիկը տիսրութեամբ մը :

— Սիրելիդ իմ Աալանթին, այս ըսելն անզամ բաւական չէ :

— Ըսէ, հոգ չէ — :

Աալանթին, կամ լաւ ես է ըսել Աալանթինի շուրթերը վահակապատին մօտեցիր էին . իւր խօսքերը անուշահոտ շունչովը մինչեւ Մորէլի շըթանց վրայ կը սահէին, և երիտասարդը ցուրտ

և անողոք վանդակինքրուն միւս կողմէն իւր բերանը անոնց կը յա՞րէր :

— Կորէն տեսնուինք, բառ Ալալանմին այն երջանկառիթ տեսակցութենուն բաժնուելով, նորէն տեսնուինք :

— Կամակ պիտի զբե՞ս ինձ :

— Եցո՞ւ :

— Հնորհակալ եմ, սիրելի կինս, նորէն տեսնուինք — :

Անմեղ և դաշտանի համբոյրի մը ձայնը հաղիւ թէ լսուեցաւ, երբ Ալանմին մմբիներուն տակէն փախաւ :

Մորէլ հոն կեցաւ մինչև որ անոր շրջադղեստին նշագարիներուն քսուելով ելած շշուկը, և ոտքերուն աւազին վրայ կոխելով հանած ձայնը անլսելի եղաւ, իւր աշքերը անսպասում ժպիտով մը դէպ ՚ի երկինք վերցընելով Աստուծոյ շնորհակալ ըլլալէն ետև որ Ալանմին այնպէս զինքը կը սիրէր, ինքն ալ աներեսոյթ եղաւ :

Երիտասարդը իւր տունը վերադարձաւ և բոլոր գիշերն ու հետեւալ օրը սպասեց, բայց Ալանմինէն լուր մը չստացաւ :

Աերջապէս երրորդ օրը, առառան ժամը դէպ ՚ի տասին՝ Պէտան Խոտորին երթալու ժամանակ թղթատունէն փարք տախակ մը ընդունեց, որ Ալանմինինը ըլլալը հասկըցաւ, թէե երթք անոր զիրը տեսած չէր :

Կամակին պարունակութիւնը այս էր :

« Արտաստոք, արլաշանք, թամաննձանք ամենեին օդուտ չըսին :

« Երէկ Աէն-Զիլիփ-տիւ-Ռուլի եկեղեցին դայի, և երկու ժամ շարունակ ջերմուանդութեամբ աղօթք ըրի :

« Աստուած իւր աղաչանքու շընդունեց, և դաշնադրին սոսորագրութիւնը այս իրիկուան ժամը իննին որաշուած է :

« Սրտիս պէս խօսքս ալ մէկ է, Մորէլ, խօսքս քեզի տուած եմ, ինչպէս և օիրտս քուկդ է :

« Կինդ

« ԱԱԱԱԱ ԵԹԻ՞Ն ՏԸ ԱԿԼԸԳՕՅ

«Յ. Գ. Աղջրամնլի հանիփս վիճակը երթալով կը գեշնայ, Երէ կիւր հիւանդութեան սաստկութեան կը զառանցեր, այս օր զառանցութիւնը դրեթէ յիմարութեան փոխուեցաւ:

«Զիս իւխսու պիտի սիրես, այնաքէս չե, Մորէլ, որոքս զիս այս վիճակին մէջ զինքը թաղելու մասցնել առա ինձ:

«Կարծեմ թէ գաշնազրին ստորագրութիւնը այս իրիկուն աեղի տնենալը և ուարթիէ հաւէս դաղանի կը պահեն»:

Մորէլ Վալանթինէն ստացած առզեկութիւններէն չբաւականացաւ:

«Սօտարը աւենեկլու զնայ, որ սառւզեց թէ գաշնազիրը իրիկուն ժամը իննին պիտի ստորագրուի:

«Երիտասարդը անկէ Մօնթէ-Քրիսթոյի տունը զնայ, որմէ աւել լի աւեղիկութիւններ ստացաւ:

Գրանդ անձամբ եկեր էր այս լուրը կոմսին հաղորդելու:

Տիկին որ Վիլֆօր ալ նամակ մը դրեր էր կոմսին աղաչչով որ դինքը չշրաբիրելուն համար ներէ իրենց, քանզի ու, որ Սէն-Մէրանի մահը և անոր այրիին հիւանդութեան վիճակը այն հանգիսին վրայ ախրտութեան քոզ մը կը ձերին, որով ամիկնը չեր աւզեր կոմսը ախրեցնել; այլ տմնն տեսակ բարեմաղթութիւնները ըստը էր անոր համար:

Առջի իրիկունը Գրանդ ամիկն ար Սէն-Մէրանին ներկայեր էր: Որ իւր փեայացուն ընդունելութիւն տալու համար անկողինն աղար իջեր էր, բայց անմիջապէս եարը վնրաբին անկողինը մտեր էր:

Մորէլ ինչպէս որ հաւկրհալը գիւրին էր, այնպիսի այլայլութեան մը մէջ կը գտնուեր, որ Մօնթէ-Քրիսթոյի որէս սրատես աշք ունեցողը մը անկարելի էր աննշմարելի բլլու: Աւատի կոմու առաջուանէ աւելի սիրով վարուեցաւ անոր հետ, այն տարին որ երկու կամ երեք անդամ քիչ մեաց Մաքսիմիլիէն ամնն բան անոր պիտի յայտնէր:

Բայց իւր Վալանթինէն առւած իսսուութիւն միշեց, և իւր դարձն պիտի սրատին իսրը մնաց:

Երիտասարդութեանը բոլոր օրը քսան անդամ Վաշանթինի նամակը կարող պայ :

Առաջին անդամն էր որ Վաշանթին իրեն նամակ կը զբեր և այն՝ ինչ առ թիւ :

Ամեն անդամ՝ նամակը կարդալուն՝ Մաքսիմիլիէն Վաշանթինը երջանիկ ընելու համար ըրած երգումը կը նորոգէր :

Իրօք՝ այնպիսի աներկիւդ որոշում մը ընկելուն համար նորասով առջին ո՛րչափ սպասույ արժանի էր, ո՛րչափ անձնու իրութիւն կը պարտառորէր իրեն երիտասարդը, որուն համար ինքը ամեն բան զոհէր էր :

Անշուշտ և իրօք այնպէս ըլլալ սկզբը էր՝ Վաշանթին իւր սիրոյն ամենէն մեծ առարկայն պիտի ըլլար :

Միանդամյն թագուհի և կին մ'է էր, և երիտասարդը ո՛րչափ շնորհակալ ըլլար անոր և սիրեր զան, բաւական չէր :

Մորէլ անսպասում յուզմամբ այն վայրկենին կը մտածէր, երբ Վաշանթին պիտի դար իրեն ըսելու .

— Ահա եկայ, Մաքսիմիլիէն, վախչինք միատեղ — :

Մորէլ այս փախուստին համար ամեն բան անօրիներ էր :

Իւր պարտէղին մէջ երկու սանդուխ սպահէր էր. կառք մը, զոր Մաքսիմիլիէն անձամբ պիտի վարէր, չոն պիտի սպասէր. հետը ոչ ծառայ պիտի առնուր և ոչ ջրադ. արաջին փողցը դառնաւուն պէս՝ կաքին լապտերները պիտի վառէր, վասն զի պէտք չէր անզդոշութեամբ ստիլանութեան ձեռքն իյնալ :

Մերթ ընդ մերթ Մորէլի բոլոր մարմինը կը սարսար :

Այն վայրկեանը միաքը կը բնրէր երբ Վաշանթին պատին վրայ յէն պիտի անցնէր, և ինքը իւր զրկացը մէջ պիտի ընդունէր այն անձը, որուն միայն ձեռքը սեղմեր և մատին ծայրը համբուրեր էր :

Բայց երբ իրիկուան դէմ եղաւ, և երբ ժամը կը մօտենար, Մորէլ զգաց որ պէտք էր մինակ մնալ. իւր արիւնը կ'եռար, բարեկամի մը որարդ հարցումը կամ լոկ ձայնը զինքը պիտի զրգուէր. իւր սենեակը փակուելով բան մը կարդալու ջանայ. միայն իւր նայուածքը երեմներուն վրայ յարած էր, բայց ինքը բան մը չէր

Համելլինար . վերջապէս զիրպը ձեռքէն նետեց , ու երկուրդ անգամ՝  
իւր յատակաղ ծին , սանդուիսին և պարտիդին վրայ մասածէլ ոկտա .  
Ա երջապէս ժամը հասաւ :

Երբէք անհամբեր սիրտհար մը իւր ժամացոյցին թողոցած չէ  
որ հանդարտութեամբ իւր շրջանը կատարէ :

Մորէլ իւր ժամացոյցը այնչափ խառնեց որ ժամը վեցին՝ ժամաց  
ցոյցը ութ ու կէս կը նշանակէր :

Այն ատեն նոյեցաւ որ երթալու ատենն եկած է . Ժամը ինենին  
դաշնազրին ստորագրութիւնը տեղի ոլուած ունենար , բայց հաւա-  
նականարար Վալանթին այն անօդուա ստորագրութեան ոլուած շըս-  
պասէր :

Հետեւարար Մորէլ իւր ժամացոյցին համեմատ ժամը ու թուիէ-  
սին Աէսլէ փողոցէն ելնելով , իւր ստորակը մասած ժամանակը՝  
Աէն-Ֆիլիփի-տիւ-Ռուլ եկեղեցոյն ժամացոյցը ութ կը հնչէր :

Իւր ձին ու կառքը ստորագրին մէկ կողմէր կիսաւեր շենքի մը ե-  
ափն պահեց , ուր Մորէլ պահանջուա ստորագրուն ունէր :

Սակաւ առ տակաւ մութը պատեց . այն ատեն Մորէլ իւր ստո-  
հուած տեղէն ելաւ և սրաի բարախմանը զնաց վանդակաց Տեղ-  
քուածքէն նոյեցաւ . Վալանթին եկած չէր տակաւին :

Ժամը ութ ու կէս հնչեց . կէս ժամ՝ հոն սպասեր էր :

Մորէլ իւր ստորագրին մէջ մէկ կողմէն միւսը կը ստորակէր , բայց  
մերթ ընդ մերթ վանդակներուն կը մօսենար ու ծակէն կը նոյեցէր :

Պարտէ զը երթալով կը մթնար , տակայն այն մթութեան մէջ  
պարագ տեղը նորատի աղջիան սպիտակ շրջապղետը կը փնտէր ,  
և այն լուսթեան մէջ անօդուա տեղը ոտնաձայնի մը ականջ կը  
դնէր :

Ծառերուն մէջէն երեցած Ավելլֆօրի տունը մթութեան մէջ  
կը դանուէր , և ամուսնութեան դաշնագրին ստորագրութեան հան-  
գէսը կատարուիլը ցուցընտղ նշան մը շէր ներկայեր :

Մորէլ իւր ժամացոյցը նոյեցաւ , որ ինը և երեք քառորդ կը  
նշանակէր , բայց զրեթէ մի և նոյն միջոցին եկեղեցւայն ժամացոյցը +  
որ արգէն երկու կամ երեք անգամ իւր ժամացոյցին սիսալմանքը  
յայտներ էր , ինն առ կէս կը հնչէր :

Արդէն Վալանթինի որոշած ժամոն վրայ կէս ժամ՝ ալ անցեր էր. քանզի ժամը իննին ըստ էր և աւելի առաջ քան թէ եւրը :

Երիտասարդին կենացը մէջ ամենէն սոսկալի ժամն էր ոյն, և որոն սրտին վրայ ժամացյցին ամեն մէկ մանրերկրորդը կապարեայ մուրձի հարուածի պէս կը զարնէր :

Տերեներուն ամենէն թեթե շշուկը, հողմին ամենէն տկար ձայնը իւր ոշակրոթիւնը կը հրատիրէր և ճակատը քրտինքով կը ոյատէր : Այն ասեն սարտալով իւր սանդուիրը կը շիտիրէր և ժամանակ չկորնցընելու համար իւր ոտքը անոր առաջին աստիճանին վրայ կը դնէր :

Մերթ վախճալով և մերթ յուսալով, և որտին մերթ սփոփութեան և մերթ անձկոթեան միջոցին եկեղեցւոյն ժամացյոյցը տասը հնչեց :

— Ո՛չ, մրմնաց Մաքսիմիլիէն սոսկումնվ, անկարելի է որ դաշնագրի մը ստորագրութիւնը այսչափ երկար տեսէ, միայն թէ անմանկալ դիպուած մը չպատահի : Բոլոր զործողութեանց և որաբոլութեանց տեսած միջոցը հաշիւ ընելով, անշուշտ բան մը պատահած է անոր — :

Այն ասեն մերթ յուղմամբ վանդակներուն առջին կ'երթեեիրէր, և մերթ իւր հրատապ ճակատը անմոց կը թընած կը կենար :

Արդեօք Վալանթին դաշնադրէն ետե նուաղեցաւ թէ փախէլու ժամանակ բռնուեցաւ :

Այս երկու յուսահատեցուցիչ հաւանականութիւնները երիտասարդին մեծ անհամութիւնն կը պատճառէին :

Բայց ամենէն աւելի իրեն երկիւղ պատճառողը այն էր թէ արդեօք Վալանթին փախէլու ժամանակ իւր ոյժը կորմնցընելով ծառուղոյ մը մէջ նուաղեալ ինկաւ :

— Ո՛չ, եթէ այնոքէս է, դոչեց երիտասարդը սահնդուխին վրայ ելնելով, ուրեմն անմտութեամբ սկսի կորմնցընեմ զան — :

Եւ իւր այս կարծիքին վրայ անփոփոխ մնաց այնպիսի հաստատամտութեամբ մը, որ շատ անգամ տարակոյսը համոզման կը փոխէ :

Մթութեան մէջ իւր նայուածքը թուփանցել ջանալով կը հարձէր թէ մով ծառաւրոյն մէջ դետինը առարկայ մը կը տեսնէ :

Մորէլ մինչեւ մայն տալու համարձակեցաւ, և իրեն այնպէս երեցաւ թէ հողմը վշազբն հեծութեան մը հեռաւոր ձայնը մինչեւ իրեն կը բերէր :

Աերջապէս ժամացոցը կէս դարկաւ :

Անկարելի էր որ աւելի երկար ժամանակ համրերէր . ամեն բան հաւանական էր :

Մարսիմիլիէնի քոնքը ուժգնութեամբ կը բարախէր . սրոնքը պատին վրայէն անցոց և միւս կողմը ցատկեց :

Աիլլֆօրի պարաւէջը իջնելով սկսաւ մասածէլ թէ իւր այսպիսի որոճին հետևութիւնը կրնար ծանր ըլլալ, քանզի սանդուղով հանիչը էր . սակայն անշուշտ ետ դառնալու համար չէր որ մինչեւ հան եկիր էր :

Քանի մը վայրինան պատին քովերը շրջագայելէն ետեւ մէկ ուստինութ ծառուրոյն մէջէն անցնելով, խիս ծառոց քովը հասաւ, որիից ստունը մօտէն կը տեսնուէր :

Սրգէն վանդակներուն առջել ծառերուն մէջէն դիսած ժամանակ ըրած կարծիքը ստուդուեր էր . ամեն պատուհանները լուսառուած ըլլալու տեղ, ինչպէս որ հանդիսաւոր օրեր սովորաբար կ'ըլլայ, միայն տան մոխրագոյն պատը տեսաւ, որտն վրայ լուսինը սովորող թանձր ամսով մը ստուերի մեծ վարագոյր մը ափուեր էր :

Միայն առաջին դստիկոնի երեք պատուհաններուն առջելէն ժամանակ առ ժամանակ դրագ մը մոլիք հորի պէս վազելով կ'անցնէր :

Այս երեք պատուհանները արկինն ող Աէն-Աէրանի սենելինն էին :

Ուրիշ լոյս մը կարմիր վարագոյրներու ետին անշարժ կեցեր էր :

Այս կարմիր վարագոյրները արկինն ող Աիլլֆօրի ննջարանինն էր :

Մորէլ զուշակելով ամեն բան դտեր էր + օրուան ժամերուն մէջ

այնչափ անդամ՝ Վաղանթինի վրայ կը մոտածէր, այնչափ անդամ, ի՞րսենք, ոյս տան յատակաղիծը իւր մաօքը կը ծրագրէր, որ առանց տեսնելու ունեալներուն դիբը կը հանջնար :

Երիտասարդը տան մէջ տիրած միժութենէն և լոռութենէն աւելի շատ վախցեր էր քան թէ Վաղանթինի բացակայութենէն :

Բոլորովին այլայլած, անչանդտառութենէ խենթեցած և Վաղանթինը տեսնելու ու անոր զլուիը ինչ դժբաղդութիւն եկած ըլլար ստուգելու համար ամեն բան աշքը առած՝ Մորէլ խիս ծառերուն մէջէն գորս ելաւ և կը պատրաստուէր կարելի եղածին չափ արագութեամբ ծաղկոցին մէջէն անցնել, երբ ձայն մը լսեց, որ թէ եւ տակտին բաւական հեռու էր, բայց հոգը մինչեւ իրեն կը թերեր զայն :

Ասոր վրայ քայլ մը եւս քաշուեցաւ :

Արգէն ծառերուն տակէն կէս մը զորս ելեր էր, բայց ձայնը լուս լով բոլորովին նորս քաշուեցաւ և միժութեան մէջ անշարժ ու անձայն իկցաւ :

Մորէլ իւր բնելիքը որոշեր էր :

Եթէ եկողը Վաղանթինին էր, անցնելու ատեն ձայն մը հանելով պիտի իմացընէր անոր, եթէ հետը մէկը ըլլար, զոնէ զան տեսնելով, սիրոը պիտի հանդարակէր և պիտի ստուգէր որ Վաղանթինի զլուխը ամեներն դժբաղդութիւն մը եկած չէ. եթէ օսաւարականներ ըլլացին, անոնց խօսակցութիւնը պիտի լսէր, և մինչեւ այն վայրիկանը իրեն անչափանալի եղած այն դադանիքին պատճառը պիտի հասկընար :

Այս միջոցին լուսինը ամսին տակէն ելնելով, Մորէլ՝ սահմանին դրան սաշե մե զգեսաներով մարդը չորս քայլ չառած՝ Մորէլ հանչցեր էր զան որ ա՛ւլվըննեի բժիշկն էր :

Երիտասարդը անոնց իւր կողմը դալը տեսնելով, մեքենապէս իսու քաշուեցաւ, և ժանատաթղէնիի մը բռնին ետին տպաստանեցաւ :

Ըստ չանցաւ. շրջողներուն սահաձայնը դադրեցաւ :

— ԱՇ. պարոն բժիշկ, ըստ թաղաւորի գործակալը, սառչին. Աստուած յայտնապէս մեր տանը դէմ բարկացած սիհակ ըլլայ : Այս ինչ սոսկալի մահ է. այս ինչ կոյցակի հարուած մ'է : Զիս ափոփելու մի ջանար, պարոն, ափօսո, այսպիսի գոյք բազդութեան մը համար մինիմարտութիւն չկայ, վէրբը խիստ աղջու. և խորունի է : Անուան, պարոն, մեռան : — :

Պար քրամնկ մը երիտասարդին ճակատը ստուցուց, և ակռաները սկսան կափկափել : Արդեօք ովկ եր Վիլլֆօրի տան մէջ մեռնողը, որուն համար ինքը իւր բերնովը անփծեալ տուն կըսէր :

— Սիրելիդ իմ Պ. Վիլլֆօր, սրատախանեց բժիշկը այնպիսի ձայնալ մը, որ երիտասարդին երկիւղը կրկնալատկեց. զնեղ մինիմարելու համար չըերի ևս հոս, այլ ընդ հակառակն ուրիշ դոյժ մը տալու :

— Ի՞նչ ըսել կ'առգէք, հարցոց թաղաւորի գործակալը սարսափած :

— Ըսէլ կուղեմ թէ պատահած այս գոյքազդութեան տակ ուրիշ գոյքազդութիւն մը կայ, որ զոյցէ աւելի մեծ ըլլայ :

— Ո՞վ Աստուած իմ, մըմիշեց Վիլլֆօր ձեռքերը միացընելով, ինչ կայ ուրիշ :

— Բոլորովին ստանձին ենք, բարեկամ :

— Այո, բայց այդ զգուշութիւնները ի՞նչ կը նշանակին :

— Մաերմական ազգաբարութիւն մը ունիմ ձեզ ընելու, ըստ բժիշկը . նստինք — :

Վիլլֆօր նստարանի մը վրայ թուլութեամբ նստաւ :

Բժիշկը մէկ ձեռքը անոր ուսին վրայ դրած առջել կանգնեցաւ :

Մորէլ սոսկումէն սառելով, մէկ ձեռքովը ճակատը բռներ էր և միւս ձեռքովը սիրաը կը սեղմէր, որուն բարախաւմը կը վախնար որ չլսուի :

— Ո՞վ մեռաւ արդեօք — , կըսէր ինքնիրեն երիտասարդը բոլորովին այլայլելով :

— Խօսեցէք, պարոն բժիշկ, մափկ կ'ընեմ ձեզ, ըստ Վիլլֆօր, պատմիցէք և ևս ամեն բանի համար պատրաստած և յա :

— Յիրաւի ամեկին ուշ ԱԷն-Մէրան խիստ պառաւցած էր, բայց խիստ առողջ կին մ'էր — :

Մորէլ առողջ վայրկեանէ՝ 'ի վեր հիմա սկսաւ շունչ առնուլ =

— Տրամալ թենէն մեռու, պարոն, քառ Ա.իլլիօր, այս, իւր տրամալ թենէն մեռաւ: Քառասան տարի մարգեղին հետ երջանիլ կետնք մը վարելավ. . . :

— Աչ, պարոն, տրամալ թենէն չմեռաւ: Տիրութենէ մարդ կրնայ մառնիլ, թէ և շատ քիչ անդամ՝ կը պատահի, բայց օրուան մը, ժամանան մը և տառը վայրկենի մեջ չմեռնիր — :

Ա.իլլիօր պատասխան շտուռ. զլոտիր վերցոց, զոր մինչեւ այն վայրկեանը կախած էր, և առուշ նայուածքով անոր նայեցաւ:

— Հոդեվարքին ժամանակ հռն էիր, հարցոց ա'Ավրինեի:

— Այս, պատասխանեց թացաւ որի դործակալը. կամաց մը ինձ ըսիր որ շնոր անամ՝ անկէ:

— Տիկին ար ԱԷն-Մէրանի հիւանդութեան նշանները դիմեցիր:

— Անցաւ ամիկին ար ԱԷն-Մէրան իրարմէ՝ քանի մը վայրկեան միջոցով երեք ճգնաժամ ունեցաւ: ամեն անդամ աւելի սաստիանաւ լու: Չեր հասած ժամանակը՝ արդէն քանի մը վայրկենէ՝ 'ի վեր ոգեսպառ մասցեր էր. իւր առաջին ճգնաժամը պարզ ջղահարութիւն մը կարծեցի, բայց սկսեր էի իրօք վախնալ երբ անսայ որ իւր անկորդնեցն մեջ ելու նստաւ անդամները և զլոտիր ձգտած:

Այս առեն ձեր երեսը նայելով հասկըցայ որ անոր վիճակը կարծած էս աւելի ծանր է: Առաջին ճգնաժամը անցնելով՝ ձեր երեսը նայեցայ, բայց դուք անոր ձեռքը բռնած էիր, երակաց բարախումը կը համբեկի, և մինչեւ երկրորդ ճգնաժամին սկսելը երեսնիդ անոր դարձուցած էիր: Երկրորդ ճգնաժամը առաջինն աւելի սուլակի եղաւ. Ջղերան նոյն շարժումները տեղի ունեցան, բերանը կարկանցաւ և մանիշակադոյն եղաւ: Երբարդ ճգնաժամին մեռաւ: Արդէն առաջին ճգնաժամին վերջերը ջիղերու կարկամութիւն մը դիտեր էի, և դուք իմ կարծիքս հաստատեցիք:

— Այս, ամենուն առաջին կրկնեց բժիշկը, բայց հիմա մինակ էիր:

— Ե՞ն ոյլամի ըսէք, ոչ Սոստուած իմ:

— Ըսել կ'աղեմ թէ ջիզիքու կարկամութեան և թունաւորուածին նշանները բոլորովին մի և նոյն են — :

Պ. առ Ափլրֆօր ելու կանգնեցաւ, և վայրկեան մը տնշարժ և լուս կենալըն եւսկ՝ իւր նստարանին վրայ վերստին ինկաւ:

— Ո՛չ, պարսն բժիշկ, ըստ, աղեկ մասած եցէք թէ ինչ կ'ըսէք ինձ — :

Մորէլ չէր պիտեր թէ երանգ կը տեմնէր թէ արթուն էր:

— Մտիկ ըրէր, ըստ բժիշկը, ըստծ յայտարարութեանս կարեւորութիւնը և ձեր բժունը լաւ կը հանչնամ:

— Երբ դատառո՞ր մասիկ լնեմ թէ իրր բարեկամ, հարցոց Ափլրֆօր:

— Երբ բարեկամ, այս վայրկենիս ձեր հետք բարեկամօրէն կ'ուղիմ խօսիլ. ջլաց կարկամութեան և բուսական հիւթերէ թունաւորուածին նշանները այնշտոփ իրարու կը նմանին, որ եթէ ըստծ տառորդրել հարկ բլլայ, հշմարիտ կ'երկմախիմ: Ասան կը կրկնեմ: Խօսքու դատաստորին չէ այլ բարեկամիս. և բարեկամիս կ'ըսեմ որ երեք քառորդ որ անոր հոգեվարէր տնեց, ու շաղրու թեամբ անոր ձկնածամը + ջղաձգութիւնները և մահը դիաեցի, տեսածիս վրայ այնշտոփ համոզուած եմ որ կրնամ ըսել թէ ամելին առ Աէն-Աէրան ոչ միայն թունաւորնել մեռաւ, այլ ինչ թայնէ մասնիշն անդամ զիտեմ:

— Պարսն, պարսն:

— Ամեն բան յայսնի կը յուցընէ. ջլացին նզնածամերէն ընդմիջնալ խօրունի քնէ ութիւնը, ուղեղիս սաստիկ յուղմանը, զործարանաց թմբրութիւնը բաւարան ապացոյցներ են: Տիկինալ Աէն-Աէրան բևեկնի ցեղու բայսի մը հիւթամը անշուշտ զիսպուածով կամ զայէ սիսալմամբ թունաւորուած է — :

Ափլրֆօր բժշկին ձեռքը բանեց:

— Ո՛չ, անկարելի է, պարսն, ըստ, անկարելի է. արդեւը երազ է անսածս: Ստողիւ կը սոսկամ երբ ձեզի պէս անձի մը բերանէն այսպիսի խօսք մը կը լնեմ. կ'առաջեմ, սիրելի պարսն բժիշկ, յանոն երկնից, ըսէր, միթէ չէք կը լնար սխալիլ:

- Անշուշտ կրնամ՝ սխալիլ, բայց . . . . .
- Բայց, ի՞նչ ըսել կ'ուզէք :
- Բայց չեմ՝ կարծեր :
- Կլժայեք ինձի, սպառն բժիշկ, քանի մը օրէ ՚ի վեր այնչափ անըլուր գժբաղկալիններ կը սպառահին, որ կարծեմ՝ թէ սպիտի խենթենամ :
- Ուրիշ բժիշկ մը տիկին ար Աէն-Մէրանի այցելու միւն ըստ :
- Ամենեին :
- Արդեօք ինձմէ դաղտուկ դեղազիր մը դեղալաճառի տարուեցան :
- Ամենեին :
- Տիկին ար Աէն-Մէրան թշնամիններ ո՞նէ՞ր :
- Չեմ՝ ճանշնար մէկը որ անոր թշնամի ըլլոյ :
- Մէկը անոր մեռնիլը կ'ուզէք :
- Ոչ, ամենին, աղջիկս անոր միակ ժառանգն է : Ո՛չ, Եթէ այսպիսի խորհուրդ մը մտքէս անցնէր, ինքզինքս դաշոյնով կը պահնէի :
- Ո՛չ սիրելի բարեկամ, դոչեց ա՛ւլորիննեի . Աստուած չընէ որ մէկու վրայ ամրաստանութիւն ընեմ, դիուտածի կամ սխալմանքի վրայ է խօսք : Սալայն կ'ուզէ զիսպանած ըլլոյ, կ'ուզէ սխալմանք, զործը ինքնին կամաց ձայնով խղճիս կ'ըսէ, և կ'ըստիորէ զան որ բարձր ձայնով ձեր հետը խօսի : Այս բանիս վրայ տեղեկացէք, սպառն :
- Որմէ՛, ի՞նչպէս, ե ի՞նչ բանի վրայ :
- Արդեօք ուարուա ծերունի ծառան իւր տիրոջը համար սպառաստած ըմզելի զեղ մը սխալմամբ տիկին ար Աէն-Մէրանին տուան :
- Իմ հօրս համար սպառաստած :
- Այս :
- Բայց միթէ կարելի՞ է որ զ. Կուարթիկի համար սպառաստած զեղ մը տիկին ար Աէն-Մէրանը թտնասորէ :
- Ասոր տարակոյս չկայ . զիսէք որ քանի մը հիւանդութեանց

մէջ թոյնը գեղ է . կամուածն ալ այն հիւանդաւ վիւններէն մէ ի՞ն է : ու , Կուարթիեի շարժելու և խօսելու կարողութիւնը վերաբարձրնելու . համար տան միջոց՝ 'ի դործ դնելու և առաջ դրեթէ երեք տափակ՝ 'ի վեր , կը լսեմ , բեկիսի հիւթը կը դործածեմ անոր . վերջին անդամ հրամայած գեղիս մէջ այն հիւթէն վեց հարիւրական դնել տուի . վեց հարիւրականը , (որ կընայ ու , Կուարթիեի կամ թուածաչար դործարանաց աղջնցութիւն չընել , քանզի հետզետակ տատիճանարար նոյն թոյնէն գեղի մէջ տանելով սովորած է անոր ) , բաւական է այն դեղին շսովորող որիշ ար և է մէկուն մահ պատճառել :

— Սիրելիդ իմ ա'ւգրինեի , ու , Կուարթիեի և տիկին ար Աէն -Աէրանի սեննեկաց մէջ ամենն ին հաւորդակցութիւն չկայ , և Պարուան բնաւ զոքանչխս ամեննակը չմաներ : Աէրթապէս , պարոն , կը համարձակիմ ըսել որ թէպէտե զննու խիստ ներհուն և մանաւանդ խիստ երկիւղած մարդ մը կը հանշնամ , թէ ոչէսե ամեն պարզացի մէջ ձեր խոռոք արեւոն լուսին նման ինձ կ'առաջնորդէ , այսու ամենայնիւ , իմ այս համազնան հակառակ՝ «Արդս սիսարկան է » ըստած առակին վրայ կրթընելու ալ ար ունիմ :

— Մտիկ ըրեք , Աէլլրֆօր , ըստ բժիշկը , իմ պաշտօնակիցներէս այնպիսի մէկը կը հանշնամք , որու վրայ իմ վրաս ունեցածնուդ շափ վստահութիւն ունենաք :

— Ինչո՞ւ համար . բաէք . ինչ բանի համար կը հարցընէք :

— Կանչեցէք զան , իմ բոլոր տեսածներս և զիստածներս անոր կը պատմեմ , և ախիլին ար Աէն-Աէրանի մարդինը կը բանանք :

— Այդ կերպով թոյնին հետը կը դանէք :

— Աչ , թոյն չըսի ես , այլ իւր ջիղնը դրդուղ պատճառը կը գննենք , իւր անշնութեան ուրկից յառաջ զալը իսկոյն կը հակընանք և կ'ըսենք ձեզի . Սիրելի Աէլլրֆօր , եթէ այս դժբաղդութիւնը անհազութեամբ պատահած է , ձեր ծտուաներուն վրայ հակեցէք , իսկ եթէ թշնամութեամբ պատահած է , ձեր թշնամուց վրայ հոկեցէք :

— Ո՛չ , Տէր Կատուած , ինչ կ'առաջարկէք ինձ , ու , ա'ւգրինեի ,

սպատասիանեց Ա. իլլիքօր յաղթուելով . այս դաշտնելքը ձեզմէ ու-  
րիշ մ. կը խմենաւուան ովէ՞ն ովէաք է որ քննութիւն մը ըլլայ , և  
տանս մէջ այդ քննութիւնը ընել անկարելի է : Այսու ամենայնին ,  
շարունակեց թափառորի դործակալը սիրու առնելով և անհանգ տառ-  
թեամբ ը չին երեսը նայելով , այսու ամենայնին , եթէ կ'ու զէք ,  
եթէ անշառ շտ կը պահանջէք , ձեր կամքը կը կատարեմ : Երբ  
ովէաք եմ այս դործին ետեն ըլլալ , բնութիւնն ալ այնպէս կը  
պահանջէ : Սակայն , պարոն բժիշկ , կը տեսնէք որ մեր սիրար վիշ-  
տերով լցուած է . այնչափ վիշտերն ետեւ տանս մէջ այնչափ  
դայթակողեցացին քննութիւնն մը ընել տալով կինս և աղջիկս պիտ-  
ուի մեռնին : Գիտէք , պարոն , որ թագաւորի դործակալութիւնը  
նույն առանց թշնամիներ առնենալու չկինար քանի և հինգ տարի  
խր պաշտօնը կատարել . իմ թշնամիներս ալ խիստ բազմաթիւ-  
նն , այս դայթակողեցացին դործը անոնց համար յաղթութիւն մը  
պիտի ըլլայ . անսովու պիտի ուրախանան և ես ամօթով պիտի  
մնամ : “Ներեցէք ինձ , ու . բժիշկ , այս գուեհիկ զաղափարներուա  
համար . եթէ գուք քահանայ մը ըլլայիք , չէի համարձակեր ձեզ  
այս քանս ըսել . բայց գուք մարդ մ'էք , և միւս մարդերը կը  
հանցնաք , ուստի կարծեմ” իրաւունք կու տաք ինձ այս բանիս հա-  
մար :

— Սիրելիդ իմ՝ ու , ար Ա. իլլիքօր , սպատասիանեց բժիշկը զիջանե-  
լով , իմ առաջին պարարս մարդասիրութիւնն է . արիին ար Աէն-  
Մէրանը ի աղաւակի՞ եթէ արտեսաս օգնէր ինձ . բայց ան մնաւ ,  
և ես ովէաք եմ կենուանիներուն բարիք ընելու . ջանալ : Այս մն  
թաղենք այս սոսկուի զաղանիքը մեր սրտին խորութեանցը մէջ , և  
եթէ մէկը խմանայ խակ , պահանձ լուութիւնն անդ ազիտութեանս  
տայ , հոյս սոսկու չինամ : Սակայն , պարոն . անհաղ մի՛ կենաք ,  
միշտ վնասեցէք , և ուշադրութեամբ քննեցէք . կարելի է որ բ-  
նողը այսչափով դոհ ըլլայ . . . : Եւ երբ յանցաւորը զանէք ,  
ես պիտի ըսեմ ձեզ դուք դատաւոր մ'էք , ուզածնիդ ըրէք :

— Ո՞չ , շնորհակալ եմ , շնորհակալ եմ , պարոն բժիշկ , ըստ  
Ա. իլլիքօր անսպատամ ուրախութեամբ մը , ձեզմէ աւելի մտերիմ բա-  
րեկամ մը չունեցայ երբէք — :

Եւ կարծես թէ վասինուլով որ ա՛ւզը բնելի նոյն խնդրոն մը պայտիրագառնայ և իւր խոստման վրայ չդղջայ , ոսք ելաւ և բժիշկան մէ ջ տարաւ :

Անոնք հեռանալուն պէս Մորել դլու իւր իւր որահուած աեզին զուրս հանեց և լուսինը անոր երնոր լուսաւորեց , որ ուրաւականի պէս գեղներ էր :

— Առասւած յայտնի բայց սոսկալի իերուով կը պաշտպանէ զիս , ըստ . բայց Առլանմինս , Առլանմինս , ովսրմի սիրու հիս , արդեօր այնչափ վիշտերուն պիտի կրնայ տոկալ — :

Այս խօսքերը ըսելով փափախակի կարմիր վարագոյրներով պատահանին և սպիտակ վարագոյրներով երեք պատահանիներուն կը նայէր :

Կարմիր վարագոյրներով պատահանին լոյսը դրեթէ բոլորովին մաներն ոյլ եղիք էր :

Անտարձկայ տիկինն որ Այլրաֆօր իւր Տրագը մարեր էր , և միայն դիշերոյին կանճեզը իւր տկար ցոլոցումը ապակիներուն կուտար :

Ընդ հակառակն՝ սպիտակ վարագոյրներով երեք պատահանիներուն մէ կուն բացուիլը անուու :

Առարանին վրայ զետեղուած մամ մը իւր արօս լոյսը դէօջ կուրս կարծակէր և սառեր մը սպատշպամինն մէջ դաշով , արմիւնը վրայ կութընեցու :

### Մորել սորտաց :

Իրեն այնպէս երեցաւ թէ հառաջանը մը կը լու :

Զարմանալի բան էր որ Մորելի պէս այնչափ սներելիք և ուժեղ անձ մը մարդկային ամենն զօրուոր երկու կիրքերէն , այսինքն՝ մէրէն և երկիւղին յուզուելով և շփոթելով , այն ոստիճան ակարացեր էր որ երեւակայական ցնորդներու մէջ ինկեր էր :

Թէ և անկարելի էր որ Առլանմին դիմքը իւր որահուած աեզը տեսնէր , սակայն իրեն այնպէս եկաւ թէ պատահանին սառերը դինքը կը կանչէ :

Իւր յուզեալ և բորբոքեալ սիրու այնպէս էր հատացընէր իւրեն , և այս կարծեաց մէջ այնչափ համոզուած կ'երեւ , որ երի-

տուսարդական թեմե ստունով մը ծառերոն տակեն դուրս ցատակից , և տեսնուելէն , Աւալանթինը վախցրնելէն , և նորատի աղջկան դիմու յանձնարժ տեսած ժամանակ ակամայ հանելու ձայնովը քնացողները արթնցընելէն չփախնալով , երկու քայլով ծաղկացին մէջէն անցաւ , զար լուսինը լճի մը պէս լայն և սպիտակ կ'երեց ցընելու , և տան առջե շարտ ած նարնջինին բռնն արիզներուն քով հասնելով՝ տանդու խին վրային արադութեամբ վեր ելու , և գուռը հույց , որ առանց ընդդիմութեան խկոյն բացուեցաւ :

Աւալանթին պատուհանին առջեր եղած ժամանակ դիմու չփախնակ անը եր . իւր աչքերը դէու ՚ի երկինքը վերցուցած՝ երկնից կատրոյտին վրայ շրջող արծաթադադոյն ամու մը կը դիմաէր , որուն ձեւը երկինքը ելնող ստուերի մը ձևն անէր :

Իւր յուղեալ և վերացեալ մտօքը դայն իւր հանիին հոգին եր կարծէր :

Այսու ամենայնիւ Առել նախառնեակը անյնելով երկրորդ սանեգուին քովը հասեր եր :

Սանդուխին աստիճաններուն վրայ տարածուած օթոցը երիտասարդին սանաձայնը կը խափանէր :

Մորէլ այն աստիճան յուղեալ եր որ ու աը Ակլիլֆօրի ներկոյտ թիւնը անդամ պիտի չփախցրներ դիմու : Եթէ պարսն աը Ակլիլֆօր իւր դիմուցը ելնէր , երիտասարդը իւր ընելիքը որոշեր եր :

Անոր պիտի մօտենար և ամեն բան խռատովանելով պիտի աղջաշէր որ ներէ իրենց և շղմկամի այն սիրոյն , որ զինքը իւր աղջկան հետ և իւր աղջիկը իրեն հետ կը միացընէր :

Մորէլ իւնթեցեր եր :

Բարերարդարար մարդ մը չտեսաւ :

Այն առեն առն ներին յատակադին վրայօք Աւալանթին ստացած աեղեկութիւնը իրեն շատ օգնեց :

Առանց վուանզի սանդուխին վրայ հասաւ , և երբ դէու ՚ի ո՛ր սենեակը երթալուն վրայ կը մտածէր , հեծութեան ձայն մը լսեց , և խկոյն դէու ՚ի ձայնը ելուծ կողմը ողղեցաւ :

Կիսաբաց զրան մը մէջէն լոյօի մը ցուցաց մը և չե ձաւթեան  
ձոյնը դուրս կ'ե լու ին :

Մորէլ այն գուռը հսեց և ներս մտաւ :

Աեւեալը անկողնոյ մը մէջ կը հանգչէր սպիտակ տուանի մը  
տակ, որ բուսովին կը ծածկէր դան և մարմար ձեր կը նկարէր .  
Մորէլ, որ զիսպատածով անոր մահուան դադանիքը իմացէր էր, զան  
այս զիբրին մէջ տեսնելով աւելի սոսից :

Անկողնոյն քովը՝ Ալանթին մեծ թիկնամուի մը զրաց ծնրա-  
դրեալ ու զլուխը ամուին թիկնարարձերուն մէջ և իւր երկու ձեռ-  
քերով ծածկած՝ դոզալով ու հեծելով կ'ողբար :

Թատու հանը բաց թողլով ներս մտեր էր և այնպիսի սրտառուչ  
կերպով բարձրաձայն կ'աղօթէր, որ ամենէն անդպայ սիրաերն ան-  
դամ պիտի շարժէին :

Իւր վիշտերը այնպիսի կիղիւ կապերով իւր կոկորդը կը սեղ-  
մէին, որ բերանէն ելած խօսքիքը իրարու մահամաձայն և դժուա-  
րիմաց էին :

Լուսինը պատու հանի վանդակներուն մէջէն ներս թափանցելով՝  
մոմին լցուը կը ամդունէր և այս թախճալից պատկերը իւր տիրա-  
կան զոներովը կը ներկէր :

Մորէլի սիրաը այս տեսարանին չկրցաւ դիմանալ : Թէ և ինքը  
օրինակ ըլլալու չափ բարեպաշտ և իւր սիրաը այնչափ դիրազզե-  
ցիկ չէր, բայց Ալանթինը տառապանաց և արտառաց մէջ տես-  
նելով, չկրցաւ ինքինքը զսպէլ :

Հառաշանք մը հանեց, անուն մը մրմաց, և Ալանթին իւր  
զլուխը վեցցուց, որ թեամուին թափչէն կհակերու նկարուած ու  
Մաղղաղինէի զլիսուն նման արտառաց մէջ թաթիուած էր, և  
անոր կողմը գարձած մնաց :

Ալանթին Մորէլը տեսաւ և զարմանիք մը չյայտնեց :

Եւաին յուսահատութենէն ուսեցած սրտին մէջ միջնական յուզ-  
մանիք չկրնար ըլլալ :

Մորէլ ձեռ քը իւր սիրուհի այն երկնցուց :

Ալանթին իւր քովը չգուցուն համար զինքը արդարացընելու



Թ.ՄԱՆՈՒԵԼԻ

միակ նոպատակաւ՝ մահագ զյժ սաւանին տակ հանդ շած զիա՛լը ցուցոց անոր և վերսամին սկսաւ հեծելով լալ։

Երիկուքն ալ չէ ին համարձակեր այն սենեկին մէջ խօսելու : Երկուքն ալ կ'երկմտին խզել այն լուսթիւնը , որ կարծես թէ մեռեալը սենեկին մէկ անկիւնը կանդնած և ձեռքը շրթանց վրայ դրած կը հրամացէր :

Վշերժապէս Ալալանթին անորմէ առաջ բերանը բանալու համարձակեցու :

— Քարեկամ , ըստ , ի՞նչպէս հոս եկար : Ափսամ , քեզի բարքի եկար կ'ըսէի , եթէ այս տան դուռը քեզի բացողը մահը չըլւլար :

— Ալալանթին , ըստ . Մորէլ դողգոջուն ձայնիւ և ձեռքերը միացնելով , ժամը ութ ու կէսէն 'ի վեր հոն կ'ըսպասէի . երբ նայեցայ որ չեկար + անհանգստութիւն մը պատեց վիս , պատին վրայէն ցատկեցի , ողարտէ զը իջայ , այն առեն այդ աղէտալի զիսպատճին վրայ խօսելու ձայները լսեցի :

— Ի՞նչ ձայներ — , հարցուց Ալալանթին :

Մորէլ սարսուաց , վասն զի բժշկին և պ . ար Վիլլֆօրի բոլոր խօսակցութիւնը յիշեց : այնպէս կարծէր թէ սառանին տակէն անոր ձգտեալ թեկերը , ողիրկ ողարտանոցը և մանիշակաղոյն շորթերը կը տեսնէ :

— Զեր ծառաներուն ձայներէն ամեն բան խմայայ , ըստ . Մորէլ :

— Մինչեւ հոս դալով կրնայիր մեր կորստեան պատճառ ըլլալ , սիրելիս , ըստ Ալալանթին առանց երկիւղի և բարկոթեան :

— Կերէ ինձ ; պատասխանեց Մորէլ նոյն ձայնին , հիմա կը մեկնիմում :

— Ոչ ; կեցիր + ըստ Ալալանթին , զիմացդ կրնայ մէկը ելնել :

— Բայց եթէ մէկը հոս դայ — :

Կորստի աղջիկը զլուխը շարժեց :

— Մէկը չդար , ըստ . անհոգ եղիր . ահա մեր պաշտպանը — :

Եւ իւր ձեռքնը սառանին տակի դիակը յուցուց :

— Ըսէ ինձ ; կ'աղաշեմ , կրկնեց Մորէլ , ողարտն ա'կրինէն ինչ եղաւ :

— Դաշնադիրը ստիրագընը լու համար պ . Ֆրանզին եկած ժամանակին իւր վերջին շոնչը կ'աւանդէր :

— Ափսոս, ըստու Մորել և ամական ուրախայի զգացմամբ, քանզի իւրովի կը մտածէր թէ այս մահը Վալանթինի ամուսնութիւնը անորոշ կերպով կը յապաղէր :

— Բայց իմ վիշտերս կրկնապատկողը այն է, շարունակեց Վալանթին կարծես Մորելի այն զգացումը պատժելու համար, որ իմ ողորմելի սիրելի հանիս մեռնելու ատեն պատճիրեց որ ամուսնութիւնը կարելի եղածին չափ շտամփ կատարուի : Ով Ասուած իմ, ան ալ զիս պաշտպանել կարծելով ինձ թշնամութիւն կ'ընէր :

— Մտիկ ըրել, ի՞նչ ձայներ են ասոնք — , ըստու Մորել : Երիտասարդները լուս կեցան :

Դրան մը բացուիլը, նրբագալիթին տախտակամածին ճռնչիւնը և սանդուխէն իջնելու ձայներ լսուեցան :

— Հայրս է որ իւր զահը լիձէն դուրս կ'ենէր, ըստու Վալանթին :

— Անշոշտ բժիշկը կը ճամբէր, յաւելցոց Մորել :

— Բժիշկն ըլլալը ուրկից զիտես, հարցոց Վալանթին զարմանքով :

— Այսպէս կը կարծեմ — , ըստու Մորել :

Վալանթին երիտասարդին երեսը նայեցաւ :

Այն միջոցին փողոցին դրան դոցուիլը լսեցին :

«Ա, աը Վիլլֆօր պարտիզին գուռն ալ բանկիքելէն ետեւ՝ սահմանախէն վեր ելաւ :

» Նախասենելին մը զ մանելով՝ վայրկեան մը կանգ առառ մտածելով թէ իւր սենեակը դառնայ եթէ տիկին աը Սէն-Մէրանի սենեակն երթայ :

Մորել վարադոյրի մը ետին պահուեցաւ :

Իսկ Վալանթին անզէն շշարժեցաւ . իւր յետին ախրութիւնը կարծես սովորական երկիւզները բանի տեղ չեր դներ :

«Ա, աը Վիլլֆօր իւր սենեակը դաբձաւ :

— Հիմա, ըստու Վալանթին, ոչ պարտիզին դռնէն կընաւ դուրս ելնել և ոչ փողոցին — :

Մորել զարմանքով նորատի աղջկան երեսը նայեցաւ :

- Հիմա, ըստ Վալանթին, զտրս ելնելու միայն մէկ ներքին և առաջնով համբայ կոյ, այն է՝ համաստենքն — :
- Վալանթին այս խօսքը ըսելով ուստ ելաւ :
- Եկու, ըստ անոր :
- Ուր, հարցոց Մաքսիմիլին :
- Համար սենեակը :
- Պ. Կուարթիկը սենեակը դամ :
- Այս :
- Աղեկ մտածեցիր ; Վալանթին :
- Աղեկ մտածեցիր և երկար ժամանակէ իր վկր : Աշխարհի գոյա անորմէ դատ բարեկամ չունիմ, և երկոքնիս այ անոր պէտք տնինք . . . : Եկու :
- Աղեկ մտածէ, Վալանթին, ըստ Մորել նորատի աղջիան հրամայածը կատարելու երկմոռութիւն ցուցնելով, մինչև հսկ դալս անմոտութիւն մ'էր որ ըրի . բայց հիմա աղեկ կը զգամ բարձս, աշաց պատահը հանցի . և դան այդ բանը ինձ հրամայելու համար աղեկ մտածած ես, սիրելի իմ Վալանթին :
- Այս, ըստ Վալանթին, միայն հանիստ մեռեալ մարմինից առանձին ձգելուս համար խիզէ կը ընեմ, որոն քավը մնալու համար յանձնառու եղած եմ :
- Վալանթին, ըստ Մորել, մահը ինքնին նորատի աղջիկան է :
- Այս, սրատասխանեց նորատի աղջիկը, սակայն երկար չտես եմ, եկու — :
- Վալանթին նրբազաւիթէ մը անցնելով Կուարթիկի սենեակը տանող փոքր սանդուխէ մը վար իջաւ :
- Մորել ուսից ծայրերուն վրայ քալելով անոր ետևէն կ'երթար :
- Երբ զրան առջնը հասան, ծերտնի ծառային հանգիպեշյան :
- Պարուա, ըստ Վալանթին ; դուռը դոցէ ; և մի թողոք մարդ ներս մանկ — :
- Եւ առաջ ինքը ներս մտաւ :
- Կուարթիթէ տակաւին իւր թեաթրուն վրայ նուտած էր : ամեն թեթե շշուկին ուշ դնելով, և բոլոր պատահածները ծերտւ նի ծառային իմանալով : իւր անցակ նայուածքը դբնն վրայ յահին էր :

Աւալանթինը տեսնելով իւր աչքը փայլեցաւ :

Կորատի աղջկան ընթացքին և դիմաց վրայ այնպիսի սովորականէ դուրս բան մը կար որ կաթուածահարը զարմացոց :

Ուստի ծերունուցն աչքը , որ 'ի սկզբան կը փայլէր , անոր այս ընթացքը տեսնելով սկսաւ հարցընելու շարժումներ ընել :

— Սիրելի հասս , ըստ ցած ձայնով , աղէկ մտիկ ըրէ ինձի . դիտես որ Սէն-Մէրան հանիս ժամ մը կայ որ մեռաւ , և Հիմա աշխարհի վրայ քեզմէ զատ մէկը չունիմ՝ որ զիս սիրէ : —

Ծերունուցն աչցաց մէջ անսահման դորովանաց զգացում մը տեսնուեցաւ :

— Ուրեմն իմ վիշտերս ու յոյսերս քեզի յայտնել պէտք եմ , ոյնտիւ չէ : —

Կաթուածահարը նշան ըրաւ թէ այս :

Վալանթին Մաքսիմիլիենի ձեռքը բռնեց :

— Ուրեմն , ըստ անոր , անս այս պարոնը : —

Ծերունին իւր հետազօտիչ և սակաւ ինչ զարմացեալ նայածածքը Մորէլի վրայ յարեց :

— Պ. Մաքսիմիլիեն Մորէլն է , ըստ աղջիկը , Մաքսիլիոյ այն պարկեշտ վաճառականին որդին , որուն անունը անտարակոյս լսած ես :

— Այն , ըստ ծերունին :

— Մաքսիմիլիեն իւր հօրը անստդիւտ անունը փառաւորելու վրայ է . քանզի երեսուն տարեկան հասակին մէջ հեծելազօրաց հրամանատար և Պատուց Լէդէոնի պաշտօնատար է : —

Ծերունին նշան ըրաւ թէ կը յիշէ :

— Ուրեմն , սիրելի հասս , ըստ Վալանթին ծերունուցն առաջել ծնկան վրայ դալով և մէկ ձեռքովը Մաքսիմիլիենը ցուցընելով , կիմացընեմ որ ես Մորէլը կը սիրեմ և միայն անոր հետ կ'ողիմ ամուսնանալ : Եթէ զիս ուրիշի հետ ամուսնացընելու տափենն , աւելի աղէկ ունիմ՝ որ զիս սպանեն և կամ ես ինքը զինքս պիտի սպանեմ : —

Կաթուածահարին նայածածքը զանազան մասձութիւններ ունեցաւ կը յայտնէ :

— Ալ, Մաքսիմիլիեն Մորելը կը սիրես դուն, այնպէս չէ, ուս  
ըելի հաս, հարցուց նորասի աղջկիը :

— Այո, ըստ անշարժ ծերունին :

— Աւրեմն մնաք որ քու զատակներդ ենք, կրնան հօրս կամացը  
դէմ պաշտպանել զմեզ — :

Նուարթիէ իւր համեմարալի նայուածքը Մորելի վրայ յարեց,  
որպէս թէ ըսել ուղէր. Կը մտածենք :

Մաքսիմիլիեն հասկըցաւ :

— Օքինոդ, ըստ, դուն նուիրական պարտք մը ունիս համիկիդ  
ունեակը կատարելու. կը ներեն ինձ որ քիչ մը պարոն Նուար-  
թիէի հետ խօսելու պատին ունենամ :

— Այո, այո — , ըստ ծերունոյն աչքը :

Եաբը անհանդ ստութեամբ Վալանթինի երեսը նայեցաւ :

— Ըսել կ'ուզես թէ քու միաքդ ինչպէս սիրափ հասկընայ, այն-  
պէս չէ, սիրելի հաս :

— Այո :

— Ա՛չ, անհոգ եղիք . այնչափ անզամ քու միաքդ խօսե-  
ցած ենք, որ քեզի հետ ինչ կերպով խօսիլս դիտե — :

Եաբը սիրալիր մայիսով Մաքսիմիլիենի դառնալով, թէե այն  
ժպիտին տակը խորին տիրութիւն մը տիրած էր,

— Բոլոր զիտցածներս ան ալ դիտե — , ըստ :

Վալանթին ոտք ելաւ, Մորելի աթոռ մը ներկայացուց և Պա-  
րուային պատուիքեց որ մարդ չթողու որ ներս մանէ և խանդա-  
դատանօք իւր հաւը համբուրելէն ու Մորելի տիրագին ողջոյն մը  
տալէն ետև մեխնցաւ :

Այն ատեն Մորել Նուարթիէին ցուցընելու համար թէ Վա-  
լանթինի մտերմութիւնը ստացած է և իրենց բոլոր զաղանիքը կը  
ճանչնայ, բառարանը, դրիւը և թուղթը առաւ ու սեղանի մը  
վրայ դրաւ :

— Բայց նախ ներեցէք ինձ, պարոն, ըստ Մորել, որ իմ նվ-  
ըլլալս, ինչպէս օքիորդ Վալանթինը սիրելս և ինչ դիտաւու-  
րութիւն ունենալս պատմեմ ձեզ :

— Մտիկ կ'ընեմ — , ըստ Նուարթիէ :

Բաւական պատկառելի տեսարան մը կը ներկայէք այս ծերուանին, որ թէ սպէտ ըստ երևոթից անօդուա քեռ մ'էք, բայց երեւ կու ծաղկահաս, զեղեցիկ, ուժեղ և առոյդ սիրահարաց միակ պաշտպանը, միակ նեցուկը և միակ դատաւորն եղեք էք :

Իւր գէմքը, որ ավնուութեան և անաչառութեան նշանառոր դրոշմբն տնելք, Մորէլի պատկառանք մը տուեք էք, որ գողացով իւր պատմութիւնը սկսաւ :

Այն առեն երիտասարդը պատմեց անոր թէ ինչպէս Վալանթինը Ճանչեք և ինչպէս զան սիրեք էք. ինչպէս Վալանթին իւր առանձնութեանը և գժրազդութեանը մէջ Մորէլի անձնութիւնը տեսան առաջարկութիւնը լնդունեք էք :

Երիտասարդը իւր ճննդեան, վիճակին և հարսառութեամբ վրայ ալ խօսեցաւ. և քանի մը անդամ երբ կաթուածահարին միտքը հասկընալու համար անոր երեսը կը նայէք, ծերունին իւր նայուածքով իրեն կը պատասխանէք :

— Շատ աղէկ, շարունակէ :

— Հիմա, ըստու Մորէլ երբ իւր պատմութեան առաջին մասը վերջացուց, հիմա որ իմ սէրս և ակնկալութիւններս ձեզի պատմեցի, կողէք որ դիտառութիւններս ալ իմացընեմ :

— Այս, ըստ ծերունին :

— Մեր որոշումը այս էք — :

Եւ այն առեն ամեն բան Կուարթիկին պատմեց, թէ ինչպէս պարտիզակին մէջ կառք մը կ'ըսպասէք, ինչպէս Վալանթինը ովհափ առնար իւր քրոջը տունը տանեք, անոր հետ պիտի ամուսնանար, և մինչև ու. առ Ակրտֆօրի ներողութիւնը լնդունելնին պիտի սպասէ ին :

— Ոչ, ըստ Կուարթիկէ :

— Ոչ կ'ըսէք, կրկնեց Մորէլ, ողէտք չե՞նք այսպէս ընել :

— Ոչ :

— Աւրեմն մը որոշման հառանութիւն չունիք :

— Ոչ :

— Աւրեմն ուրիշ միջոց մը կայ — , ըստ Մորէլ :

Ծերունայն հետազտիչ նայուածքը հարցուց :

— Ո՞րն է :

— Կ'երթամ ո՛ւ կ'իբնէն կը զանեմ, շարտնակեց Մաքսիմիլին։ (որախ եմ որ Վալյանինի բայցակայտը եւեան ժամանակ կարող եղայ այս բահա ձեզ ըսելու, ) և այնուես կը վարուիմ անոր հետ, որով պիտի պարտաւորի պատուառոր մարդու մը ընթացքը բանելու — :

“Առարթիւ ի նայուածքը կը հարցընէ ը :

— Ըսել կ'ազգէք թէ ինչ պիտի ընեմ, կրինեց երիտասարդը :

— Այս :

— Ինչպէս որ ըսի՝ պիտի երթամ զանեմ զինքը, օրիորդ Վալյանինի հետ ունեցած մեր սէ ըլ պիտի պատմեմ անոր. եթէ աղնուասիրտ մէ ին է, իւր նշանածն հրաժարելով իւր աղնուաս թիւնը պիտի յայսնէ, և այն ժաման ցմահ անոր անձնուելը բարեկամը պիտի ըլլամ. բայց եթէ կամ շահասիրութիւնէ և կամ ծաղրելի հորարատ թիւնէ զրդեալ մերժէ և դէմ կենայ ինձ, փորձով անոր ցուցնելէ ու ետև թէ Վալյանին զիս կը սիրէ ու ինձմէտրիշ մէկու հետ չուզեր ամեռսնանալ, անոր հետ պիտի մենամարտին զինուց ընտրութիւնն ալ անոր թողով, և պիտի սպանանեմ զան և կամ ինքը զիս պիտի սպաննէ. եթէ ես սպաննեմ, Վալյանինի հետ պիտի չամռսնանայ, իսկ եթէ ան զիս սպաննէ, ապահով եմ որ Վալյանին անոր հետ չամռսնանար — :

“Առարթիւ անպատճեմ ուրախութեամբ Մորէլի աղնիւ և անկեղծ զէմքը կը զիտէր, որուն վրայ իւր լեզուին յայտնած զդացումները կը նկարուէին, և որուն զեղեցկութիւնը ըսած խօսքերուն հաստատութիւնն ու ճշմարտութիւնը կ'աւելցընէ ը :

Սակայն երբ Մորէլ իւր խօսքը վերջացուց, “Առարթիւ քանի մը անզամ աչքը դոցեց, որ ինչպէս արդէն դիտենք ոչ ըսելու եղանակն է ը :

— Ո՞չ կ'ըսէք, ըսաւ Մորէլ. ուրեմն այս երկրորդ խօրհութագին ալ չէք հաւանիր, ինչպէս որ առաջինը արդէն մերժեցիք :

— Այս, չեմ հաւանիր, ըսաւ ծերը :

— Ուրեմն ինչ ընենք, պարոն, հարցուց ծերը : Տիկին ոք Աէն-Մէրանի վերջին խօսքերը ոյնոքէս են որ ամսունութիւնը չուա-

պաղեն . այս դիմուլով դործերը իրենց ընթացքին թողահմ— :  
Կոտաբերէ անշարժ կեցաւ :

— Այս , կը հառկընամ , ըստ Մորէլ , ըսել կ'ուզէք թէ ովէտք  
եմ սպասել :

— Այս :

— Բայց ո՞չափ յապաղենք , այնչափ պիտի կորսնցընենք , պար-  
բան , կրկնեց երիտասարդը : Վալանթին առանձին ըլլալով ոյժ  
չտնի , և մանկան ովէս պիտի բռնազամեն զննքը : Այս տան մէջ  
որատահածները տեսնելու համար հրաշքով ներս մանելով ու ձեր  
առջեւը ներկայանալով , շեմ կընար իրաւամբ յուսալ որ այս բա-  
րեպատեհ առիթները ուրիշ անդամ պատահին : Հաւատայեք  
ինձ , մեզի առաջարկած երկու միջոցներէս մէկը կայ միայն առ-  
ջևնիս , որով կընանք օդուտ քաղել . ներեցէք երիտասարդութեանն  
մնափառութեանը : Ըսէք միայն . այս երկուքն որը նախամնար  
կ'ընտրեք . կը հրամայեք որ օրինորդ Վալանթինը առնում փախ-  
չչի :

— Ոչ :

— Կ'ուզէք որ ու , մ'էրինէն երթամ գանեմ :

— Ոչ :

— Բայց , ով Աստոած իմ , որու միջոցաւ պիտի հանիի մեղ  
այն օգնութիւնը որ երկինքն կ'ըսողանենք — :

«Երրունին իւր աչօքը Ժատեցաւ , ինչպէս որ ամեն անդամ երկ-  
նից խօսքը եղած ժամանակ ժպտելու սովորութիւն ունէք : Անապ-  
տուածութեան դաղափարը միշտ մնացած էր քիչ մը հին Ժադո-  
պէնին որսին մէջ :

— Բազզին միջոցաւ , կրկնեց Մորէլ :

— Ոչ :

— 2եր միջոցաւ :

— Այս :

— 2եր միջոցաւ կ'ըսէք :

— Այս , կրկնեց ձերանին :

— Ըրած հարցումն աղէկ կը հառկընամ , պարն : Կերեցէք  
կրկնելուս , ըստ որում իմ կեանքս ձեր պատասխանէն կախեալ  
է . մեր աղատութիւնը ձեր կողմէն ողիտի ըլլայ :

— Այս :

— Ապահնված էք :

— Այս :

— Վերաշխառութեալ :

— Այս — :

Կաթուածահարին նայուածքին մէջ ոյնազիսի հաստատառ թիւն մը կար, որ եթէ ոչ ոժին, ցանէ անոր կամնայը դրայ տարակուածիլ անկարելի էք :

— Ո՛չ, չնորհակալ եմ, պարան, հարիւր անգամ չնորհակալ եմ։ Բայց բնչպէս պիտի կրնաք այն ամուսնութեան դէմ դնել։ դուք որ ձեր թեսաթուին մէջ շղթայեալ, համբ եւ անշարժ էք, միայն թէ Առաւածոյ մէկ հրաշքովը ձեր լեզոն բացուի, ու շարժիլ կարենաք — ։

«Երեսնեայն երեսը ժպիառվ մը փայլեցան, անշարժ երեսի վրայ այս ժպիառ աշայ ժպիառէն առելի զարմանալի էք։

— Ուրեմն սպասէլ պէտք եմ, հարցոյց երիտասարդը։

— Այս :

— Բայց ամենամութեան գաշնազիրը պիտի ստորապրեն — ։

Կատարթիկ նոյն ժպիառվ ժպաեցան ։

— Ըստ կ'ու զէք թէ պիտի չստորապրեն ։

— Այս, ըստ նուարթիկ ։

— Ուրեմն գաշնազիրը պիտի չստորապրեն կ'ըսէք, այնպէս չէ, զուեց Մորէլ։ Ո՛չ, ներեցէք, պարան, երբ մեծ երջանկուալեան մը լուրը կ'ընդունի մարդ, ներելի է անշուշտ որ տարած կոսի։ Ուրեմն գաշնազիրը պիտի չստորապրացի։

— Ոչ —, ըստ կաթուածահարը ։

Մորէլ այս ապահովութեան վրայ դարձեալ հաւատալու կ'երկուածիք ։

Անգամալոյթ ծերանւոյ մը այս խոստումը տարօրինակ կ'երեւէք իրեն։ Քանզի կրնար չէ թէ կամքի զօրութենէն, այլ դործարանաց ակարտ թիւնէն յառաջադադայիլ ։

Իւր յիմարտ թիւնը ճամացող անմարին իւր կարողութենէ վեր ըսրծադրութիւն պահանջելը բնական չէ ։

Ասմ՝ երիտասարդին երկմտոթիւնը դիտելուն, և կամ անոր յս ցո ցած հնազանդութեան վրայ վաստահ չըլլութոն՝ Կուարթիէ իւր նայուածքը անոր վրայ յարեց :

— Ե՞նչ կ'աղէք, պարսն, հարցոց Մորել, կ'աղէք որ բան մը չընելու համար ըրած խոստ մն նորոգեմ — :

Կուարթիէ ի նայուածքը յարած և անշարժ մնաց, որպէս թէ ըսել ուղէ թէ խոստումը բաւական չէ : Եսքը նայուածքը անոր ձեռաց վրայ յարեց :

— Կ'աղէք որ երդնում, պարսն, հարցոց Մաքսիմիլիէն :

— Այո, ըստ կաթուածահարը նոյն վաերմութեամբ, կ'ողեմ որ երդնուք — :

Մորել հասկըցաւ որ ծերտանին այն երդման մեծ կարեսութիւն կու տար : Ուստի ձեռքը երկնցոց ։

— Կ'երգնում պատույս վրայ, ըստու, որ պիտի սպասեմ մինչ որ Պ. Փրանզի դէմ ըրած որոշումնիդ ՚ի զործ դնէք :

— Աղէկ, ըսին ծերտանոցն աչքերը :

— Հիմա, պարսն, կը հրամայէք որ մեկնիմ, հարցոց Մորել :

— Այո :

— Առանց օրիորդ Ալանթինը աեմնելու :

— Այո — :

Մորել նշան ըրտու թէ հնազանդելու պատրաստ է :

— Հիմա, շարանակեց Մորել, պիտի ներելք, պարսն, որ ձեր որդին զնեղ համբուրէ, ինչպէս որ ձեր աղջիկը ասկէ քիչ մը առաջ համբուրեց — :

Կուարթիէ ի աչաց նշաններէն կարելի չէ ո սխալիլ :

Երիտասարդը իւր շորթերը ծերտանին ճակատին վրայ յարեց ճիշդ այն տեղը, ուր նորատի աղջկան շորթերը դաշներ էին :

Ետքը երկրորդ անգամ՝ ծերտանին ողջոնելով դորս ելաւ :

Գաւթին մէջ պարտային հանգիսկեցաւ, որ Ալանթինէն պատուիրուած ըլլալով Մորելին կ'ըստառէք, և իրեն ընկերանալով մութ նրբազաւթէ մը անցուց զինքը, որ դէպ ՚ի պարտէզին վրայ բացուող դուռ մը կ'առաջնորդէք :

Մորել դորս ելնելով իսկոյն վանդակներուն քովը հասաւ :

Կաշուարի ծառէն պատին վրայ ելաւ, և սանդուխին վրայէն մանրերկրորդի մը մէջ իւր պարան զը իջաւ, ուր կառքը միշտ իրեն կըսպանէր :

Չուտով կառքը հեծաւ, և իւր կրած յաղմոնքէն յոդիած, թէ և սիրաը առելի ազատ կ'երեէր, դէպ ՚ի կէս զիշերին Մէսլէ փողոցը հասաւ. անկողինը մասաւ և խորունկ արքեցու թեան մէջ եղողի մը սիւ քնացաւ :



### ԳԼՈՒԽԻ ԺԷ

### Ա.Ա.Ք.ՅՈՒ ԸՆԹԱՆԻԱՅ ՇՐԵՎՈՅ

Երկու օր ետքը, առտուան ժամը տասին, Պ. տը Ալիլֆօրի դրան առջել մնձ բաղմոթիւն մը ժողվուերէր, և զլիառորաբար Սէնթ-Օնօրէ արուարձանին և Բէրինիի փողոցին մէջ սզոյ և մասնաւոր անձանց կառքերու շարք մը կը տեմնուէր :

Այս կառքերէն մէ կը միւսներէն տարբեր ձեւ մը ուներ և երակար ճամփորդոթիւն մը ըրած կ'երեէր :

Սեւ ներկուած զայ սայլի մը կը նմանէր, որ յաղարկաւորուածեան հանչիւին ամենէն առաջ համազներէն մէկն էր :

Այս առեն ամեն մարդ խմացաւ որ զարմանալի դիպմամբ մը Սէն-Մէրանի ու . մարքէ զին զիակը այն կառքին մէջ կը զբանուէր , և թէ մէկ յուղարկաւորութեան հանդէսը կատարելու համար եկողները երկու մեռեալներու թաղման սիրտի գանուէին :

